

ՀԱՍՏԻԿ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԲԱՄՊՈՒՔՅԱՆ



2/4wz6.5f4nu J. Shreyer's work
36p5 day 10 w/ 86pms

purple hoopoe ^{dry}
Hawaii 36pms

17.09.2018

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՀԱՍՅԻԿ ԱՏԵՓԱՆՅԱՆ

Հեղինակ՝
**ԳԵՎՈՐԳ ԲԱՄՊՈՒՔՅԱՆ
ԿՅԱՆՔԸ, ԳՈՐԾԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ**

(1923-1996)



Ամսարություն Աշխատանք
ՍԱՏԵԼԻՆՈՎ
178



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
178

Տիկին Աշխատանք

ԵՐԵՎԱՆ - 2018

ՀՏԴ 80:94(479.25)

ԳՄԴ 80+63.3(5Հ)

Ա 887

Գիրքը հրատարակվել է
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
Գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ Արմեն Տեր-Ստեփանյան

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՀԱՍՍԻԿ

Ա 887 Գևորգ Բամպուրճյան. Կյանքը, գործը և ժամանակը (1923-1996) / Հ.Ստեփանյան.- Եր.: Պատմության ինստիտուտ, 2018.- 168 էջ:

Գիրքը նվիրված է պոլսահայ նշանավոր բանասեր, մատենագետ, բարգմանիշ Գևորգ Բամպուրճյանին (Կյանքը, գործը, ժամանակը), նրա գիտական ժառանգության ներկայացմանը։ Նախատեսված է թուրքագետների, արևելագետների և ընթերցող լայն շրջանակների համար։

ՀՏԴ 80:94(479.25)


ԳՄԴ 80+63.3(5Հ)

ISBN 978-9939-860-66-4

© Հասմիկ Ստեփանյան, 2018

Գրքի շապիկին՝

Հովհաննես Այվազովսկի «Տեսարան Ստամբուլից և Բոսֆորը»,
4-րդ էջում՝ Մկրտիչ Զիվանյան «Բոսֆորը»



ԳԵՎՈՐԳ ԲԱՍՊՈՒՔՅԱՆ
(1923-1996)



Այս գիրքը նվիրում եմ լուսանդավոր դաշնակահար, դիրիժոր
Արա Ավագի Պետրոսյանին
մեր ամուսնության 35 ամյակի առթիվ

Սիրով և երախարսագիրությամբ՝

Հեղինակ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Այս գրքույկը մեծ գիտնականի վաստակի ու հիշատակի խնկարկում է, երախտագիտության և խոնարիումի տուրք:

Գիտության այս համեստագույն սպասավորն իր ողջ կյանքում հարազատ մնաց իր արմատներին, իր ուսերին կրելով գիտությանն ազնվորեն ծառայելու առաքելությունը: Փակված իր «խցում», նա հավատացյալ ճգնավորի համառությամբ վեր համեց, ուսումնաիրեց և ընթերցողի սեղանին դրեց մեծ ու փոքր գործեր, որոնք մի ողջ խնաժիտուտի աշխատանք էին ենթադրում:

Օսմանյան կայսրության, արևմտահայության պատմության ավելի բազմակողմանի հունձք ունեցած գիտնական մենք դժվարությամբ կգտնենք:

Գևորգ Բամպուրճյանի առավելություններից էր, որ նա թուրքական, նաև բուրքագիտական շրջանակներում վայելել է անվերապահ վստահություն և հարգանք:

Թուրքական տասնյակ հանրագիտարաններում և գիտական, գիտա-հանրամատչելի մամուլում սինոված թուրքերեն և հայերեն լեզուներով հազարի հասնող հոդվածները նոր որակ են հաղորդել օսմանագիտությանը, Թուրքիայի պատմության, թուրքական մթնոլորտի բազմաթիվ ճերմակ էջեր լրացրել: Ափսոս, որ դրանց որոշակի մասը, տարբեր պատճառներով մինչ օրս մնացել է բամպուրճյանական մատենագիտությունից դուրս: Ափսոս, որ գիտնականի արխիվը մինչ օրս անմատչելի է ուսումնասիրողների համար:

Գ. Բամպուրճյանն այն գիտնականներից է եղել, որոնք իրենց բազմագրադարձ վիճակում ժամանակ են գտել դաստիարակել թուրքագետ-հայագետ աշակերտների մի խումբ (հիմնականում թուրք գիտնականներ), որը մինչ օրս ակնածանքով ու երախտագիտությանը է վերաբերվում իր ուսուցչի ժառանգությանն ու հիշատակին:

Սատենագետի, բարգմանչի, պատմաբանի, բանաստեղծի գործունեության հաջողության գրավականն իր ուսումնասիրություննե-

րում փաստերի լեզուն գերադասելն ու այն որպես հիմնական «գրո-ծիք» նախընտրելն է:

Այս պատճառով է, որ թուրքական զիտական շրջանակները որ-պես երախտագիտության ըլլուստրում, թուրքերն լեզվով, հետմահու լույս ընծայեցին Գևորգ Բամպուրճյանի ուսումնասիրությունների քառահատորյակը:

Գևորգ Բամպուրճյանին հայատանյան ընթերցողին ծանո-քացնելը մեր առաջնային նպատակն է եղել: Նա կարծես թե դուրս է մնացել մեր տեսադաշտից, նույնիսկ զիտական և հանրագիտա-րանային շրջանակներից: Նա նույնիսկ շարժանացավ ՀՀ ԳԱԱ արտասահմանցի անդամի կամ պատվավոր դոկտորի կոչման: Մեր գրքույկը չի հավակնում լինել բամպուրճյանական ժառանգության զիտական ուսումնասիրություն: Այն հանրամատչելի ուղեցույց կիանողիսանա քուրքագետների և հայագետների, մասնավորապես Օսմանյան կայսրության, Արևմտյան Հայատանի պատմությամբ զբաղվողների համար:

Գևորգ Բամպուրճյանի ժամանակի պոլսահայ և ծագումով պոլսեցի մտավորականների զիտական ժառանգության հպանցիկ նկարագրումը մեր կարծիքով հնարավորինս կիաստատի, թե շնոր-հիվ այս հեղինակների, այսօրյա Պոլիսն ու պոլսեցիները մնում են մեր պատմության ուսումնասիրողների հետ նույն բանակում: Իսկ նրանց քուրքերնով և եկրոպական լեզուներով ուսումնասիրու-թյունները շարունակում են որոշակի ներդրում ունենալ Օսմանյան կայսրության պատմության ուսումնասիրության և հայագիտո-թյան զարգացման ասպարեզում¹:

- I Թուրքիայի մասին գրականության (հայերեն և հայատառ քուրքերեն լեզուներով) մեջ ընդունված է օգտագործել Պոլիս քաղաքի տարբեր ժամանակներում, տարբեր ազգերի և ընդհանրապես մի շարք անվանումներ՝ ինչպես Ասիրանե, Տերսասատեր, Կոստանդնուպոլիս, Գուրանքանիյե, Խորանըու և այլն: Մենք նախընտրել ենք քաղաքի երեք անունները միայն օգտագործել՝ բյուզանդական շրջանի մասին խոսելիս՝ Կոստանդնուպոլիս, հայկական նյոյթի մեջ՝ Պոլիս, իսկ քուրքական և այսօրյա շրջանի մասին օգտագործել ենք Ստամբուլ անունը:

ԳԵՎՈՐԳ ԲԱՄՊՈՒՔՅԱՆ ԿՅԱՆՔԸ

**Ասդ հանգչի բանասէր ու պատմաբան Գևորգ Բամպուքյան
որ իր անձէն աւելի ուրիշներուն ծառայեց՝¹**

2018թ. սեպտեմբերին պոլսահայ ականավոր հայագետ, մատենագետ Գևորգ Բամպուքյանը կղաղնար 95 տարեկան: 20 տարի է, որ նա մեզ հետ չեւ:

Գիտնական-մենակյացի քիչ վախսփորած կյանք ապրած այս համեստագույն անձնավորությունն իր ողջ կյանքը նվիրեց հայ մշակույթին ծառայելուն, քուրքական մքնողորտում մեր ազգային արժանապատվությունը պահպանելուն:

Գևորգ Բամպուքյանի անունը և գիտական վաստակը, ցավոր սրտի, այնքան էլ ծանոթ չէ հայաստանյան գիտական շրջանակներին:

Նա երկար տարիներ եղել է Պոլսի պատրիարքարանի մատենադարանի, գրադարանի պատախանատուն, պատմության փոշուց վեր հանել մինչ այդ անհայտ քազմաքիվ և քազմալեզու ձեռնազրեր, վավերագրեր, դրանց մեջ հայտնաբերել գիտության համար արժեքավոր նորություններ: Այդ նյութերի զգալի մասը տարիների ընթացքում Գևորգ Բամպուքյանը հրատարակել է բացառիկ քարեխնությամբ, սակայն, ցավոր, անտիպ են մնացել քազմաքիվ քարձրարժեք ուսումնասիրություններ: Նրա շնորհիվ քուրքական տասնյակ հանրագիտարաններում հայկական նյութը մատուցվել

¹ Շիշլիի հայ մտավորականների գերեզմանոցում Գևորգ Բամպուքյանի տապանաքարի արձանագրությունը:

Է ճշմարտացի, առանց կողմնակալության: Թուրքական գիտահանրամատչելի հայտնի ամսագրերում նրա տպագրած հոդվածներն ուղղակի զարմացնում են: Ինչպէ՞ս է կարողացել այդ առաջին հայացքից համեստագույն գիտնականն այդրան համարձակ հակահարված տալ հակահայ հոդվածներին և հրապարակումներին: Նա տարիներ շարունակ զսպաշապիկի դեր է կատարել թուրքամոլ օտար և բուրք գիտնականների համար: Եվ այս ամենի շնորհիվ ծայրաստիճան հարգված է եղել ոչ միայն հայ, այլև թուրքական գիտական շրջանակներում, ունեցել թուրք աշակերտներ, որոնք տիրապետելով հայերենին, այսօր հայտնի անուններ են թուրք գիտական շրջանակներում և մասսամբ զբաղվում են հայագիտությամբ, հպարտությամբ հիշելով իրենց ուսուցիչն: Բամպուրճյանի գիտական ժառանգությանը լիսավոր արժանիքներից նրա ներդրումը ոչ միայն հայագիտության, այլև թուրքագիտության, ինչու չեն նաև լայն առումով՝ արևելագիտության մեջ: Նրա շնորհիվ թուրքիայի պատմության բազմաթիվ կնճռոտ էջեր են լուսարանվել: Զարմանալի չեն, որ 2002-3 թթ. հետմահու հրատարակվեց նրա գործերի թուրքերն քառահասորյակը¹: Գ. Բամպուրճյանն աշխատակցել է Ստամբուլի մասին ամենակարևոր և ամենահայտնի, **Ռեշադ Էքրեմ Գոչույի** (1905-1975) 11 հատորյա «Ստամբուլ» (Reşad Ekrem Koç, «İstanbul Ansiklopedisi» 1973թ.), Յըլմազ Օգրունայի (1930-2012) «Թուրք երաժշտության» (Yılmaz Öztuna, «Türk Musikisi Ansiklopedisi», 3 հատոր, 1964-76թ. և բարեկայացման 1990թ.), Մուսափա

¹ Զարմահատորյակը հրատարակվել է Ստամբուլի «Արա» հրատարակչության կողմից, Օսման Քյորերի շանքերով: Վերջինս մեր հասարակությանը և արևելագիտական շրջանակներին ծանոր է մայրական կողմից հայկական ծագումով ստամբուլցի կուեկցիոներ Օրլանդո Կառլը Կալումենոյի հայկական թեմաներով օսմանյան բացիկների հավաքածոյի կազմակերպած իր ցուցահանդեսներով ու շրեղ գիրք-աւթոմով: Բարերախտարար նա շարունակում է արևմտահայությանը նվիրված պատմական թեմաներով ցուցահանդեսների կազմակերպումը, իր կարևոր ներդրումն ունենալով հայ-թուրքական մշակութային առնչությունների ներկայացման գործում:

Աքդաղի (1913-1973) և հեղինակային խմբի «Թուրքերեն լեզվի և գրականության» (Mustafa Akdağ ve kollektif. «Türk Dili ve Edebiyatı Ansiklopedisi» 8 h.1998 p.), «Անա Բրիտանիկա» («Ana Britannika Ansiklopedisi» 22h., 1986թ.)¹ «Մշակույթ» («Büyük Kültür Ansiklopedisi» 12h., 1984թ.) և այլ հանրագիտարանների:

«İstanbul Ansiklopedisi»-ում 1950-52թ. և 1958-66թ. շրջանում Գ. Բամպուրճյանի ստորագրությամբ լույս են տեսել շուրջ 300 հոդվածներ ու հայ նշանափոր դեմքերի բազմաթիվ կենսագրականներ: Նա 1993-95թ. շարունակել է համագործակցությունն այս անգամ Մշակույթի նախարարության և «Tarih Vakfı»-ի (Պատմության Փոնդի) հրատարակած 8 հատորյա «İstanbul Ansiklopedisi»-ին²:

Բրիտանական հանրագիտարանի հիմքի վրա հրատարակված «Ana Britannica» բուրքերեն հանրագիտարանում Գ. Բամպուրճյանը հայերին առնչվող շուրջ 130 հոդվածներ է հեղինակել: Իհարկե, որոշ հանրագիտարանների արտոնատերերի կամ գլխափոր խմբագիրների հայկական ծագումը նպաստել է այս նյութերի հրապարակմանը և մոռացության շմատնվելուն: Սինչդեռ ի՞նչ հսկայական կորուստներ են նաև եղել...

Բացի մեկ տասնյակից ավելի բուրքական հանրագիտարան-

-
- 1 Encyclopædia Britannica Micropædia-ի հիմքի վրա բուրքերեն հրատարակություն:
 - 2 Այս փոնդը հիմնադրվել է 1991թ. և ներառում է 264 անդամ, կազմված հիմնականում բաղարագետներից, արվեստի ու գրականության մարդկանցից (մեծ մասսամբ ակադեմիկոսներ): Այն փորձել էր ներդրումն ունենալ Թուրքիայի դեմոկրատիզացիայի գործում, հրատարակել բուրք և հարակից երկրների ժողովուրդների պատմությունը, փորձելով պահպանել հոգևոր ժառանգությունը:

Թուրքական հանրագիտարաններում Բամպուրճյանի հոդվածների մեծագույն մասը անստորագիր են եղել և նյութերն էլ ինչ որ «արխիվ» են ուղարկվել: Այնպես որ, շուրջ 100 հոդվածներ անկարելի է հավելել նրա մատենագիտական ցանկին: Նույն ճակատագրին են արժանացել «Սարմար» և «Ժամանակ» թերթերում տպագրված նրա հոդվածները: Մատենագիտի կենսագիր Կ. Աքրահամյանը մեծագույն ցավով է նշում բանասերի արխիվի մինչ օրս «անձեռնմխենի» վիճակը, հոսարով, որ նրա հարազատները կուղղեն այս բացը:

Աերին աշխատակցելուց, նաև հողվածներ է հրատարակել նաև մի շարք թուրքական մասնագիտական, գիտական պարբերականներում: Դրանց գերակշռող մասն օսմանյան կայսրության կյանքի տարրեր բնագավառներում իրենց ներդրումն ունեցած ժագումով հայ երեկի անձնավորություններին նվիրված փոքրածավալ, մի քանի էջանց հողվածներ են՝ փորագրանկարներով, քարտեզներով ու լուսանկարներով: Արևելագիտության և հատկապես թուրքագիտության համար բացառիկ արժեք են ներկայացնում թուրքական աղբյուրներում չափականված, Թուրքիայի պատմությանը վերաբերվող այն տեղեկությունները, որոնք տեղ են գտել հայ պատմիչների, ժամանակագիրների երկերում և եզակի են իրենց կարևորությամբ ու հավաստիությամբ: Հայկական աղբյուրների թագմանությունները, որոշ դեպքերում ել հայատառ թուրքերների ուղղակի վերածումը լատինատառ թուրքերնի՝ համապատասխան ծանոքագրություններով ու պարզաբանումներով, չափական կարևոր են օսմանյան պատմության համար¹: Դրանք բույլ են տալիս ուսումնասիրողներին նորովի մոտենալ պատմության մինչ այդ չուսարանված կամ անհայտ էջերին, նաև՝ ամենատարբեր ոլորտներում հայերի ունեցած ներդրումներին²:

- Գ. Բամպուրճյանի գործը և նրա ներդրումը թուրքական պատմագիտության և գրականագիտության մեջ շարունակում է հետաքրքրել բուքք գիտնականներին և հանալսարանական շրջանակներին, դառնարկ գիտական թեզերի հյուր: Այսպիսի օրինակներից է Սելիր Սարը Գյուլենի «Kezvork Pamukciyanın Tarihi Perspektivinden Olaylara Bakışı» (Պատմական եղելությունները Գևորգ Բամպուրճյանի պատմագիտական գործերում) մագիստրոսական թեզը:
- Գևորգ Բամպուրճյանի կենսագիրներից է պրոլահայ մտավորական, գիտնականի երկար տարիների բարեկամ, թեյրութանակ գրականագետ, պրոլահայ գրողներին նվիրված երկիասորյակի հեղինակ Կարո Աքրահամյանը: Գ. Բամպուրճյանի կենսագրության և ուսումնասիրությունների նախին տես՝ Կարո Աքրահամեան. «Վաղահաս ու անփոխարինելի կորուս մը՝ Գևորգ Բամպուրճեան (1923-1996)», «Հասկ», Է տարի, Ամբիլիաս, Լիբանան, 1995-96թ., էջ 659-670. Կարո Աքրահամյանը հեղինակ է սփյուռքի տարրեր հայաբերթերում («Մարմարա», «Զարթօնք», «Ժամանակ») Բամպուրճյանի մասին

Գևորգ Բամպուքճյանը ծնվել է Պոլսի Սկյուտար քաղաքասում, 1923թ. փետրվարի 23-ին: Մոր կողմից մեծ հայրը՝ մահտեսի Մարտիրոս Լուսարարյանը (1850-1915) եղել է Կեսարիայում հայտնի ազգային գործիչ և պետական պաշտոնյա: Նա անդամակցել է Կեսարիայի «Սեղլիսի Էղարե»-ին (մեջլիսի ղեկավարությանը), վարել մի շարք ազգային պաշտոններ:

Հայրը՝ Եվերեկցի մահտեսի Միքայել Բամպուքճյանը (1873-1970) Պոլսի էր փոխադրվել 1890թ., զբաղվել կերպասի վաճառականությամբ¹:

Գևորգ Բամպուքճյանը նախնական կրթությունը ստացել է Սկյուտարի «Ներսեսեան-Երմոնեան» նախակրթարանում, ապա մինչև տասերորդ դասարան ուսումը շարունակել Գատըզյուլի «Սեն-Ժոզեֆ» քոլեջում²: Այստեղ նրա ուսուցիչն է եղել հայտնի լրագրող և խմբագիր Շեքրեք Ռադոն (Şefket Rado): Վերջինս 1965թ.

Մի շարք հոդվածների: Նրան է պատկանում բուքրական գիտահանրաժենի «Tarih ve Toplum» ամսագրում (1997թ., հ.165, սեպտեմբեր, էջ 4-6) իր քարեկամ բանասերի հիշատակին տպագրված “Ermeni kültürünün son kaybı Kevork Pamukciyan” (Հայ մշակույթի վերջին կորուսը՝ Գևորգ Բամպուքճյան) հոդվածը: Կ. Արքահանջանին ենք պարտական նաև վերոնշյալ քառահասորյակի առաջին հատորի համար ամսիպ նյութերի մեծ մասի տրամադրումը, երկրորդ հատորի հայատառ բուքրերն իրատարկությունների տիտղոսաբերերերի հայրայրումն ու լուսապատճենային նյութի տրամադրումը, չորրորդ հատորը, որ հայ երևելինների կենսագրականներ են (հայերեն հոդվածների մշակման ծանրությունը նա կիսել է «Ակոս»-ի խմբագիր Ռոբեր Զովիրաչի հետ):

- 1 Գ. Բամպուքճյանը պապին և իր ընտանիքին անդրադարձել է «Rahmetlu dedem Rif’atlı Hacı Mardiros Efendi Lusararyan» հոդվածում, որը տպագրվել է «Tarih ve Toplum» ամսագրում (1991թ. N 85 հունվար, էջ 52-56): «Tarih ve Toplum», N 153, օգոստ, s.46-47; Նրա գերդաստանում եղել են մի քանի հայունի մարդիկ, որոնց և նա անդրադարձել է իր տոհմածառի մասին պատմելու:
- 2 Հոդվածը պատմում է «Սեն-Ժոզեֆ» կոլեջի մուտքաման ուսուցիչների մասին և նվիրված է դասընկերոց՝ Երդեմ Բուրիին (Erdem Burı): «Tarih ve Toplum», 1997, N, 165, s.11-12.

սկսեց հրատարակել “Hayat, Tarih ve Edebiyat Mecmuası”¹ պատմա-քանախրական ամսագիրը, իսկ 1969թ. հրավիրեց իր աշակերտին աշխատելու այս ամսագրի խմբագրությունում, ուր Գ. Բամպուրճյանը մնաց մինչև ամսագրի դադարելը՝ 1982թ.: Այս ամսագրում նա հրատարակել է մի շարք հոդվածներ և քարզմանություններ՝ կատարված հիմնականում հայտառ բորբերնենից:

Գ. Բամպուրճյանն իր աշխատանքային գործունեությունը սկսել է շոգենավային «Դապկովիչ» գործակալությունում, հաշվապահի օգնականի կարգավիճակում (1953-67թթ.): Միաժամանակ, 1953թ. հրավիրվել էր անդամակցելու «Մշակութային հետազոտությունների միության» հիմնադրմանը: 1961թ. իր նասնակցությունն է բերել Թուրքիայի Հայոց Պատրիարքարանի 500-ամյակի հոբելյանական գրական հանձնաժողովի աշխատանքներին:

Գ. Բամպուրճյանը մինչ այդ աշխատակցել էր պոլսահայ հայտնի «Մարմարա» և «Ժամանակ» օրաթերթերին, «Այսօր», «Շառագայթ», «Պայքար» շաբաթաթերթերին, կինոյի, թատրական աշխարհին նվիրված հայտնի «Քուլիս» կիսամսյա պատկերագրու հանդեսին, «Աստղաբերդ» և Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոցի 1949 թվականից մինչ օրս հրատարակվող ամսագրերին, «Երջանիկ» և «Ծողակար» տարեգրերին: Հեղինակել և խմբագրել է Կ.Պոլսի Պատրիարքարանի «Ծողակար» նատենաշարի հուշամատյանները և բացառիկ համարները:

1940 թվականից ի վեր նա հայագիտական, կենսագրական իր հոդվածներով աշխատակցել է սփյուռքահայ և հայաստանյան շուրջ 23 պարբերականների՝ այդ թվում՝ «Հայաստանի կոչնակ», «Լրաբեր» (Բոստոն,Նյու-Յորք), «Ծիրանի գոտի» (Բոստոն), «Այսօր ապագայի» (Փարիզ), «Սիրոն» (Երևանի գոտի) (Բոստոն), «Բազմավեպ» (Վենետիկ, Ս.Ղազար), «Հանդէս Ամսօրեայ» (Վիեննա), «Արմաշ» (Մոնթեալ), ինչպես նաև երևանյան «Բանքեր համալսարանի»,

I 1978թ. ամսագիրն անվանափոխվել է «Hayat, Tarih ve Edebiyat Mecmuası», նոյն տարին էլ անվանվել «Tarih ve Edebiyat Mecmuası».

«Պատմա-քանասիրական հանդես», «Լրաբեր հասարարական գիտությունների», «Էջմիածին» և այլ գիտական, հանրամատչելի պարբերականներին:

Գ. Բանագործյանի գիտական լուրջ պրատումների սկիզբ կարելի է համարել 1940-ական թվականների առաջին տարիները: 1942-56 թթ. հավաքելու հրատարակության է պատրաստել տապանագրային արձանագրությունների մի քանի ժողովածու: Դժվարագույն մի գործ, որն արել է ամենայն հետևողականությամբ և մանրակրկության: Հավաքել է Պոլսի և շրջակա հայկական գերեզմանատների (Ալյուտարի, Բալըրլի, Էղիրնեգափուի) տապանագրերի հայերեն և հայատառ բուրքերն շուրջ 2300 վիմագիր արձանագրություններ: Նա համբերությամբ ու պատասխանատվությամբ ուսումնասիրել և հրատարակության է պատրաստել նաև Պոլսի եկեղեցիների մկրտության ու քաղման մատյանները, կազմել մի շարք եկեղեցիներում գտնվող ձեռագիր մատյանների ձեռագրացուցակները. շնորհիվ որոնց ճշտվել են քազմաքիվ երևելի հայերի կենսագրական տվյալները, որոնց մի պատկառելի մասը նա հրատարակել է հայագիր և բուրքական գիտական պարբերականներում¹:

Պոլսի և սփյուռքահայ պարբերականներում տպագրված հոդվածների շնորհիվ հնարավոր դարձավ Վենետիկի U. Ղազար կղզու Սլիֆքարյան միաբանության հայրերից Եփրեմ Վրու. Պողոսյանի պոլսահայ անվանի գերդաստաններին նվիրված շարքի հրատա-

1 - «Ընդարձակ ցուցակ ձեռագրաց Օռքագիսի Ս. Աստուածածին եկեղեցւոյ», (Խմբագրել է 1968թ., 271 էջ, անտիպ):
- «Ընդարձակ ցուցակ ձեռագրաց Պալատու Ս. Հեղշտակապետ եկեղեցւոյ», (Խմբագրել է 227 էջ, անտիպ).
- «Յովհաննես Կոլոս Պատրիարքի վերաբերեալ վիմագիր արձանագրություններ»,
- «Յովհաննես Յովհաննես Կոլոս Պատրիարքի» («Շողակար Յովհաննեսատեան», թիվ 2, Խարանպու, 1978թ., էջ 20-21).
- «Սատրես Դարի (1741-1827 յունուար 16) դամբարանը երեան ելած», («Հայաստանի Կոշնակ», Բուստոն, 17 սեպտեմբեր 1949, էջ 903-904):
- «Յովհաննես Պատրիարք Զամաշըրճեանի տապանագիրը», («Աստղաբերդ», Ինտրվար-մարտ, 1952թ. էջ 221-223) և այլն:

բակությունը («Գույումնեան եւ Թընկըրեան գերդաստանները» (1951թ.), «Ռսկեան եւ Մըսըրլեան գերդաստանները» (1953թ.), «Ալահիվերտեան գերդաստանը» (1957թ.), «Կէօչէեան գերդաստանը» (1961թ.), «Պիլէզիկմեան գերդաստանը» (1963թ.), «Տատեան գերդաստանը» (2 հատոր, 1968, 1970թթ.):

1976թ. Գ.Բամպուրճյանն ավարտում է Ստամբուլի Տեխնիկական համալսարանի ճարտարապետության և Վերականգնման ֆակուլտետի ճարտարապետության պատմության քաժինը, իսկ 1983թ. ընտրվում է Հոլանդիայի Լեյդեն քաղաքի «Հայկական ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի» անդամ: Նա տիրապետում էր հայերեն, բուրբերեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, ռումիներեն, գերմաներեն լեզուներին, իսկ քարզմանության մակարդակով՝ լատիներենին, իսպաներենին, պորտուգալերենին և հունարենին:

1977թ. Գ.Բամպուրճյանը նշանակվում է Թուրքիո Հայոց Պատրիարքարանի ավագ քարտուղար: 1982թ. կոչվում է հանգստի և շարունակում պաշտոնավայրել որպես «պատվակալ խորհրդական», արխիվի ու մատենադարանի պատասխանատու:

Պոլսո հայոց երջանկահիշատակ պատրիարք Շնորհը արք. Գալուստյանի հրավերով նշանակվում է Պատրիարքարանի դիվանագույն և «Շողակար» կրօնարարոյական, գրական և պատմարանասիրական պաշտոնաքերքի, ապա՝ տարեզքքի գլխավոր խմբագիր, մինչև 1978թ.:

Պատրիարքի հանձնարարությամբ Գ.Բամպուրճյանի վրա է դրվում Պատրիարքարանի հսկայածավալ գրադարանի ու մատենադարանի հոգածությունը, այն կարգի թերելու, դասավորելու հոգածը: Շուրջ երկու տասնամյակ շարունակ զիտնականին հարիր քացառիկ մեղվածան աշխատանքով նա տարիների փոշոց մարդել ու ցուցակագրել, դասակարգել է 500-ամյա պատրիարքարանի վավերադրերը, պաշտոնական գրությունները, կոնդակները, կալվածագրերը, եկեղեցական ու ազգային կյանքին վերաբերող (հսւշվե)

ցուցակները, անհաշիվ, ամենատարբեր նամակները, ծննդյան ու մահվան մատյանները, սուլթանական ֆերմանները, համայնքի ու կառավարության միջև քորակցության օրինակները, դրանց պատճենների մատյանները, ժամանակագրություններ ու արձանագրություններ, ծեռագրեր, պարբերականների հավաքածուներ, պատրիարքարանի ու Թուրքիայի հայկական Եկեղեցիների կահագրեր, գրագրություն-պայմանագրեր:

Այս տաժանելի աշխատանքը մտավորական գիտնականի համար նաև ուսկյա մի հանք էր, որտեղից նա քաղեց իր գիտական գործունեության հիմքն ու նյութը հանդիսացող բազմաթիվ հին ու նոր, հայտնի ու անհայտ նյութեր: Տարիների ընթացքում նա հայերեն ու թուրքերեն ուսումնասիրություններով վեր հանեց օսմանյան կայսրության, արևմտահայության պատմության բազմաթիվ նոր ու կարևոր էջեր, դարձնելով այն գիտական շրջանակների ու հանրության սեփականությունը: Գևորգ Բամպուրճյանի հարյուրավոր հոդվածներ պատրիարքարանի բյուրավոր ծեռագրերի փրկության ու ուսումնասիրության արդյունք են հանդիսանում: Իզոր չի, որ շատ հոդվածների վերնագրեր իրենց մեջ ամփոփում են «նորահայտ» բառը: Դրանք անհայտ կամ մոռացված պատմությանը նոր կյանք հաղորդող երկեր են: Այն որքան որ արևմտահայության, այդշափ էլ օսմանյան պատմության ուսումնասիրությանն է վերաբերում:

Տարբեր է եղել նշանավոր մատենագետի նկատմամբ թուրքական և սփյուռքահայ պատմաբանների ու բանասերների վերաբերմունքը:

Գևորգ Բամպուրճյանի կյանքի վերջին տարիները դժվար է հանգիստ ծերության հետ համեմատել: Թեև զնահատված թուրք և հայ մտավորական շրջանակների կողմից, թեև Թուրքիայում և Սփյուռքում հայտնի մտավորականի համբավ վայելող մատենագետը շարունակում էր իր ուսումնասիրությունները, այնուամենայնիվ մնալով հոգեպես միայնակ, հիվանդ, մենակյաց ու սեփական

գրադարանը իր ճարակ¹ դասնալուց հետո՝ բոլորովին ջախջախ-ված, վախվորած ու որրացած: Գևորգ Բամպոքճյանն իր՝ մահկանուցուն կնքեց 1996թ.: Այս կրտստին լայնորեն անդրադարձան հայ և թուրք գիտական շրջանակները², մասնավորապես **Մաքրի Քոզը**, **Թուրքութ-Քութը**, **Ֆահրի Արալը**, շատ-շատերը «Tarih ve Toplum»-ի էջերում:



1 Արդյոք ճակատագրի հարված, թէ² պատահականություն կարելի է համարել որոշ մտավորական, գիտնականների գրադարանների ոչնշացումը Պուտամ: Նույնպիսի բախտի արժանացավ արևմտահայ նշանավոր մտավորական, գիտնական, հոգևոր, հասարակական գործիչ Խորեն արք. Նար-Բեյը:

Սենք շխաղողեցինք զտնել «Մարմարա» օրաբերքի այն համարը, որ թերքի տնօրենն ու զիսավոր խճրագիր Առեք Հատտեճյանը զգայացունց մի հոդված էր զբեւ, ներկայացնելով գրադարանը իր ճարակների մեջ կորցրած ու դրանից ավելի որբացած, հոգեկան մեծագույն շնցուն ապրած մեր զրի հերոսի մասին, հրդեհի ու Էռյամբ հրդեհին ճարակ դարձած, «խենքացած դիրվիշի», «որդեկորույս» ծնողի նման աղաղակող մարդու այդ պատկերը որը պտուվում էր խենք կրակի շորջը:

2 «Tarih ve Toplum», 1997, N, 165, s. 2 և . «Tarih ve Toplum», 1997, N, 165, s.4; «Tarih ve Toplum», 1997, N, 165, s.7;

ԳՈՐԾԸ
Թուրքերեն քառահատորյակը¹

Գևորգ Բամպուրճյանի գիտական ժառանգությունը ներկայացնելիս նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ նրա հայերեն ու թուրքերեն գործերին առանձին-առանձին: Այս իրենից ներկայացնում է մեր մշակույթի նվիրյալի 1956թ. ի վեր ուսումնախրոբյան 28 տարիների պատուղմերը՝ շուրջ 400 հրատարակված գործեր:

2002-2003թ. Ստամբուլի «Արա» երկեզու հրատարակչատունը հետմահու լույս ընծայեց Գևորգ Բամպուրճյանի թուրքերեն աշխատորյունների քառահատորյակը:

Թուրքերեն աշխատափրությունների այս քառահատորյակը բուրք և հայ հրատարակիչների անշափ ողջունելի մի համագործակցության արդյունք է, մատենագիտի գիտական ժառանգության ու հիշատակի խնկարկումը, որը մեզ պիտի մոլի հայ մատենագործյան այշշափ նպաստ բերած մեր պոլսահայ հայրենակցի գործերի բարգմանությունը, հրատարակությունը կազմակերպելուն, ապահովելու նրա անվան արժանի տեղը մեր հանրագիտարաններում, հայ գրականագիտության, մատենագիտության ու պատմագործյան մեջ²:

-
- 1 Kevork Pamukciyan. «Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar».Yayına hazırlayan Osman Köker. Aras Yayıncılık. İstanbul. 2002 –2003.
- 1 -Cilt 1-İstanbul yazıları; (Խարանով Եազլարը - Գրույրուններ Պոլսի մասին), 2002թ. :
- 2 -Cilt 2-Ermeni Harflı Türkçে Metinler; (Էրմենի Հարֆի Թիվրչէ Մէրինլէր -Հայտառա թուրքերէն բնագրին), 2003թ.:
- 3 -Cilt 3- Zamanlar, Mekânlar, İnsanlar; (Զամանլար, Մէրանլար, Խնամանլար -Ժամանակներ, Քայլքն, մարդիկ), 2003թ.:
- 4 -Cilt 4-Biyografileriyle Ermeniler; (Պիյուկրաֆիլէրիյէ Էրմենլէր - Հայերի կենսագրութիւնները) - 2003թ.:
- 2 Տողերիս հեղինակը թեև պատիվ չի ունեցել անձանք ծանոթ լինելու գ. Բամպուրճյանին, սակայն տարիների ջերմ, բարեկանմական, մասնագիտական նամակագրություն է ունեցել նրա հետ, և

Գ.Քամպուրծյանի գործերի քառահատորյակի հրատարակիչները այն բաժանել են ըստ բովանդակային առումների: Այս մոտեցումը մենք շատ տրամաբանական ու հարմար ենք գտնում, ուստի և Գ.Քամպուրծյանի գործունեության մասին մեր ուսումնասիրությունը ցանկանում ենք նույն այդ տրամաբանությամբ կազմել:

Ա հատորը սկսվում է հրատարակիչ Օսման Ջյորերի կրողմից գրված առաջարանով, որից հետո Գ.Քամպուրծյանի ինքնակենսագրականն է, որ 1993թ. նա գրել է Քեյրութում հրատարակող «Ծիրակ» հանդեսի համար: Սա գիտնականի հայերեն և բուրբերեն լեզուներով հրատարակությունների արտակարգ համեստ մի ցանկ է ներառում, որը փորձել ենք լրացնել:

Քառահատորյակի առաջարանում գտնում ենք Ամենայն Հայոց Կարողիկոս, Երջանկահիշատակ Պարեգին Ա-ի 1997թ. գնահատանքի ուղերձը ուղղված Գ.Քամպուրծյանին՝ Թարգմանչաց տոնի առթիվ¹:

Գնահատանքի և աշխատանքային համատեղ տարիների հուշերով առաջնորդող մի հողվածով հանդես է նկել Կ.Պոլսու Թուրքիու Հայոց Պատրիարք, գիտության հովանավոր, Մեսրոպ առք. Բ Մուրաֆյանը:

Գ. Քամպուրծյան մարդու, բարեկամի, մտավորական դերվիշի, բուրբերեն և բուրքական հանրագիտարաններին աշխատակցած գիտնականի մասին երախտագիտական խոսքերով հանդես են եկել բուրք գիտնականներ Ֆահրի Արալը, Թուրքութ Զուրը, Սարի Քոզը: Վերջիններս իրենց հայերենի իմացությամբ պարտական են

Երախտագիտությամբ է հիշում նրա գնահատականները, մեծ սիրով պահում նրա նվիրած ու հեղինակած գրերը, հայաստանության վերաբերյալ սեփական և բուրք գործընկերների հողվածների առանձնատիպերը:

1 Գ. Քամպուրծյանը հպարտանում էր այն փաստով, որ Վեհափառն իրեն գնահատում է: Իր գրերը և որոշ հողվածներ միշտ ուղարկում էր, ակնկալելով նաև Կարողիկոսի միջնորդությունը դրանք տպագրելու խնդրում:

Գ.Քամպուրճյանին, նրա հետ տարիների համատեղ աշխատանքին:

Ա հատորը՝ «*İstanbul Yazılıları*» (Ստամբուլ աղբյուրներում), ներառել է Կ.Պոլսի պատմությանը նվիրված հայկական սկզբնալրյուրների ուսումնախորության արյունք հոդվածները: Դրանց մի մասը բուրբական հանրագիտարանների համար գրված նրա հոդվածներն են, որ հրատարակվածները ներառել են զրբում¹:

1853թ., երբ Թուրքիայում պատրաստվում էին մեծ շուրջ նշել Ստամբուլի գրավումը, այս առջևիվ եղած հրատարակություններում մեծ ջանքեր էին ներդրվում նվազագույնի հասցնել հույնների դերն այս քաղաքի պատմության մեջ, նրա ճակատագրում: Հայկական (հայագիր և հայատառ բուրբերն ձեռագիր ու տպագիր) աղբյուրները, դրանց հրատարակությունները բուրբերեն և կամ հայատառ բուրքերեն աղբյուրների ուղղակի լատինատառ բուրբենի վերածումները մեծագույն ներդրում են հանդիսանում Կոստանդնուպոլսի պատմության իրական ուսումնասիրման ասպարեզում:

Հատորը ներկայացնող 51 հոդվածները իրմնականում վերաբերում են Պոլսի պատմության որբերգական դրվագներին, աղետներին (Երկրաշարժ, հրդեհ, հեղեղ, համաճարակներ, ցրտահարություններ և այլն), պատմական առանձին հուշարձաններին, պատմական դեմքներին, ներկայացնում սուրբանական, պալատական ժամանակագրության որոշակի հատվածները: Պատմության մեջ հայտնի են դեպքեր, երբ որևէ իրադարձություն կամ կարևոր դեպք հիշելիս, այն հաշվարկում են տվյալ ժամանակում վրա հասած քնական աղետների հետ կապակցված: Պոլսի Երկրաշարժերն ու հրդեհներն ողբերգական այնպիսի մեծ հետք են թողել, ինչպես 1766 թվականի Երկրաշարժը կամ 1660թ. հրդեհը², 1789թ. հեղեղը, 1929թ.

1 Թուրքերն բառահատորյակի մեջ բացակայում են բուրքերեն որոշ հոդվածներ, որոնց մասին խոսելիս նախընտրում ենք որպես աղբյուր հղել ամսագրային տվյալները:

2 Tarih ve Toplum, 1990, N, 75, s.24-31.

ցրտահարությունը, որ անզամ պատմական դեստաններ են գրվել այս մասին: Դրանցից մի քանիսը հայատառ բուրքերնենով են եղել: Սակայն բնության աղետների մասին աղբյուրները սոսկ Պոլսին չեն, որ վերաբերվել են: Դրանց ևս անդրադարձել է Գ. Բամպորճյանը, ինչպես օրինակ 1688թ. Իզմիրի ավերիչ մեծ երկրաշարժի 300 ամյակի տարեկացի մասին գրված նյութը¹:

Այս ամենն արժեքափոր է նրանով, որ սրանք հիմնականում եզակի հուշարձաններ են, որ կարող են լույս սփռել ժամանակի կարևոր իրադարձությունների վրա, նաև՝ հավաստի աղբյուրների լույսի ներքո կարող են բույլ տալ լուծելու պատմության որոշ գաղտնիքներ: Այս առումով հետաքրքրական են պատմական բովանդակության մի քանի եզակի դեստաններ, ժամանակագրություններ: Այս մասին բուրքական աղբյուրներում հավաստի ոչինչ չեք գտնի: Հոդվածներից յուրաքանչյուրն իր նյութով ու բացահայտումներում է բուրքագիտության մեջ: Այսպես օրինակ, Կոստանդնուպոլիսը գրաված Մահմուտ Բ Ֆարիի սուլթանի (1432-1481) վեցիրներից Մահմուտ Փաշային նվիրված հոդվածում² շնորհիվ հայկական ձեռագիր աղբյուրների բացահայտվում է Մահմուտ Փաշայի (1400-1474) կենսագրությունը, կարևոր տարեկանը, նրա ծննդավայրը՝ Հարավալավիայի Մանասըրը քաղաքը, տոհմարանությունը, ծագումով սերք կամ խորվաթ լինելը և սովորանի կողմից «Ուումելիի Վեզիր» կարգված լինելու պատմությունը: Հետաքրքիր են Պոլսի հայ բնակչության պատմության հետ կապված հոդվածները, սկսյալ բյուզանդական շրջանից: Այն է՝ հայկական հիմնադրանոցների, գերեզմանոցների, դպրոցների, եկեղեցիների, կղզիների, իշխանատուն-խանների մասին:

Հայ-բուրքական առնչություններին, Օսմանյան կայսրության այս կամ այն ասպարեզում հայերի ունեցած դերին նվիրված հոդվածները երկակի արժեք են ներկայացնում: Հայագիտության,

1 Tarih ve Toplum, 1989, N, 70, s.51-52.

2 Tarih ve Toplum, 1986, N, 32, s. 9-13. Վեզիր է եղել 1455-66թ. և 1466-1472 թվականներին:

առավել ևս քուրքազիտության համար շատ կարևոր են այն հոդվածները, որոնք ուղղակի օգնում են ուսումնասիրողներին գտնելու իրենց անհրաժեշտ աղբյուրները: Օսմանական կայսրության պատմության մասին մատենագիտական գրականության մեջ դժվար թե գտնեք հայ ժամանակագիրների անունների ու գործերի: Գ. Բամպուրճյանը¹ ներկայացնում է 1440 թվականից ի վեր Կոստանդնուպոլիսի պատմությունը գրած 25 հայ հեղինակների, ներկայացնելով նրանց ձեռագիր և տպագիր ուսումնասիրությունները: Նրա ներկայացրած հայ պատմաբաններից վերջին անունը մեր ժամանակակից նշանավոր մատենագիտ Հակոբ Անասյանն է(1904-1988): Այս հոդվածը կարելի է գանձ համարել Պոլսի պատմությամբ գրաղվող գիտնականների համար: Նրանց մի փոքր մասն է միայն ծանոթ քուրք պատմագրությանը: Գ. Բամպուրճյանը քուրքերն ամսագրերում հաճախ է հանդիս գալիս նման «Պատմություններ»-ի հրատարակության մասին հոդվածներով: Տվյալ աղբյուրի մասին² սեփական նկատառումներն արտահայտելու համար երբեմն նա օգտագործում է հեղինակների հորելյանական տարերվերը նշելու առիթը: Նույնպիսի վերաբերմունք ենք տեսնում Արևմտյան Հայաստանի պատմական շրջանների պատմությանը վերաբերող ուսումնասիրությունների հրատարակությունների հարցում³: Հնոյորեն կազմված տողատակ-ծանոթագրությունները մասնագետներին ուղղակի ափսեի վրա մատուցում են անհրաժեշտ աղբյուրների հարուստ ցանկեր (հոդվածներ նաև հայկական պարբերականներում): Թուրք կամ օստար արևելագիտներին մնում է ուսումնասիրել այս աղբյուրները, թարգմանել հայերենից կամ սովորել հայերեն: Ուրախությամբ պիտի նշել, որ այսօր պղևահայ հայտնի մտավորական-հրատարակիչ Արևեն Յարմանը զինվորագրվել է հայկական աղբյուրները քուրքերն գիտական հրատարակությունների տեսքով տպագրելու կարևոր առաքելությանը:

1 Tarih ve Toplum, 1991, N, 89, s. 48-52

2 Tarih ve Toplum, 1989, N, 69, s. 6-7. և Tarih ve Toplum, 1988, N, 54, s.26-29.

3 Tarih ve Toplum, 1989, N, 70, s. 51-52.

18-րդ դարում, Կոստանդնուպոլիսին վերաբերող կարևոր, արժանահիշատակ, լավ ու վատ դեպքերի մասին կազմված ժամանակագրությունը սկսվում է 1702 թվականից: Ավարտվում է այն 1798թ. մայիսի 16-ի Առնավուտքյոյի հրդեհի մասին հոդվածով:

Սա յուրահատուկ մի ծրագիր է, որով կարող են առաջնորդվել Պոլսի պատմությամբ հետաքրքրվողները¹:

Կ.Պոլսի մասին աղբյուրների գիտական հրատարակություններն ամփոփող Ա հատորում որոշակի թիվ են կազմում 17-րդ դարի հայտնի հեղինակ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի (1637-1695) գործերը, որոնք նույնքան արժեքավոր են հայագիտության, որքան և քուրք պատմագրության համար: 17-րդ դարի հայ մատենագիտության զագարներից Երեմիա Չելեպի Քյոմուրճյանն այն աղբյուրն է, որին ամենից շատ է անդրադարձել Գ. Բամպուրճյանը²: Նա իր համար պայմանականորեն հինգ մասի է բաժանել քյոմուրճյանական ժառանգությունը՝

- ա. հայերեն տպագրված գործեր,
- բ. հայերեն անտիպ գործեր,
- գ. հայատառ քուրքերեն տպագրված,
- դ. քուրքերեն անտիպ և
- ե. կորած գործեր:

Ակսած Քյոմուրճյանի գերդաստանի ծագումնաբանությունից, կենսագրությունից մինչև նրա ժառանգների պատմությունը, առանձին գործերի քուրքերենով ուսումնասիրությունը ու դրանց ծանոթագրումը՝ եղել է Գ. Բամպուրճյանի կարևորագույն նվաճումներից: Մանավանդ որ մի մասը նվիրված է եղել Կոստանդնուպոլիսի պատմությանը: Ստամբուլի պատմության հետ առնչվող շատ հոդվածներ, որ ներառվել են քառահատորյակի «Ստամբուլյան գործեր»-ին նվիրված առաջին գրքում, նախապես հրատարակված են եղել

1 Tarih ve Edebiyat Mecmuası, 1979, N, 6, s. 44-49.

2 Tarih ve Toplum, 1989, N, 69, s. 6-7. և Tarih ve Toplum, 1988, N, 54, s.26-29.

«Tarih ve Toplum», «Tarih ve Edebiyat Mecmuası» ամսագրերում:

Ա հատորում տեղ են գտել նաև պետական նշանակության կառույցների մասին ուսումնասիրություններ, մանավանդ՝ եթե նրանց պատմությունն առնչվում է արևմտահայ իրականության հետ: Այսպես օրինակ, մի քանի հոդվածներ են նվիրվել Փողերանոցին (Դրամահատարան), նրա պատմությանը, տարբեր ժամանակներում երկրի ֆինանսական ողնաշարը հանդիսացող այս ինստիտուտի զարգացմանը ծառայած հայերի ունեցած դերին ու առանձին անունների, ինչպես նաև այս շրջանի հայ ուսումնասիրողների քողած աղբյուրներին: Հայտնի է, որ երկար տարիներ Դրամահատարան-Փողերանոցը տնօրինել են հայ ամիրայական գերդաստանները, տաղանդավոր ոսկերիչներ, գլխանական այրեր, սեղանավորներ: Սիայն-Տյուզյան գերդաստանից 7 տնօրեններ են եղել, որոնցից 4-ը զի են գնացել երկրի համար կարևորագույն պաշտոններից այս մեկի նկատմամբ մեծագույն նախանձի, զրապարտության, խարդավանքի: Փողերանոցի տնօրեններ են եղել նաև **Գազազ Արքին Պետզյան**, **Պողոս Պիլեգիկչի** ամիրաները¹: Փողերանոցի գործունեությունը սերտորեն ագուցված է եղել սեղանավորական, ոսկերչական դասի գործունեության հետ: Այս տեսակետից ևս հայ նշանավոր անունների պակաս չի զգացվել, ինչպես նաև դրամահատարանի կարևոր այլ պաշտոնյանների առումով: Մեզ են հասել նրանց քողած հայատառ քուրքերն տեսրակները, որոնք եզակի աղբյուրներ են «հայ» փողերանոցի գործունեության:

Հայտնի է, որ Պողոս գործող մի շարք ուսումնական հաստատություններ ստեղծվել են հայ մասնագետների, մասնավորապես արտասահմանում կրություն ստացածների գործուն մասնակցությամբ և նրանց հետագա տարիների դասախոսական աշխատանքի շնորհիվ (օր. շերամապահության, կենդանաբուծության, այգե-

1 Այս մասին տես Գ. Բամպուրճյանի քառահատորյակի Ա գրքի 131-138 էջերում, ինչպես նաև մեր «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» գրքի ամիրաներին նվիրված գլխում (Երևան, 2011, էջ 213-218):

գործության, անտառագիտության մասնագետներ պատրաստող հաստատությունները):

Գ. Բամպուրճյանի որոշ հոդվածներ, որոնք տեղ են գտել Ա հատորում, այս երախտավիրմերի ունեցած ներդրմանն են վերաբերում: Դրանցից է Անտառների դպրոցը: Օսմանյան կայսրության տնտեսության համար կարևորագույն այս ճյուղի պահպանման, օգտագործման ու զարգացման եվլուպական ավանդույթներով զիտական կազմակերպումն իրենց վրա էին վերցրել հայ անտառագետները, բնագետները, այգեգործության մասնագետները: Դրանք հիմնականում ֆրանսիական կրթության ու մշակույթի կրողներ էին:

Գ. Բամպուրճյանի հոդվածները ընթերցողներին ծանոթացնում են Պոլսի առանձին պատմական հուշարձանների իրական պատմությանը, որն օգնում է խուսափել տվյալ նյութի հետազա խեղաքայուրումներից, մանավանդ, եթե այն կապ ունի արևմտահայ իրականության հետ: Նմաններից են Ղալաքիայի աշտարակի և 3 այլ պատմություններն ըստ Ղուկաս Ինճիճյանի¹, պատմական խաների մասին նյութերը: Այս և նման մյուս հուշարձանները, որ այսօր ստամբուլյան շրջագայության հիմնական վայրերն են, ոչ մի ակնարկով չեն ներկայացնում դրանց կառուցման պատմությունը, հայ ճարտարապետներին, հայ կառուցողներին: Հնարավորինս դրանք կամ «մոռացվում» են կամ մտացածին աղավաղվում՝ շնչելու համար դրանց հայկական ծագումը:

Որպես կանոն, եթե հոդվածը ներկայացնում է հայ հեղինակի թուրքագիտության համար արժեքավոր որևէ ուսումնասիրություն, ապա Գ. Բամպուրճյանը նախևառաջ ծանոթացնում է հեղինակի կենսագրությունը և նրա գործերը: Գ. Բամպուրճյանի ուսումնասիրությունների, նախասիրությունների հիմնական ոլորտը թուրքալեզու (հայատառ թուրքերեն) երկերն են եղել:

Պատմական հուշարձաններից ս. Սոֆիայի տաճարը (Այստիան), որ մինչօսմանյան ամենահայտնի կառույցներից է, իր

1 Tarih ve Toplum, 1987, N, 39, s. 14-16.

պատմության մեջ ևս հայերի կարևոր ներդրումն է ունեցել: Այս տաճարի մասին առավել հայտնի փաստը երկրաշարժից ավերված հսկայական զմբերի վերականգնման պատմությունն է հայ ճարտարապետ Տրդատի կողմից: Ս.Սոֆիայի տաճարի քանգարանը շատ ավելին է պատմում հայերի մասին՝ Հոստինիանոս կայսրից, Մամիկոնյանների կողմից: Այն է՝ 5 գրիվով (47.5 օխայով) զնված Հայկական դուռը, Գրիգոր Լուսավորչի՝ «Գրիգորիոս Արմենիա» մակագրությամբ մողակ պատկերը, Այստիհայում հայ Էոզեռականների կարդացած քարոզները և այլն... Այս մասին գրել են Ստեփանոս Վսողիկը (11-րդ դ.), Վարդան Արևելցին, Ղուկաս Խնձրյանը¹, Մատթեոս Ռուհայեցին, Հակոբ Նալյանը, օտար ժամանակագիրներ²:

Կոստանդնուպոլիսը բյուզանդական շրջանում արդեն հայկական փոքրարքիվ մի գաղութ է ունեցել: Կոստանդնուպոլիսի գրավումից հետո սկսվեց Արևմտյան Հայաստանի քաղմաքիվ գավառներից հայ արհեստավորների բռնի վերաբնակեցումը Պոլսում՝ սկիզբ դնելով մի քանի հայտնի քաղերի: Սուլթան Մահմուդ Բ Ֆարիհը ցանկանում էր Կոստանդնուպոլիսը վերակառուցել որպես Օսմանյան կայսրության մայրաքաղաք: Եվ այն կառուցելու գործում հայ արհեստավորները ամենագործուն ուժերից եղան: Այսպիսով, Պոլսում իր քաղմադեմ երևույթներից մեկը իրանցնում է հայկական ներկայությամբ: Դրանք կայսրության սկզբնական շրջանի հայերով բնակեցված 6 իիմնական քաղերն են, իրենց նկեղեցիներով, դպրոցներով, տարբեր կազմակերպություններով, ինչպես նաև Իշխանաց կղզիների պատմությամբ:

Գ. Քամպուքճյանը քուրքական ամսագրերի համար գրել է հոդվածաշրեր՝ նվիրված հայ Պոլսին, նրա առանձին քաղերի պատմությանը՝ պատմական հուշարձաններով, խաներով, ճակատագրի

1 Tarihi ve Toplum, 1986, N, 26, s.60-62. և Tarihi ve Toplum, 1986, N, 24, s.14-16.

2 Գ. Քամպուքճյանը՝ «Հայերը և Այստիհայն» հոդվածը՝ գրել է՝ Ուշադ Էրեմ Գոչոնի քուրքական հայտնի «Ստամբուլի հանրապետարան»-ի համար 1960.թ.: Տես նաև Ա. հ., էջ 154-156.

կողմից նրանց հասած բնության տարերքների, մասնավորապես հրդեհների մասին, եկեղեցիներով, առյուրներով, գերեզմանատների պատմությամբ, քաղերի ազգագրական բնութագրերով, արիեստների, արյունաբերական ձեռնարկություններով և այլն: Իհարկե, այս քաղերի պատմությունը ներկայացնելիս Գ. Բամպուրճյանն այն համեմել է նաև բուրք սուլթանների և այլ հայտնի անձանց հետ կապված նրանց այցելությունների, վերաբերումների, տարբեր դեպքերի պատմություններով¹:

Գ. Բամպուրճյանը բուրքերենով խմբագրել և հրատարակության է պատրաստել՝

1. Երեմիա Չեկեպի Քյոմուրճյանի «Ստամայօլոյ պատմութիւն»ը («İstanbul Tarihi»)²:

Երեմիա Չեկեպի Քյոմուրճյանի մահվան 300 տարելիցի առքիվ Գ. Բամպուրճյանը գրել է նրա «Համառոտ պատմութիւն ԹՇ» (չորս հարյուր) տարոյ Օսմանցոց քաջատրացն» շափածո երկի մասին, որն Օսմանյան կայսրության պատմության մասին առաջին հայերեն գործն է³: Երեմիա Չեկեպի Քյոմուրճյանի մասին հոդվածները

- 1 Tarih ve Toplum, 1997, N, 165, s.9-10. տես նաև՝ Tarih ve Toplum, 1987, N, 43, s 16-18. Հոդվածը Կամունի Սուլթան Սուլեյմանի կյանքը փրկած մի հայ խոհարարի մասին է:
- 2 1661-1684թթ. շրջանի «Ստամայօլոյ պատմութիւն»-ը աշխատասիրությամբ Վ.Մորգոնյանի, հ.Ա.-Գ., Վիեննա 1913,1932,1938), Հրանտ Տեր-Անդրեասյանի կողմից ծանրագրված ու վերանայված Բ տպագրությունը 1952թ. Էսք., 1988, XXVII+328 էջ:
- 3 Սատենադարան, ձեռ. հ.1876: Գիտական հրատարակությունը պարտական ենք բուրքագետ-առյուրագետ Ժոզեֆ Ավետիսյանին (Երեմիա Քեօմիւրճնանի «Համառոտ պատմութիւն ԹՇ տարոյ Օսմանցոց քաջատրացն», Եր., 1982): Տես՝ «Mütceferrika», 1955, N 5. s.147-156. Գ. Բամպուրճյանն իր հոդվածում անդրադառնալով այս հրատարակությանը, որոշ ուղղումներ ու հավելումներ ե առաջարկում, հուսարով, որ այն բուրքերնենի կրագմանի: Տես նաև՝ «Tarih ve Toplum», 1989, N, 69, s.6-7.

առիթ են հանդիսացել, որ գիտական շրջանակներում նման իրապարակումներով նշվեն հայտնի պատմաբանի հորելյանները, ինչպես օրինակ ծննդյան 350 ամյակը¹:

2. Պուկաս Ինճիճյանի «Ամառանոց Բիզանտիան»-ը (Bizans'ın Saefiye Yeri) քարզմանել է բուրքերենի և ծանոքագրել.

3. Արքահամ Անլյուրացի, «Գրավումն Կոստանդնուպոլս» գրքի թուրքերեն քարզմանուրյունը ծանոքագրություններով հանդերձ -25 էջ (Engürlü Rahip Arahaham'a Göre «İstanbul'un Fethi»²):

Ա հատորի գլուխ հայկական բովանդակությանը վերաբերող մասը գրվել է իշմնականում թուրքական «İstanbul Ansiklopedisi» հանրագիտարանի համար, նրանց առաջարկությամբ, նաև՝ «Tarih ve Toplum» ամսագրի համար³:

4. Ի հատորը՝ «Ermeni Harfti Türkçə Metinler» (Հայատառ թուրքերեն սկզբանբարյուրները) նվիրված է հայատառ թուրքերեն ձեռագիր աղբյուրներին, այսինքն՝ Գ.Բամպուրճյանի կողմից հայատառ թուրքերեն աղբյուրների ուսումնասիրությանը նվիրված 31 հոդվածներին, աշխատություններին⁴:

1 Tarih ve Toplum, 1988, N, 54, s.26-29, տես նաև՝ «Yeni Yüzyıl» օրաթերթում (15.07.1995թ.) նվիրված Երեմիա Զելիափի Ջյունուրճյանի մահվան 300 ամյակին:

2 Այս մասին տես՝ «İstanbul» ամսագրում, (Խսր., 1995, N 15, հոկտեմբեր, էջ 32-37).

Գ.Բամպուրճյան, Արքահամ Անլյուրացի, «Մուս գրավման Ողբ» քարզմանուրյուն և ծանոքագրություն. 1955թ. 25 էջ. (անտիպ)

3 1995թ.եռամսյա «İstanbul» հանդիսան իրատարկվել է XV դ. տաղերգու Արքահամ Վրդ. Անլյուրացի «Ողբ ի վիրայ մայրաքաղաքին Կոստանդնուպոլսյ՝ փասն տիրելոյն տաճկաց» երկը (25 էջ.), որը 1953թ. ծանոքագրություններով հանդիր քարզմանել էր Գևորգ Բամպուրճյանը:

4 Հատորն առաջնորդող Ռոբեր Կոփրաչի հոդվածից իմանում ենք, որ իրատարակիչների համար մասնավորապես օգտակար են եղել նաև մեր «Հայատառ թուրքերեն գրականուրյունը» մենագրությունը (Եր., 2001), Հայատառ թուրքերեն գրքերի և պարբերականների մեր կազմած մատենագիտությունները (Եր., 1985 և 1987թ., և Ստամբուլ, 2005թ.), որը հայերեն աղբյուրները գնահատելու փորձ ենք նկատում :

Ոորեր Կոփրաշի¹ 45 էջերից բաղկացած հայտառ քուրքերնը ծանրացնող առաջնորդողում անդրադարձ կա հայտառ քուրքերն ճեռագլուր գրականությանը, աշուղական դպրոցներին, տպագիր գրականությանը, Սլսիքարյան միաբանության հայրերի գիտական ավանդին, մասնավորապես՝ քարզմանական գրքերին, պարբերականներին, որոշ այլ հեղինակների ու նրանց գործերին: Տրվում է հայտառ քուրքերնի մասին գրականության ցանկ: Հոդվածն ամբողջութեամբ հավելված է հայտառ քուրքերն գրքերի տիտղոսարերքերի, հեղինակների, աղբյուրների բազմաթիվ լուսանկարներով:

Որոշ հոդվածներ պատմում են հայտառ քուրքերն պարբերականների, նրանցում տեղ գտած կարևոր նյութերի, հայտառ քուրքերն գրականության մասին:

Գ.Քամպուքճյանը խմբագրել, ծանրագրել, քուրքերնենով կրատարակել է հայ հեղինակների աղբյուրագիտական և պատմական հույժ կարևորություն ունեցող շափածո 4 հայտառ քուրքերն ներքողները՝ նվիրված Սուլթան Մահմուդ Բ-ին², որը հայտնի էր իր համեմատարար հայանպաստ քաղաքականությամբ: Զեռագրի որոշ մասեր դժվարընթեռնելի են: Վերջին դեստանը 27 քառատողերից է բաղկացած և գրադարձնում է 386-388 էջերը:

Սուլթան Մահմուդ Բ-ի կյանքի ու գործունեության կարևորագույն շրջանները նշելուց հետո Գ.Քամպուքճյանն անցնում է շափազանց հետաքրքիր այս աղբյուրում ընդգրկված բանաստեղծությունների հեղինակների բացահայտմանն ու նրանց ծանրացմանը քուրք ընթերցողին: Առաջին երեք ներքողների հեղինակն է Հովհաննես Քինյ. Սաքայան-Հյունքարքեյնողին (1774-1837): Թուրքական պատմական ընկերության Անկարայում հրատարակվող

-
- 1 «Արաս» հրատարակատան տնօրենի, որոշ ժամանակ «Ակոս» օրաթերթի խմբագրապեստ:
 - 2 Մահմուդ Բ Աղի սուլթան (ծն. 1785-1839, զահակալի է 1808-1839թ.), «İkinci Sultan Mahmud'a Dair Ermeni Harflî Türkçe Dört Manzum Methiye». «Belleten», 1990, Cilt LIV, sayı 1015-1071.

«Belleoten» գիտական պարբերականի հ.211-ում նա հրատարակել է 19 էջանց մի հոդված՝ Հովհաննես քիմյ. Հյունքարքեյնողի (1773-1837) գրած երեք ներբողների մասին, նվիրված Սուլթան Մահմուտ Բ-ին: Հողվածում ներկայացվում է նաև 19-րդ դ. թուրք աշուղ Գյուղ-գարիփ կողմից, Սուլթան Մահմուտ Բ-ին հետմահու նվիրված մի դեստան, որը մինչ օրս անձանոք էր մնացել:

Այս ներբողները նման են սուլթանական պալատի ամենամանրամասն ժամանակագրության: Ուղղակի աներևակայելի է մանուկ քազամառանգների անվերջ իրար հաջորդող մահվան փաստերը հարենում: Գահի համար պայքարը, սուլթանական կայսրության գահին անպայման իրենց որդիներին տեսնող հարենի քազմազգ կանայք և սիրելի հարճերը, ինչպես նաև շահագրգիռ նազիրներն ու վեճիրները: Նրանք միջոցների, գործիքների միջև խարրություն չեն դրել հասնելու իրենց նպատակին, ասպարեզից վերացնելով տարիներ անց սեփական շահերի կարծեցյալ քշնամիներին, նպատակ հետապնդելով՝ ապահովել իրենց իշխանությունը, կյանքը և քարեկեցությունը նաև ապագայում, մինչ այս կամ այն մանուկի սուլթանական գահին քաղմնը: Նման փաստերի առատ առկայությանն այլ աղբյուրներում չենք հանդիպել: Այս տեսակետից եզակի են նորահայտ պատմական աղբյուր հանդիսացող, արժանահավատ սահմանություններով հարուստ 3 ներբողները:

Գ. Քասարչոջյանը հնարավորինս մանրամասնորեն գրում է 3 ներբողների հեղիսաւում մասին, ներկայացնելով մի շարք աղբյուրներ:

Չորրորդ ներբողը, որ Ս. Շամի մահվանն է նվիրված, պատկանում է հայտնի աշուղ Գյուղգարիի Կ. Ճ. Այն գրի է առնվել սփազքի քարգմանից Թաղեռս Կեզուրյանի (1838-1917) կողմից: Իր մի նամակում գրել է, որ դեստանների բնագրերը հայտառ թուրքերեն են եղել: «Անաստոպոյի դեստան» խորագրի տակ ներկայացվում է Ղրիմի պատերազմը, պատմվում 1855թ. անգլիական ու ֆրանսիական զորքերի օգնությամբ թուրք-ռուսական պատերազմի հաղթանակի մասին: Սա արդեն սովորական Աբդուլմեջիդի կառավարման

շրջանին (1839-1861) է վերաբերում, որը ևս մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Դրիմի պատերազմի մասին պատմական լավագույն աշխատությունը պատկանում է տաղանդավոր գրող, պատմաբան, խմբագիր հրատարակիչ, Օսմանյան ծովային ուժերի գլխավոր քարգմանիչ, բազմակողմանի զարգացած դիվանագետ-քաղաքացեան Հովհաննի Վարդան Փաշայի (Հովհաննի Վարդանյան, 1815-1879) գրքին¹: «Արևելյան պատերազմների պատմությունը» երկիատոր ուսումնասիրություն է, գրված հայատառ թուրքերեն, պալատական օսմաներենին հատուկ դժվարամարս, ծերծեքուն ոճով: Ակնհայտ է, որ այն գրքել է պալատի պատվերով, նկատի ունենալով թուրքական և օտար դիվանագիտական կառույցներին Կայսրության պատմությունը ծանոթացնելու անհրաժեշտությունը: Ռուս-թուրքական պատերազմները, սկսած 1855 թվականից ճակատազրական նշանակություն են ունեցել հայ ժողովրդի համար²: Նրանք մասնակից են եղել պատերազմող երկու կողմերում էլ, և՝ որպես պարզ գինվոր, և՝ որպես հրամանատարներ, բանակի մատակարարներ: Գիրքը Օսմանյան կայսրության և Ռուսական կայսրության միջև Դրիմի պատերազմի (1877-78թ.) պատմության մի հատվածն է միայն պատկերում: Այս 650 էջերում նկարազրկում են 1877թ. հունիսի 15-ից մինչև դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակաշրջանում Անտոլիական և Ռուսելիի ճակատների կրիվները ամենայն մանրամասնությամբ: Կարևո-

- 1 Այս մասին տես՝ մեր «Հայերի Շերդրումն Օսմանյան կայսրությունում» ուսումնասիրության 85-88 էջերում (Եր., 2011թ.):
- 2 Հայերը մասնակից են եղել պատերազմող երկու կողմերում էլ: Թուրքական բանակում թշնամու հարձակմանը հանդիման որպես առջևից գնացող կենդանի պատմել, պարզ գինվոր, բանակի շինարարական ջոկատներ և բանակի վերջից՝ որպես գերեզմանափորներ ընթացողներ: Թուրքական բանակի պարենի, հանդերձավորման և այլ անհրաժեշտությունների մատակարարները, ֆինանսավորողները, բարգմանիչները, բժիշկները հիմնականում հայեր են եղել: Ռուսական բանակում հայ հրամանատարները փայլել են իրենց հաջողություններով: Պատերազմի ավարտին Բեռլինի կոնգրեսի 61-րդ կետը ակնկալում էր Օսմանյան կայսրության հայարնակ զավառների բարենորոգում և ապահովելու երեսանց կյանքը չերքնաբներից, բրդերից: Այդ ամենը սիմ ծրագրեր էին:

րագույն պաշտոններ ունեցած այս հայ դիվանագետը ի պաշտոնէ կարողացել է ի մի քերել անհրաժեշտ շատ տեղեկություններ, իր ուսումնասիրությունը պատմական հավաստի աղբյուր հանդիսացնելու համար: Ցավոր սրտի գիրքը աճապարտ է մնացել հեղինակի՝ հայ առաջին փաշայի տիտղոս ստացած (1858թ.) և նոյն թվականին ֆրանսիական կառավարության կողմից *Chevalier de Legion d'Honneur*-ի արժանացած Հովհանն Արդան փաշայի վաղահան մահվան պատճառով՝ 1879թ. մարտի 28-ին :

Գ.Բամպուրճյանն այդ երեք ներքողները վերածել է լատինատառ բուրքերենի, դարձնելով այն այսօրյա բուրք ընթերցողի սեփականությունը: Այս հատորում մի քանի պատմական դեստանների ընդգրկված լինելը հայտառ բուրքերեն աղբյուրների բացառիկ կարևորության հերթական ապացույցն է: Ընդհանրապես, հայտառ բուրքերեն չափածո պատմական գործերը՝ «դեստանները», մինչ այժմ ստվերում են մնացել և դրանց լատինատառ բուրքերենի վերածելը, ասպարեզ բերելը, ծանոթագրելն ու տպագրելը՝ խորին հարգանքի է արժանի¹: Այն նախադեպ է ստեղծում, որպեսզի մեր գրականությունը, պատմագրությունը հարստանա ոչ միայն նոր ստեղծագործություններով, այլև նոր հեղինակներով, որոնք մինչ բանպուրճյանական հրատարակությունները, ծանոթ չեն ոչ հայկական մքննուրսին և առավել ևս՝ բուրք ընթերցողին:

Հատորը միայն սկզբնադրյուրների, մինչ օրս անծանոթ նյութերի առատության կողքին՝ բազմաթիվ գիտական մեծ ու փոքր հայտնագործություններ է նվիրում ընթերցողներին: Այս նյութերի գիտական լուրջ ուսումնասիրությունները մի շաբաթ կարևոր բացահայտումներ են ընձեռնելու ուսումնասիրողներին, մղելու նոր վերագնահատումների:

1 Գ.Բամպուրճյանն առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել աշուղական ստեղծագործությունների նկատմամբ: Նա ամենայն հետևողականությամբ հրատարակել, ծանոթագրել է ամեն մի «նորահայտ», մեծ կամ փոքր գործ, վերաբերմունք այն իր ստեղծած ժողովրդին. «Աշուղ Նիրանիից մեկ տաղ» (քուրքերեն) տպագրել է «Müttererika» հանդեսում (Խար., 1995, N 6, էջ 105-112):

Իր հոդվածներից մեկում Գ.Քամպուքճյանը հերթական մի վավերագիր է ներկայացնում, որը վերաբերում է արևմտահայության կողմից ջերմորեն համակրության արժանացած Արդուլազիկ և Արդումեծիդ սուլթաններից Արդուլազիկ (1830-1876) սուլթանի 1867թ. Եվրոպական երկրներ շրջագայության շրջանակներում լոնդոնյան միջազգային ցուցահանդես այցելած պատվիրակության՝ Սուլթանի և Թանգիմարի շրջանի բարենորոգումներում մեծ դեր խաղացած, Մեծ վեզիր Մահմուտ Ֆուսադ փաշայի¹ (1814-1869) հետ Մանչչատրի հայ գաղութի ներկայացուցիչների հանդիպմանը։ Մանչչատրը համարվում է Եվրոպական ամենավաղ հիմնված հայ գաղութներից։ Հայ փաճառականները Անգլիայի հետ իրենց առևտրի հիմնական կենտրոնն էին ընտրել այս քաղաքը, որը և առիր տվեց ընդարձակելու գաղութը։ Տեղի հայկական մատուի շինարարության հպամար հայերի կողմից Արդուլազիկի սուլթանական օգնությանը դիմելու, այն հրաշալի ընդունվելու մասին հուլիսի 17-ի լոնդոնյան հանդիպումը հոդվածի նյութ դարձնելը Գ.Քամպուքճյանի հայ-քուրք բարի հարաբերությունների մասին հիշեցնելու փորձ է։

Գ.Քամպուքճյանը անտարակույս առանձնակի տեղ է գրադեցուել քուրք-հայ գիտական մտավորականության փոխհարաբերություններում։ Մատենագետի, օսմանյան և հայ աղբյուրների լավագույն գիտակի օգնությանն են դիմել շատ քուրք գիտականներ, գիտության մեջ առաջին քայլերն անողներից մինչև համալսարա-

1 Հայունի է, որ բարենորոգումների այս ծրագրերը կազմելիս քուրք պետական այների կողքին են եղել նրանց հայ գործընկերները։ Ամենակարենոր խորհրդականներից է եղել 1868-1874թթ. Պետական Խորհրդի անդամ, իրավագետ Գրիգոր Օսյանը (1834-1908)։ Պոլսահայ գաղութի տնտեսապես հզոր լինելու, արվեստների ու արհեստների հայերի ծեղութ կենտրոնացած լինելը, ամիրայական ներշնչող բարձրաշխարհիկ խավը, պալատական, դիվանագիտական, հասարակական ու վարչական պաշտոններում հայերի աշքի ընկերող մեծամասնությունն ու ներդրումը, նվիրվածությունը պայմանագորեն են հայ-քուրք փոխադարձ համագործակցության, վստահության, համակրության մբնոլորտ ինչպես պալատում, այնպես էլ Օսմանյան կայսրության կամաց ամենատարբեր ոլորտներում։

նական պրոֆեսորներ, հանրագիտարամների ու պարբերական իրատարակությունների պատասխանատուներ, ակադեմիկոսներ: Վերջիններիս թվում է եղել հայտնի պատմաբան, ակադեմիկոս, Աքարուրդի սկզբունքների և բուրքական հեղափոխության պատմության ինստիտուտի, Պատմության ֆոնդի հիմնադիր Զաֆեր Թոփրակը (Zafer Toprak): Նրա գիտական ուսումնասիրություններից որոշներն առնչվում են հայ առանձին անհատների ու արևմտահայ իրականության, Օսմանյան կայսրությունում վերջիններիս ունեցած դերի հետ: Այն հիմնականում Թանգիմարի շրջանին է վերաբերվում, սահմանադրության ուսումնասիրության հարցերին: Զաֆեր Թոփրակը հեղինակել է «Սահմանադրության հոչակումն ու հայ վաճառականները» հոդվածը¹: Նոյն Զաֆեր Թոփրակը գրել է արևմտահայ անվանի դեմքերից Տիրան Քելեկյանի և օսմանյան երկրի համար պետական պաշտոնյաներ պատրաստող ուսումնական հաստատության (Mülkiye Mektebi - Մյուլիյե Սերքերի) գործունեության մեջ Տիրան Քելեկյանի ունեցած մեծ ներդրման մասին հոդվածը: Հայերի հետ առնչվող նման ուսումնասիրությունների ժամանակ Զ.Թոփրակը հաճախ է դիմել Քամպուրճյանի օգնությանը, որի մասին չի մոռացել իր երախտագիտությունը հայտնել Գ.Քամպուրճյանին, օգնության, անգամ «օսմանցի սահմանադրական գաղափարների տեր երիտրուրքի» նկարները տրամադրելու համար²: Օսմանյան կայսրության պատմությամբ գրադադարը յուրաքանչյուր գիտնական, առավել ևս բուրք ուսումնասիրող,

1 Tarih ve Toplum, 1988, N 58, s. 26-27.

2 Zafer Toprak, Diran Kelekyan, Fransız Devrimi ve Mülkiye Mektebi, «Tarih ve Toplum», 1989, N 67, s. 39-41. Գ.Քամպուրճյանը լստիմատարութեանի է վերածել պղուահայ նշանավոր մուավորական, «Շիհան» (Աշխարհ, Կ.Պոլիս, 1884-1885թ.) հայատառ բուրքերեն գրական, գիտական, առեստրական, ճանապարհորդական, կենսագրական, արդյունաբերական շարարական հանդիսի և «Տան» թերթի (1908թ.) տրատոնատեր ու գլխավոր խմբագիր, դիվանագիտական մի շարք կարևոր գործողությունների հանձնառու Տիրան Քելեկյանի (1862, Կեսարիա - 1915, Զանքար) շորջ 150 բանաստեղծությունները:

մանավանդ երեւ կրթություն են ստացել արտասահմանում, հստակ գիտակցում են, որ առանց հայկական, հունական աղբյուրի օգնության անհնարին է ներկայացնել իրենց երկրի իրական պատմությունը: Այդ է հիմնական պատճառը, որ անզամ ակնհայտ ծայրահեռ քուրքոֆիլներ համակերպվել են հայկական աղբյուրների հետ հաշվի նստելու անհրաժեշտության հետ: Խսկ գալով Գ. Բամպուրճյանին, ապա նրան տրված հոդվածների բազմաթիվ պատվերները արժանի տեղ են գտել քուրքական պատմագրության մեջ:

Հայատառ քուրքերն ձեռագիր ու տպագիր ժառանգության նկատմամբ Գ. Բամպուրճյան ուսումնասիրողի առանձնահատուկ նվիրվածությունը կասկած չի հարուցում: Իհարկե, այս կարևոր աղբյուրների այսօրյա քուրքերնով ներկայացնելն էլ (որոշ դեպքերում ուղղակի տառաղարձելը) ավելի հարմար է նկատվել քառահատորյակի թ հատորում: Ինչպես և Ա. հատորում, աղբյուրների որոշակի մասը վերաբերվում է Պոլսի և Արևմտյան Հայատանի գավառների պատմությանը: Դրանք իիմնականում բնության նույն աղետների՝ (1826թ. Հոջափաշայի, Էղիրների մեծ հրդեհների), ճակատամարտերի մասին ժամանակագիրների բողած արձակ ու շափածո գործերն են: Հատորի մնացյալ նյութերն առանց որևէ դասակարգման ուղղակի ներկայացնում են հայատառ քուրքերն աղբյուրները, դրանց շուրջ Գ. Բամպուրճյանի մեծ ու փոքր ուսումնասիրությունները:

Այս հատորի մեծ մասը նվիրված է հայատառ քուրքերնով շափած երկերին: Դրանց մի մասը Արևելքի ժողովուրդների մեջ պահպանված ու սիրված պատմություններն են, հեքիաքներ, լեզենիներ, սիրավեպեր՝ երգերով համերձ, դիվանային գրականության նմուշներ, դեստաններ, առանձին երգարանների մասին, առանձին աշուղների գործեր, որ հայատառ քուրքերնից ուղղակի լատինատառի է վերածվել, հայտնի դեմքերի շափածո ստեղծագործություններ: Երեմիա Չելերի Քյոմուրճյանի 300 ամյակի առիրով նրա քուրքերն բանաստեղծությունների անհասկանալի թվացող հայերեն բառերի հա-

մար թուրքերեն թարգմանություններն է կցել (օր. տերտեր-փափազ, շարակնոց-իլահի թիթարը, բոլոր-բյութուն, գիրը-թիթար և այլն):

Հետաքրքրություն են ներկայացնում թուրքական բանահյուսության մի քանի նմուշների մասին հոդվածները, որոնց համար առիր են հանդիսացել հայ պարբերականներում դրանց հրատարակությունները թուրքականից քիչ ավելի վաղ շրջանում, 19-րդ դ. սկզբից սկսյալ: Այդպիսին է ի պատասխան «Դեղե-Քորրուլի» թուրքական առաջին տպագրության մասին Բամպործյանի հոդվածը՝ նույն երկի հայկական ավելի վաղ հրատարակության նաև: Հոդվածների մի մասը դարեր կողըկողըի ապրած հայ և թուրք ժողովուրդների շանքերով ստեղծված կամ մշակված, «քափառող» որոշ սյուժեների, հերիարքների մասին են՝ պահպանված հայատառ թուրքերենով: Գ. Բամպործյանն անդրադառնում է այն գիտնական-բանահավաքներին, զրականագետներին, որոնք իրենց ուսումնասիրության համար նյութ են լնուրել օսմանյան մքնուրսի համար արժեքավոր անուններ¹: Նա միաժամանակ անդրադառնում է այդ ուսումնասիրությունների հեղինակներին՝ զարմացնելով ընթերցողին: Օսմանյան կայսրության, սուլթանական պալատի պատմության շատ ու շատ ճերմակ էջեր վերականգնելու առումով շատ կարևոր են հայատառ թուրքերեն պատմական դեստանները, դրանք ծանոթագրած բամպործյանական հոդվածները, որոնք սկզբում հրատարակվել են հայերեն «Աստղաբերդ», թուրքերեն «Tarihi ve Toplum», «Tarih ve Edebiyat Mecmuası», «Türkiye Turing ve Otomobil Kurumu Belleteni» գիտա-հանրամատչելի ամսագրերում, թուրքական հանրագիտարաններում և հետո միայն ներառվել թուրքերեն քառահատորյակի Բ հատորում: Գ. Բամպործյանն առիրը չի կորցնում ներկայացնելու հայկական աղբյուրագիտական ժառանգությունը, ընթերցողների ուշադրությունը սկսենալով այն հանգամանքի վրա, որ շատ ու շատ հեղինակներ, ինչպես հայազգի շուրջ 500 աշուդ-

1 Տես՝ «Hayat Tarih Mecmuası» (19694 մայիս) պարբերականում Գ. Բամպործյանի տպագրված հոդվածները:

ներ իրենց ստեղծագործությունների մի կարևոր մասը հայտառ քուրքերենով են բողել: Գրում է քուրքերեն լեզվով գրած առաջին հայ քանաստեղծների, ժամանակագիրների վկայությունների մասին, ինչպես նաև նրանց ժառանգությունը ուսումնասիրած հայ գիտնականների մասին: Այս աշուղների մի կարևոր մասը քուրք դասական գրականության անթոլզիաներում մինչ օրս որպես օւմանցի են ներկայացվում: Սակայն նրանց գործերի ուսումնասիրությունը այն չի հաստատում: Գ.Քամպորճյանն իր հերթին հայկականությանն է վերադարձրել մի շարք հանրահայտ ու սիրված աշուղների, ինչպիսին է օրինակ Զարաջառլանը¹: Ի դեպ, մինչ օրս Թուրքիայում կազմակերպվող գիտական նստաշրջաններում այն որպես քուրք աշուղ է ներկայացվում: Գ.Քամպորճյանի գործընկերներից մի քանիսի, մասնավորապես նրանց հայերենի դասեր առած Սաքը Քոզի, Թուրքուր Քորի համար առանձին ուսումնասիրության առարկա են դարձել Արևելքում սիրված ու տարածված մի քանի սյուժեներ: Այն է՝ Քյոռ Օղլու և Արևելքում տարածված սիրային մյուս հայտնի քալաղները, Նասրեդյին Հոջայի առաջներն ըստ հայկական (հայերեն և հայտառ քուրքերեն) երկու տասնյակից ավելի տպագրությունների, սիրային պատմություն-հեքիաթ-

1 Նա եղել է մի քանի Զարաջառլաններից ամենահայտնին ու տաղանդավորը: Հայազգի աշուղների քուրքացման դեմ են ուղղված հայ ազգագրագետ-երածխտագետների մի շարք ուսումնասիրություններ: Վերջիններիս թվում է հարյուրավոր հայ աշուղների քուրքերեն (հայտառ քուրքերեն) ստեղծագործությունների ուսումնասիրությանը նվիրված պղսահայ մտավորական, գիտնական, երևանյան համալսարանական շրջանի իմ դասախոս, երջանկահիշատակ Խաչիկ Աճիրյանը: Նրա գրքում կգտնեք քազմաքիվ «քուրք» աշուղների սիրված ու հանրահայտ ստեղծագործություններ: Զարաջառլանը (Կարսպետ Դիլան) մարաշցի, քուրքերեն լեզվով ստեղծագործած 18-րդ դ. հայունի աշուղ է, որին չպետք է նույնացնել 17-րդ դարի Զարաջառլանի հետ: Որոշ սիրված մեղեղիների համար ժամանակի ընթացքում տարբեր աշուղների կողմից նորանոր քառեր են գրվել և հակառակ՝ հանրահայտ նոյն քանաստեղծությունը հետազայտմ տարբեր հորինողների կողմից նոր մեղեղի է ունեցել:

ները, որ երկրով մեկ իրենց քափառումների ժամանակ սիրում էին պատմել, կատարել բուրք դերվիշներն ու քանասացները, հայ աշուղները: Բազմաթիվ աշուղների ու նրանց ստեղծագործությունների մասին Գ. Քամպուրճյանի հոդվածների կարևորությունը չի սահմանափակվում վերջիններիս ունեցած գիտական նորությամբ: Այս ուսումնասիրությունները ապացուցում են շատ ու շատ հայտնի աշուղների հայագի լինելու հանգանանքը, նրանց ժառանգության հայկական մշակույթի մաս կազմելու փաստը և դրանց բուրքացման ձգտումներին խոչընդոտելու մատենագետի ազնիվ մղումը:

«Tarih ve Toplum» ամսագրում պարբերաբ լույս են տեսել հոդվածներ, նվիրված Օսմանյան կայսրության տարածքում ապրած ժողովուրդների, նրանց մշակույթի և որ ամենակարևորն է՝ սեփական այրութենով, սակայն բուրքերին գրական ժառանգությանը: Դրանց թիվը շատ է՝ հունատառ, արաբատառ, սլավոնական, սողոկան, չինական, հրեական և այլ գրչությամբ ստեղծված գրականություններ:

Հայատառ բուրքերենին և հայատառ դիշաղական գրականությանը ևս անդրադարձներ են եղել օտար և բուրք հետինակների կողմից¹: Հետինակներից ոմանք, որոնք կապված են եղել պոլսահայ մքնուրութի, մտավորականության և հրատարակչական տների հետ, բացառիկ հնարավորություն են ունեցել նյութը ներկայացնել գիտականորեն շատ ավելի պատշաճ տեսքով: Ոմանք էլ հայատառ դիշաղերեն գրականությունը փորձել են ներկայացնել որպես «կամովին դիշաղացած հայերի մշակույթ»²:

-
- 1 Talat Tekin, Ermeni Alfabesiyle Türkçe, Tarih ve Toplum, 1984, N 16, s. 6-9.
 - 2 Հայ-դիշաղական ու նրանց հետ առնչվող խնդիրների լսվագույն գիտական ուսումնասիրությունն ըստ մեզ՝ Յարուսավ Դաշկեսիչի աշխատասիրություններն են: Լվովցի ականավոր արևելագետի ուսումնասիրությունների մեծագույն գիտական արժանիքներից մեկն էլ այն է, որ բվում է, թե Վերջնականապես ջրում է թյուրքագիտության մեջ այն է, որ բվում է, թե Վերջնականապես ջրում է թյուրքագիտության մեջ նույն խնդրի շուրջ հնարովի, անհիմն ու հսկագիտական տեսակիտները, մինչ օրս շարունակվող միտումնավոր, կեղծ ուսումնասիրությունները: Սևնք նկատի ունենք առավելապես ուկրախնացի գիտնական Ա. Գարկավեցի հրատարակությունների այս բնագավառում: Տես՝

Գ.Բամպուրճյանն ուսումնասիրության նյութ է դարձել գեղարվեստական գրականության որոշ օրինակներ, երկրով շրջող բազմազգ աշուղների ու նրանց տաղարանների մասին, ժողովրդական երգեր, սուլքանների, վեզիրների մասին դիստանցներ, ձեռագիր բառարաններ ու մինչ այդ անհայտ չափած գործեր: Որպես կանոն, այս հրատարակությունների հայկական տարբերակներում անգամ երգերը հնչել են բուրքերեն, իսկ գրվել՝ հայատառ բուրքերնենով: Այսպիսի հոդվածներով Գ.Բամպուրճյանը բազմից հանդես է եկել բուրքական բանահյուսական նյութեր հրատարակող «Türk Folklor», «Türk Folklor ve Etnogafya Araştırmaları», «Halk Kültürü», «Türk Tarih Kurumu Belleten», ամսագրերում¹: Արանք հիմնականում եզակի նյութեր են, պատմական որոշակի արժեք ներկայացնող ձեռագրեր: Թուրքական բանահյուսության հայկական հրատակությունները, որ գրադեցրել են Գ.Բամպուրճյանին թիշ չեն եղել: Այս նյութերի գերկշռող մասը չափածու է և այժմանի ուսումնասիրողների ուշադրությանը: Հայատառ բուրքերնենով գրականությանն ու պարբերականներին նվիրված նրա ուսումնասիրությունները հայերեն լույս են տեսել Պոլսու Պատրիարքարանի «Ծողակար» ամսագրում կամ սփյուռքի հայաբերքերում: Նույնի բուրքերեն հրատարակությունները գտնում ենք արդեն մեզ ծանոթ բուրքական ամսագրերում:

Արևմտահայ միջավայրում տարբեր առիթներով հայ անհատներին տրված սուլքանական ֆերմանների ուսումնասիրությունը կարեւոր է հայ-բուրք հարաբերությունների, սուլքան, պալատ և հայ պաշտոնյա փոխհարաբերությունների ուսումնասիրության առումով: Հայ քրիստոնյաներին շնորհված սուլքանական հրամա-

Я.Дашкевич. Кто они “Армяно-крымчаки”. Բանքեր Մատենադարանի, Երևан, 1994, 16, էջ 58-110.) Տես նաև Ярослав Дашкевич «Вірменія і Україна - Armenia and Ukraine by Yaroslav Dashkevych», Львів-Львів Зорр 2001 р. էջ 420-482, հորեւանական հրատարակություն:

¹ Türk Folkloru, 1979, N, 5, s.4-5. Türk Folkloru, 1980, N, 10, s.411-13. Halk Kültürü, N.3, 1984, s. 97-102, Halk Kültürü, N.4, 1984, s. 145-148 և այլն:

նազրերը ապացույց են Օսմանյան կայսրության կյանքի տարբեր ասպարեզներում հայ հավատակների ունեցած նշանակալի ներդրման, նրանց հավատարիմ ծառայության նկատմամբ սուլթանների ու Բ.Դուան զնահատանքի:

Սուլթանական շնորհների, հատուկ ֆերմանների, շքանշանների, վարձատրությունների են արժանացել ոչ միայն պալատում ծառայած ամիրայական դասի ներկայացուցիչները, այլև տարբեր ոլորտներում հաջողություններ ունեցած, անձնագործ վերաբերմունք ու զործունեություն ծավալած, երկրի քարօրությանը նվիրված հայեր, այդ թվում նաև՝ հոգևոր դասի ներկայացուցիչներ, պատրիարքներ: Իհարկե, երբեմն դրանք տրվել են նաև հավուր պատշաճի, որևէ կարևոր իրադարձության առիվ: Սրանք պատմական վավերաբերի կարևորություն ունեն և նրանց ուսումնափրությունը արժանի է: Ինտարքքրության: Նկատենք, որ պալատի և Բ.Դուան հայերի հետ կապված յուրաքանչյուր նորություն, պարզեատրում անմիջապես լայնորեն արձագանք են գտնել պոլսահայ հայագիր և հայատառ քուրքերեն պարբերականների էջերում:

Գևորգ Բամպուրցյանն ուրույն ավանդ ունի ձեռագիր և տպագիր քառարանագիտության ուսումնափրության մեջ: Նա այդ մասին հոդվածներով հանդիս է եկեղ քուրքական «Tarih ve Toplum» ամսագրում¹:

«Ermeni Harflı Türkçe Yazma Sözlükler» (Հայատառ քուրքերեն ձեռագիր քառարաններ) հոդվածում անդրադառնում է հայ-քուրքերեն, քուրք-հայերեն, ինչպես նաև քազմակերպ (արաբերեն, պարսկերեն, դիշաղերեն, գերմաներեն, ֆրանսերեն, հունարեն, խոպերեն, լատիներեն, օսմաներեն լեզուների տարբեր համադրությամբ) քառարաններին, որոնք զրի են առնվել հայ գրչության տարբեր կենտրոններում Պոլսում, Երուսաղեմում, Լեհաստանում, Հունգարիայում:²

1 Kevork Pamukciyan, «Ermeni Harflı Türkçe Yazma Sözlükler», «Tarih ve Toplum», 1986, ocak, N, 25, s. 52-54.

2 Հ.Ստեփանյան, Հայատառ քուրքերեն ձեռագիր քառարաններ, ՀՀ ԳԱԱ Պատմա-քանախրական հանդիս Երևան, 2005թ., հ.2(169), էջ 250-255:

Տարբեր տարիների նույն «Tarih ve Toplum», «Tarih» կամ օրինակ «Muallimler Mecmuası»¹, Թուրք պատմական ընկերության Անկարայում հրատարակվող գիտական «Belleten» ամսագրում քիչ շեն եղել հայկական պատմությունը, մշակույթը և նրա երախտավորներին արատավորող զրայարոիչ հոդվածներ: Սա Թուրքիայի «Պատմական ընկերության» քաղաքականության բնական արտացոլումն է, ըստ որի կանխամտածված կերպով պատմության խեղարյուրումը ժամանակ անց ընկալվելու էր որպես զուտ պատմություն, վեր հանելով բուրքական «ճշմարտությունը» և Օսմանյան կայսրությունում հայերի ներդրման նկատմամբ ապերախտ վերաբերմունքը, կեղծը իրականի տնջ ներկայացնելու հակահայ ծրագրված քաղաքականությունը: Այդպիսի իրապարակումների հեղինակները ոչ միայն ազգությամբ բուրք, այլև Թուրքիայում կամ արտասահմանյան բուրքազիտական կենտրոններում զբաղված օտար գիտնականներն են եղել: Սովորաբար նման հոդվածներին հետևել են Գևորգ Բամպուրճյանի վերջիններիս հոդվածների նյութերը հերքող, փաստացի զուսպ հոդվածները: Այսպիսի օրինակներից կարելի է համարել դեռևս 1924թ. ի վեր հայ մշակույթի ամենակարևոր կենտրոններից Մխիթարյան միարանության դեմ կազմակերպված հարձակումները, որին 1982թ. սկսած հետևել են բամպուրճյանական անհերթելի փաստարկներով պատասխանները²: Այն հնարավորինս սեղմ ներկայացրել է մխիթարյանների ու նրանց արևելագիտության, օսմանազիտության ասպարեզում ունեցած մեծագույն ներդրումը՝ հատվածարար հակադրվելով գեղծարար հեղինակների հոդվածում առկա խեղարյուրումներին ու շինծու մեղադրանքներին: Զագրախոսների հոդվածները Մխիթարյաններին չարականորեն համարում էին արտասահմանում հայերի խարդավանքների, հակաքուրք տրամադրություններ տարածող վանքեր:

1 Mahmut Şakiroğlu, Mıkhitarist Rahiplerin hakkında..., «Hürriyet», İst., 1982, 16 şubat.

2 Kevork Pamukciyan, Mıkhitaristler Hakkında, «Tarih ve Toplum», 1986, N 28, s. 46-47.

Իհարկե, Պոլսի և զավառի շատ երիտասարդներ, պոլսահայ մտավորականության և պաշտոնյաների որոշ մասն իրենց ուսումը ստանում էին Վենետիկի, Տրիեստի, ապա՝ Վիեննայի Միսիքարյան միարանության վարժարաններում: Այն բազմալեզու կրոպուրյան բացառիկ որակ էր ապահովում: Միսիքարյանների մշակութային, գիտական ու հրատարակչական գործունեությունը առանձնակի վերաբերմունք էր նվաճել Եվրոպայում: Միսիքարյանները մեծ համարում ունեին արտասահմանում, մեծագույն հարգանք էին վայելում գիտական, մտավորական շրջանակների կողմից, միավորում էին հայերին, անկախ նրանց կարողիկ կամ առաքելական լինելուց: Միսիքարյանները գտնվում էին Հռոմի, պապական հովանավորության ներքո: Վենետիկ էին այցելում անգամ Եվրոպական երկրներ ուղևորվող քուրքական բարձրաստիճան պատվիրակությունները, դիվանագետները: Եվ այս վանքերը դուրս էին քուրքական վերահսկողությունից: Չեր կարող մոռացվել, որ միարանության հիմնադիր Միսիքար Սերաստացին քուրքական հետապնդումներից հալածվելով էր այստեղ խարիսխ գցել, կենտրոնը դարձրել միջազգային ճանաչման ակադեմիական հաստատություն:

Միսիքարյաններին զրաքարտող պարբերականներում տպագրվել են այդ հոդվածագիրներին դիմակազերծ անող բամպուկճանական պատասխանները: Ժամանակ առ ժամանակ նման ոճի հակահայ հոդվածներին արժանի պատասխան տրվելուց հետո, դրանց էջերում շարունակվել են տպագրվել քուրքագիտությանը նպաստ թերող, Օսմանյան կայսրության պատմությանը վերաբերող, հայ ժամանակագիրների հայտնի և մինչ այդ անհայտ աղբյուրներ, որոնք հիմնականում հայատառ քուրքերնենով են եղել: Ներկայացվել են դրանք ժամանակակից լատինատառ քուրքերն տառադարձությամբ: Դրանցից է Մահմուդ Բ-ի մասին արդեն հիշատակված պատմական երեք ներքողները «Belleten» -ում:

1932թ. երբ հիմնադրվեց «Թուրքական պատմական ընկերություն» (Türk Tarih Kurumu), որպես ոգեկոչող բնարան ընտրվեց

Աքաբուրքի՝ «Պատմություն գրելը պատմություն կերտելու չափ կարևոր է» միտքը: Առաջնորդող այս ուղեցույցը պատճառ դարձավ, որպեսզի մինչ օրս միլիոններ տրամադրվեն արտասահմանյան համալսարաններում քուրքազիտական ամբիոնների և առանձին գիտական կենտրոնների հիմնադրման և գոյության համար: Ակնկալիքը մեկն էր՝ Միջազգային գիտական հասարակայնությանը ներկայացնել Թուրքիային «հարիր» հերոսական և անեղծ պատմություն: Տասնամյակներ շարունակ օտար գիտնականների կողմից հրատարակվեցին, հիմնականում անգլերենով, բուրքական պատմության բազմաթիվ հատորներ, որոնք միջազգային գիտական շրջաններում այնպես էլ լուրջ վերաբերմունքի չարժանացան: Վերոհիշյալ ամբիոնների ու առանձին գիտնականների նկատմամբ չափազանց շռայլ վերաբերմունքը, անգամ Թուրքիայում միջազգային գիտաժողովների ժամանակ օտար գիտնականների նկատմամբ անսահման ջերմ ընդունելության, նրանցից ոմանց նախագահական պարզևատրնան ու վերաբերմունքի ցույցերը շատ արդյունք չունեցան: Մենք վկա ենք եղել այդպիսի մի քանի գիտաժողովների Անկարայում, Իզմիրում, Կայսերիյում: Պատմությունը երբ մկանածին է՝ երկար կյանք ունենալ չի կարող: Խակ-գրել Թուրքիայի պատմություն, առանց այդ երկրում ապրած ժողովուրդների պատմության և այդ պատմությունների հիմք հանդիսացող աղբյուրների ուսումնասիրության՝ անհնարին է:

Մյուս կողմից, այսօր բուրքական գիտական հասարակության մեջ գոյություն ունի ամերիկյան և եվրոպական կրթություն ստացած համալսարանական երիտասարդ պրոֆեսորների մի խումբ, որոնք գուսավ վերաբերմունք դրսերելով հանդերձ արտասահմանի բուրքազիտական կենտրոնների գործունեության նկատմամբ, լրջորեն զբաղվում են իրենց երկրի իրական պատմության ուսումնասիրությամբ¹: Խակ մինչ այս կրթյալ խավի գործունեության սկսելը, Թուր-

¹ Երբ 2005թ. Ստամբուլում իրատարակվում էր իմ «Հայատառ բուրքերն զրբերի և պարբերական մասովի ցուցակը», մենք բազմաթիվ առիրներ ունեցանք հանդիպելու վերոհիշյալ խավի ներկայացուցիչների հետ:

թիայի պատմությունը, օսմանագլուությունը եղել է (մասամբ նաև մնում է) քաղաքական խնդիր, քողնելով քազմաքիվ անավարտ ու սպիտակ էջեր:

Այդ իսկ պատճառով գիտական իրական շահագրգիռ օդակ-ները ծգտել են հնարավորինս լրացնել քուրք ժողովրդի պատմության պակասող էջերը: Այս հանգամանքով ենք քացատրում Գևորգ Բամպուքճյան գիտնականի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքը, նրա գործունեությանն ու գիտական ժառանգության նկատմամբ խորին հարգանքի վերաբերմունքը:

Հաստատապես կարող ենք ասել, որ Թուրքիայի նոր պատմություն գրելու պետական այս քաղաքականությունը միջազգային գիտական շրջանակներում հաջողությամբ չպահպանվեց, եթե չասենք, որ այն հիմնականում հակառակ ազդեցություն ունեցավ:

Թուրքական գիտահանրամատչելի ամսագրերում (մասնավորապես Tarih ve Toplum, Türk Folkloru, Halk Kültürü, Tarih հրատարակություններում) Գևորգ Բամպուքճյանի որոշ հոդվածների¹ շնորհիվ երկար տարիներ այնպիսի մի մքնողութ էր ստեղծվել, որ կարևոր, գերիշխող գիտական միտքը ներկայացնելն էր: Ակնհայտ էր հայ գիտնականի նկատմամբ քացահայտ հետաքրքրությունը: Համարյա յուրաքանչյուր համարում զտնում ենք Գ. Բամպուքճյանի ու հայ այլ հոդվածագիրների ուսումնասիրությունները, ինչպես նաև քուրք և օտար որոշ հեղինակների հրապարակումները, որոնք այս կամ այն կերպ առնչվում են հայերի հետ: Որոշներում հայկա-

Նրանք վեր էին իրենց պատմության կեղծ ներկայացումներից և պատրաստ էին ընդունել ու հրատարակել իրական, գիտական արժեք ներկայացնող գործեր, անկախ հեղինակների ազգային և կրոնական պատկանելություններից:

1 Սևնք նկատի ունենք այն հոդվածները, որոնցում Գ. Բամպուքճյանը պատասխանում է հայերի կամ հայկական մշակույթի դեմ ուղղված նվազագույն գրապարտանքներին, ինչպես նաև «նամակների բաժնում» լույս ընծայված հոդվածներին, որը մատը դնում է ընդիամուր առնամբ հրապարակված նյութերում թերությունների, վրիսակների, բացրդումների վրա, կատարում օգտակար լրացումներ:

կան աղբյուրների առատորեն օգտագործմանն ենք հանդիպում ոչ միայն տողատակերուս և ծանոթագրություններում, այլև բուն տեքստում: Համեմատաբար շատ են անդրադարձները նշանավոր հայագետներ Երեմիա Քյոմուրճյանի, Սլրայել Չամչյանի, Մադարիա Օրմանյանի, ինչպես նաև մեր ժամանակակիցների՝ Հայկ Բերբերյանի, Գառնիկ Ստեփանյանի, Ավետիս Սահմանյանի, Գևորգ Բարդակչյանի, մերև և այլոց աշխատություններին: Դրանցից մի քանիսը հայտառ բուրքներն զրականության մասին են: Այս հոդվածները ևս իրենց կարևոր լրացումներն են ունենում հանձինս Գևորգ Բամպուրճյանի, անգամ ամսագրերի «նամակների բաժնում»: Հոդվածներ, որոնք առանձին աշխատությունների արժեք են ներկայացնում¹: Սա նաև թարք և թրքախոս լնթերցողներին հայկական աղբյուրների կարևորությունը ներկայացնելու, նրանց հայ հեղինակներին ծանոթացնելու նրաշալի հնարավորություն է եղել²:

Գ. հատորը՝ «Zamanlar, Mekânlar, İnsanlar» (Ժամանակներ, բնակավայրեր, մարդիկ) ներառում է հայ երևելիների, մասնավորապես՝ ամիրայական ընտանիքների, Օսմանեան կայսրության կյանքի տարրեր բնագավառներում հայերի ունեցած ներդրութեղի, կայսրության ու սուլթանների կյանքի առանձին դրվագների մասին հայկական աղբյուրների հրատարակությունները և դրանց առթիվ Գևորգ Բամպուրճյանի տպագրած առանձին գիտական ուսումնասիրությունները:

Այդ հատորում տեղ են գտել Գևորգ Բամպուրճյանի նաև այն հոդվածները, որոնք նա գրել է ի պատասխան թուրքական մամու-

1 «Tarih ve Toplum», 1984, N, 6, s. 4 «Tarihi ve Toplumi», 1985, N, 6, s. 2.

2 Այսպես օրինակ, բուրք բատրոնի պատճառամ, ականավոր գիտնական Սերին Անդն իր Թանգիմարի (Բարեփոխումների) շրջանի բուրք բատրոնի պատճորյան շարադրումը կատարելէ հիմնականում Գառնիկ Ստեփանյանի «Ուրվագիծ Արևմտահայ բատրոնի պատճորյան» եռահատորյալի և առանձին դերասան-դերասանութիներին նվիրված աշխատությունների բարգմանության իման վրա և այս մասին բարեխնդորնեն նշում է իր «Պատմության» համարյա բոլոր էջերում:

լում տպագրված հակահայկական, կամ հայ իրականության որևէ խնդրի առթիվ աղավաղումներ պարունակող հոդվածներին: Մեղմ, գուսաց գրչով, գիտական ու պատմական անհերքելի փաստարկներով ի շիք են դարձվել կանխամտածված հարձակումները, հերյուրանքներն ու հակահայկան մթնոլորտու շիկացնելու ճգոտումները: Դրանց շուշացող բամպուքճյանական պատասխանները նպաստել են հայ և բուրք մշակույթների կամքջմանը, հնարավորինս, գոնի իր աշխատակցած հրատարակություններում կանխել է մեր մշակույթի, պատմության շուրջ մտածածին գործերի, խեղաքյուրումների բվի աճը: Մընոլորտին մեծապես նպաստել է նրա բարեխիղճ ուսումնասիրողի մեծագույն հարգանքի արժանի կեցվածքը:

Նա՝ որպես հրաշալի գիտակ արևմտահայության կյանքի ամենասարքեր ոլորտներին առնչվող պատմական աղբյուրների, լավագույնս էր պատկերացնում Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդներին միշտ բռունցքի մեջ պահելու, միմյանց դեմ շարունակական թշնամանք սերմանելու քաղաքականությունը: «Բաժանիր, որ տիրես» բուրքական դիվանագիտության նպատակը՝ հպատակ քրիստոնյա ազգերի միավորվելու, ընդդեմ կայսրությանն ուղղված բոլոր հնարավոր ուղիները փակելու էր: Դրա արտահայտություններից են եղել պալատի կողմից մի ժողովրդի եկեղեցին Վերցնելու ու մյուսին տալը, եկեղեցիներ քանդելը, նրանց ահռելի տուրքերով քեռնավորելը: Բնականարար նման քայլերը թշնամություն, ատելություն էին սերմանում այդ ժողովուրդների միջև: Սի շարք հայկական աղբյուրներ վկայում են այս մասին: Գևորգ Բամպուքճյանն է և անդրադարձել այս ցավոտ խնդիրներին, գրելով հայերի կողմից որոշ եկեղեցիների հիմնադրման պատմությունը ըստ տարբեր ժամանակագիրների պատմությունների: Այդպիսիներից է Գումզափը Հայոց Պատրիարքարանի եկեղեցուն նվիրված հոդվածը¹:

Գ հառորդ սկսվում է Գևորգ Բամպուքճյանի նախընտրելի հեղինակի՝ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի մասին հոդվածաշ-

1 Tarih ve Toplum, 1986, N, 35, s.39-41.

րով, նվիրված Վերջինիս ծննդյան 350 ամյակին: Նախապես այն տպագրվել էր 1988 թ. «Tarih ve Toplum» ամսագրի մի քանի համարներում: Հողվածաշարը ծանոթացնում է Ջեմախում ծնված Ջյոնուրճյանի տոհմածառին, ընտանիքին, նրա անցած ուղուն, զավակներին և իհարկե նրա բողած աղյուրազիտական ու գրական անգին ժառանգությանը: Այն և՝ հայագիտության, և՝ օսմանագիտության համար եզակի արժեք է ներկայացնում: Ջյոնուրճյանի կենսագիրներն ու նրա երկերի ուսումնասիրողները, բարգմանիչներն ու հրատարակիչները ևս իրենց ավանդն ունեն արևելագիտության այս հսկայի գործերը արժևորելու խնդրում¹:

Կյանքի Վերջին տարիներին Գևորգ Բամպուրճյանն իրեն հատուկ ջանասիրությամբ ծանոթագրեց, խմբագրեց ու թուրքենով հրատարակեց Երևանի Զելեպի Ջյոնուրճյանի տեղագրական եռահատոր գործը՝ «Ստամպոլայ պատմութիւն»-ը: Հաջորդը Երևանի Զելեպի Ջյոնուրճյանի «Պատմութիւն Հրակիզման Կոստանդնուպոլսոյ (1660թ.) երկն է, որ նա հայերենով հրատարակեց Թուրքիո Հայոց Պատրիարքության իր խմբագրած «Շողակար» պատմաբանասիրական Մատենաշարում (Ստամբուլ, 1991, 184 էջ): Գևորգ Բամպուրճյանն այն ծոնել է իր մեծ մոր՝ Մահտեսի Տիգրանուի Լուսարարյանի հիշատակին:

Միքայել ա. քահանա Երամյանի «Պատմութիւն Արմաշու» գործը նրա ջանքերով հրատարակվեց Երևանում, 1991թ. (70 էջ):

18-րդ դարի Վերջերին ստեղծված 80 էջերից քաղկացած Աւամբուլի տեսարաններով հրաշալի փորագրանկարները տեղ են գտել 1794թ. Բասսանո իտալական քաղաքում տպագրված «Աւամ-

I Հատկապես արժեքավոր է Բոլոմիայի համալսարանի հայագիտության ամբիոնի պրոֆ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Գարբիելա Ովուհովյանի (1934-2016) կողմից Բոլոմիայի գրադարանում պահպանված Եղիա Ջյոնուրճյանի կազմած հայկական եկեղեցիների և սրբավայրերի քարտեզի հայտնաբերումն ու գիտական հրատարակությունը (Un' antica mappa dell'Armenia. Monasteri e santuari dall'al XVII secolo, Ravena, 2000). Եղիա Ջյոնուրճյանն այն կազմել էր 1691թ. կոմս Մարտիրի պատվերով:

բովի տոպոգրաֆիկ նկարագրությունը» (Descrizione Topografica dello stato presente di Costantinopoli) գրքում: Փորագրանկարների հեղինակը նահատակ կարողիկ քահանա Կոմիտաս Քյոմուրճյանի (1656-1707) քոռն է: Խտախայում կրթություն ստացած, դիվանագիտական ներկայացուցչությունների քարգման, պատմաբանու նէարիչ Կողմաս-Կոմիտաս Քյոմուրճյանը (Cosimo Comidas de Carbognano, 1749-1807)¹, դրամը ներկայացրել է «Cosimo Comidas del» ստորագրությամբ:

Կողմաս-Կոմիտաս Քյոմուրճյանի մասին հոդվածը հետաքրքիր է, մանավանդ որ մինչ այդ նրա կյանքի կամ գործերի մասին բոլոր քերեն աղբյուրներում չափազանց թիշ բան կար: Հիշվում էր սոսկ պուսեցի լինելու և դեսպանատներում քարգմանչի նրա գործունեության մասին: Հայկական աղբյուրներն ավելի հարուստ են եղել: Ավելին, Վենետիկի Ս.Ղազար կղզու Սիփրարյան հայրերից Սահակ Շեմմեմյանը Գեորգ Բամպուրճյանին է ուղարկել «Descrizione Topografica di Costantinopoli» –ի լուսապատճենը, որը նպաստել է հեղինակի մասին նյութն ավելի հարատացնելուն: Հոդվածի վերջում տրվում է Քյոմուրճյան գերդաստանի տոհմածառը:

¹ Այս գիրքը բուրքերենի է քարգմանել և 1993թ. տպագրել պրոֆ. Էրենիկ Օգրայողուն: Երկրորդ գիրքը նվիրված է խտանենով բուրքերենի թբականությանը՝ (Primi Principal della Grammatica Turca, ad uso dei Missionari Apostolici di Costantinopoli. Հռոմ, 1794 XVII+730էջ) և երրորդը՝ իր պապի վարքագրությանն է, որը հրատարակվել է Հռոմում 1807թ. (Ristretto della vita e martirio del servo di Dio D.Cosmo de Carbognano): Այն ըրվել է 8 հայ և օսուար հեղինակների երկերի հիման վրա: Պոյսոն Հայոց Պատրիարքարանի բողոքի հիման վրա բորբական կառավարության կողմից մահապատճի ենթարկված հայ քահանայի նահատակության վատմությունը չափազանց երկար ժամանակ շահարկվել է Հռոմի կողմից, հայ առաքելականների ու կարողիկների միջև թշնամությունը խորացնելու նպատակով: Այս թեմայով գրված պիեսը բուրքերեն լազմով տարիներ շարունակ թհմադրվել է Վենետիկի Սիփրարյանների դպրոցական քատրոնի թեմում: Այն մի քանի հայատառ բուրքերեն տպագրություն է ունեցել՝ 1798, 1862թթ. Տրիեստում, Պոլսում: Կողմաս-Կոմիտաս Քյոմուրճյանը Պիոս 7-րդ պապի (1800-1823) կողմից պարզւատրվել է St. Sylvestre շիանշանի ասպետի ժապավենով:

Թուրքական և Եվրոպական քանգարաններում ու մասնավոր հավաքածուներում հայերի ստեղծած գեղարվեստի արժեքների, մասնավորապես ոսկերչության, գեղանկարչության մեջ արևելյան, բուրքական թեմաներով արվեստի գործերը մեծ թիվ են կազմում: Այն Օսմանյան կայսրության նկատմամբ Եվրոպական տերությունների հետաքրքրության, նրա նկատմամբ գաղութատիրական վաղեմի մղումների արտահայտություններից է:

Հայ հեղինակների Օսմանյան կայսրության մասին գրած պատմությունների շարքում Բամպուրճյանը բուրքալեզու ընթերցողներին ծանոթացնում է քանասեր, պատմաբան Գարբիել արք. Այվազովսկու¹ (1812-1880), 1841թ. Վենետիկում հրատարակված «Պատմութիւն Օսմանեան պետութեան» եռահատոր գրաքար աշխատությանը և հեղինակին: Թուրք ընթերցողին մանրամասն ներկայացնելով «Պատմության» ընդգրկած շրջանակները (օսմանցիների ծագումնաբանությունից մինչև Սահմուլ Բ սուլթանի շրջանը), Գևորգ Բամպուրճյանն հարկ է համարում հուշելու, որ Գարբիել արք. Այվազովսկին հայազգի մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու (1817-1900) ավագ եղբայրն է: Դումարակիչ պալատն են զարդարում վերջինիս շուրջ 28 կտավները, իսկ հայոց Պատրիարքարանում մի քանի մեծ շափսերի հրաշալի գործեր են: Տարիներ առաջ Ստամբուլում, բուկինիսատի մոտ հանդիպեցինք Այվազովսկու նկարները ներկայացնող բուրքերեն պատի օրացույցի:

Գարբիել արք. Այվազովսկու «Պատմությանը» նվիրված 1986 և 1988 թվականների հոդվածներն առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում: Առանց նման ուսումնասիրությունների Թուրքիայի պատմությունը կմերկայանար անհամար ճերմակ էցերով, լսեղաբյուրված, շատ հնոր գիտական պատկերացումներից:

Հաջորդը՝ 1848թ. անանուն հեղինակի «Հատընտիր Պատմութիւնը Վարուց Օսմանեան Թագաւորաց եւ Վեգիրաց» գրաքարով

1 Kevork Pamukciyan, "Ayvazovski'nin Osmanlı Tarihi" Tarih ve Toplum, 1986, N, 35, s. 60-63. Kevork Pamukciyan, "Ayvazovski'nin Osmanlı Tarihi" Tarih ve Toplum, 1988, N, 54, s. 26-34

գրված երկի քնազրի վեմետիկյան հրատարակությունն է, տպագրված Փարիզում: Ա. Նազարի Մխիթարյան միաբաններին հյուրընկալված, Ֆրանսիայում Օսմանյան կայսրության դեսպան Սովեյման փաշայի ծախսով և օսմաններն առաջարանով տպագրված այս երկը կազմված է 152 էջերից: Թուրք դեսպանների ու Մխիթարյանների նման բարի համագործակցության օրինակների էլի ենք համոլիպում: Փորագրանկարները ուսանողներն են կատարել:

Հայկական մատենագրության մեջ կան կայսրության վեգիրներին նվիրված մի քանի այլ ձեռագրեր: Դրանցից մեկի՝ Երկու հարյուր տարվա վաղեմություն ունեցող անանուն հեղինակի **Մահմուտ Փաշայի** (-1474) մասին պատմող ձեռագրի բուրքերնն են հրատարակել Գևորգ Բամպուրճյանը¹: Այս և նման աղբյուրներից յուրաքանչյուրն աշքի է ընկնում տվյալ ժամանակաշրջանի մասին մինչ այդ անհայտ, պատմության վրա լույս սփոռող փաստերով:

Մի քանի հոդվածներ նվիրված են բուրքական սովորանների կամ բուրք երեւելի անձանց կյանքը փրկած անձնազողի հայերի պատմությանը: Օսմանյան սովորաններին վերաբերող այս շարքում Գևորգ Բամպուրճյանը հոդված է նվիրվել մի հայի, որը 1544թ. Հոնգարիա կատարած արշավանքի ժամանակ Բուղա քաղաքում փրկել է Սուլեյման Ա. Կանունիի (1494-1566) կյանքը, երբ նրան ուզում էին բունափորել²: Մանուկ Քարասեֆերյան անունով հայ խոհարար արգելում է սովորանն որևէ քան ուստեղ կամ խմել: Սովորանն իր փրկարին երախտապարտ լինելու համար, հարցնում է, թե ի՞նչպես կարող է նրան պարզեւատրել: Մանուկը ստամբուլահայերի համար մի գերեզմանատան հրաման է խնդրում: Սովորանը Բանկալը գերեզմանի մի մասը, «Թարսիմից մինչև Հարքիյն Սեքըեր» ընկած տարածքը տալիս է հայերին, իսկ Մանուկին՝ Վանում հողեր է նվիրում: Վերջինս այնտեղ տներ, գյուղեր է կառուցում, որոնք սերնդն սերունդ պատկանում են Քարասեֆերյան ընտանիքին:

1 Tarih ve Toplum, 1986, N, 32, s.9-13.

2 Tarih ve Toplum, 1987, N, 43, s.16-18.

Աքարտուրի ծննդյան 100 ամյակի առջիվ գրած նմանատիպ մի հոդվածում՝ էլ Սերձավոր Արևելքի երկրների բոնցքամարտի շեմ-պիսն Հակոբ Թոմբալյանն ու նրա հայրը՝ Կարապետը պատմում են այն մասին, որ Վերջինս իր վրա կրելով հարվածը (1919թ. մայիս) փրկել է Աքարտուրի կյանքը՝ գիշերը նրա վրան մտած դաշույններով զինված երեք մարդասպաններից: Հայերի կողմից խիզախության նման մի քանի այլ պատմությունների մասին է իր հոդվածներում հիշեցրել Գևորգ Բամպուրճյանը²:

Պիտի խոստովանել, որ 1950-60-ական թվականները, որ Բայարի նախագահության և Սենյերեսի վարչապետության շրջանն է, ինչպես Շնորհը արք. Գալուստյանն է ասում, «խսկական ժողովրդավարության և փոքրանասնությունների ուսկեղարք»՝ եղել, իհարկե բացառությամբ 1955թ. սեպտեմբերի 6-7ի Պոլսի և Իզմիրի հականայ և հականույն բռնարարքների, որ հրահրվել էին ծայրահեղական աջ ուժերի կողմից³: Այնպես որ այս շրջանում հայերի մշակութային կյանքը ևս նկատելի աշխուժացում է ապրել, իսկ բամպուրճյանական հոդվածների համար բարենպաստ մքննողրտն ապահովված է եղել:

Բամպուրճյանը գրել է Էնվեր փաշայի մահվան մասին, հիմնվելով հիմնականում «Սովետական Հայաստան» թերքի վրա, որին հավելել է իր մոր (որը 1915 թ. Դամասկոսում էր եղել) պատմությունն այն մասին, իբր «Էնվեր փաշան Պոլսից եկած հայաշինց իրանանին պատասխանել է, թե տեղի հայերը փրկվել են՝ ընդունելով մահմեղականություն»: Գ. Բամպուրճյանը շի խորշել անդրադառնալ բուրքական մքննողրտի համար պատմական կմնութ դեպքերին անդրադառնալուց: «Էնվեր փաշան ինչպե՞ս է մահացել» հոդվածը տպագրվել է մեզ հայտնի «Tarih ve Toplum» պարբերականում⁴: Հիմնական

1 Tarih ve Edebiyat Mecmuası, 1981, N, 5, s.83-85.

2 Քուլս ամսագիր, Պոլսի, 1981, h. 838, 15 էջ:

3 Կարեն Հ. Խանլարի, «Հայ բնակչութեան էրնոկրօնական վերակերպումները թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.)», Ե., 2005,էջ 65

4 Tarih ve Toplum, 1987, N 84, s.16-18. Այս հոդվածը տպագրվել է նաև

տեղեկուրյունները, որ օգտագործել է հեղինակը և ինչպես խոստովանում է մեզ ուղղված իր մի նամակում (16.12.1990), զիսավորաբար Հակոբ Մելքոնովի հուշերն են, ինչպես նաև 1984թ. «Սովետական Հայաստան» օրաբերի օգոստոսյան համարում և Հայկական Հանրագիտարանում (հ.7, էջ 397) Հակոբ Մելքոնյանին նվիրված հոդվածները: Հոդվածում տեղադրված են 1921թ. Բեղլինում նկարված (ծպտվելու նպատակով մորուսավոր) Էնվեր փաշայի և նրա սպանության կազմակերպիչ Հակոբ Մելքոնյանի դիմանկարները: Նա հակադրվում է Էնվեր փաշայի վախճանը «հերոսացնել» փորձողներին, նրա մասին քուրքական աղբյուրներում, մասնավորապես քուրք գրող, պատմաբան Շևքեր Սուրեյա Այդեմիրի (Sevket Süreyya Acedemir) «Մակեղոնիայից Միջին Ասիա» եռահատոր գրքում տեղ գտած որոշ տեղեկություններին հակադրելով իրական փաստեր: Ըստ Այդեմիրի «անհամեմատ փոքր թվարանակով բասմաչները անկարող էին Մելքոնովի նեկավարած զորքին դիմադրել», որն իրքն թե 17 հազար զինվոր է ունեցել: Մինչդեռ Մելքոնովի հրամանատարության ներքո եղել է ոչ թե 17 հազար, այլ միայն 1500 հեծյալ և 800 հետևակ: Բոլոր փորձերը, որ նպատակ են ունեցել հերոսացնել Էնվեր փաշայի սպանությունը, կենտրոնանում էին փաշայի ոչ մեծաքանակ զորքի դեմ անհամեմատ հզոր ուժերով հարձակվելու հնարքի վրա: Էնվերասերների այս խեղաքյուրված փաստը հակադարձվում է Գևորգ Բամպուրճյանի կողմից «Tarih ve Toplum» թուրքական հայտնի պարբերականում, փաստելով որ Էնվերի դիմաց են դրս եկել Մելքոնովի շուրջ 10 անգամ պակաս քիչ բանակը:

Հոդվածի վերջում հեղինակն անդրադառնում է նաև 10 օր անց

հայերենով՝ Մոնրեալի «Հորիզոն» թերթում: Այն խուճապ է առաջացրել թուրքամետ որոշ շրջանակներում: Բարվի «Կովկասի պատմության ուսումնասիրության կենտրոնների տեսօթեն Ռազվան Հոսեյնովը քամահրանքով է անդրադառնում դրան: «Հորիզոն»-ում «...ինչ որ մի Գևորգ Բամպուրճյան հոդվածում (4.02.1985թ.) գրում է Էնվեր փաշայի Գևորգ Բամպուրճյան հոդվածում (4.02.1985թ.) գրում է Էնվեր փաշայի պատմության պատմությանը, համարելով այն վրեժինդրություն, «1915թ. հայերի ցեղասպանության» զիսավոր մասնակցի և գաղափարախոսի նկատմամբ:

Թիֆլիսում տեղի ունցած Զեմալ փաշայի սպանության փաստին՝ հայ վրեժիննդիրների կողմից:

1973-85-ական թթ. ԱՍՍԼԱ-ի գործողությունները երկրագնդի տարրեր վայրերում ճեղքում են Հայկական հարցի հետ կապված «մոռացության և լրության, ժխտողականության և ուրացման մթնոլորտը»: Թուրքագետ մեր գործընկեր Անուշ Հովհաննիսյանն իր տարողունակ մի հոդվածում¹ վեր է հանում այդ տարիներին բուրքական և բուրքամետ մթնոլորտում հայերի մասին հերքական հասարարական կարծիք ձևավորելու, նոր քանաձևեր նշակելու գործընթացը: Եթե բուրքաբնակ, «հայեննակից» հայերը ներկայացվում էին որպես «մեր լավ հայերը», ապա հայկական սփյուռքի հայերը համարվում էին «ազրեսիվ, չարամիտ, դավադրություններ իյուսող, բուրքերին ատող»: Այս ամենը կոչված էր ձևավորելու բուրքական հանրային կարծիքը, հուսարով նաև՝ արհեստական խորխորատ առաջացնել աշխարհասփյուտ հայության միջև: Մինչ օրս Թուրքիան ջանքեր շի խնայում ԱՍՍԼԱ-ի դեմ հասարակական կարծիքը միշտ «վառ» պահելու քաղաքականությունը: Այս մասին հիշվում է Թուրքիայում անցկացվող համալսարանական համարյա բոլոր միջազգային գիտաժողովներում, դրանց հատուկ «պանելիներում»²: Ավելի վաղ Թուրքիայի արտգործնախարարությունը բուրք դիվանագետների հիշատակին հուշարձաններ ու հուշատախտակներ էր կանգնեցրել Սիդնեյում, Օստավայում, Հաագայում, Լիսաբոնում ու Վիեննայում: Շարունակվում են այս մասին ֆիլմեր նկարահանվել, գրքեր գրվել: Ամենազործուն օդակը, որը կարծես

1 Անուշ Հովհաննիսյան, «Թուրքիայի հանրության վերաբերմնը Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին», ՎԵՄհամահայկական հանդես, 2(38) ապրիլ-հունիս, Երևան, 2012թ., էջ189-198.

2 Այդպիսի բուրք-աղորքաշանական «բունափոր պանելի» մենք մասնակից ենք եղել 2007թ. հոկտեմբերին Անկարայում տեղի ունեցած ասիական և հյուսիսաֆրիկյան,արևելազիտական ամենահայտնի ICANAS -38 կոնքրետի շրջանակում: Այսուղ նկարահանվում էր Ֆիլմ, որ կոնքրետի մասնակիցները «համաձայն չեն» հայկական ցեղասպանության փաստի հետ:

թե ուղղորդում է այս գործընթացը, դա Թուրքիայի Արտաքին գործերի նախարարությունն է: Նա է ֆիլմերի նկարահանման հիմնական պատվիրատուն¹: Արդյունքը հայատյացության սերմնացանն էր, որը գուգահեռ զարգացվում էր բուրք և օտար գիտնականների կողմից՝ հակառելով արևմտահայության ներդրմանն Օսմանյան կայսրությունում և բուրք պատմության մեջ: Հարկ էր, որպեսզի Թուրքիան իր ժողովրդին և միջազգային ատյաններում բացարություններ տար իր երկրում կատարված ողբերգական դեպքերի, Սև Եղեռնի վերաբերյալ: 1987թ. Եվրոխորհրդարանը ընդունում է հատուկ քանաձև, որով դատապարտում է Հայոց ցեղասպանությունը և հիշեցնում Թուրքիայի պարտավորությունների մասին՝ ազգային փորբամասնությունների ու նրանց մշակութային ժառանգության պահպանման վերաբերյալ²: Այս շրջանում ստամբուլահայությունը չափազանց ծանր կացության էր մատնվել: Հարկ էր հիշեցնել, վերհանել դարեր ի վեր այստեղ ապրած հայերի մեծագույն ներդրումն ու արժեքը, որը բազմիցս փրկել էր Օսմանյան կայսրությունը կործանումից, հասցրել զարդումի աստիճանի, երկրի ամենատարրեր ոլորտներում ռահվիրայի դեր կատարել, արժանապատվորեն ներկայացրել Թուրքիան միջազգային ասպարեզում, լուսավորական շարժման առաջատար հանդիսանալով երկիր էր ներմուծել Եվրոպական քաղաքակրթությունը: Մշակույթ, գիտություն, արվեստ, երաժշտություն, տպագրական գործ, ճարտարապետություն ու քաղաքաշինություն, բժշկություն, գիտություններ, դիվանագիտություն, առողջապահություն, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, քանիկային, ապահովագրական ասպարեզներ...

Բամպուրճյանն առանձին հոդվածներ է նվիրել Պոլսու հայ համայնքում մեծ դեր խաղացած ամիրայական ընտանիքներին, ներկայացրել նրանց տոհմածառերը, գրծունեության ոլորտները: Նա

¹ Ermeni Haber Ajansı 11.04.2018.

² Text of the European Parliament's Resolution, 18 June, 1987, in "The Armenian Question Today", Glendale, California, 1988.

«İstanbul Ansiklopedisi»-ի համար գրել է **Պալյանների¹**, **Տատյան-ների²**, **Քեյլերյան³**, **Չոպանյան (Հովհանյան)⁴**, **Շեղափրյան⁵**, **Ազատյան⁶**, **Ազնավուրյան⁷**, **Նորատունելյան⁸**, **Փիշմիշյան⁹**, **Սերվերյան¹⁰** գերդաստանների, արքունի ճարտարապետ **Էղիբնեցի Հակոբ Խալֆայի¹¹** մասին:

Պալյան, Տատյան և Տյուզյան ընտանիքներից հետո չորրորդ, ամենահայտնի ընտանիքը **Պոլսում** համարվել է **Մանասների** ընտանիքը: Սա արքունի տաղանդավոր նկարիչների գերդաստան է եղել, որի ամենահայտնի անդամը գեղանկարիչ **Ռաֆայել Մանասների (1710-1780)**: Նրա մասին է գրել Բամպուրճյանն իր հոդվածում¹²: Գերդաստանի մի քանի **Ռաֆայելների** մեջ նա ամենատաղանդավորն է եղել և նրան մեծն Ռաֆայելի հետ են համեմատել: Բամպուրճյանի գործերում՝ կարմիր թելի նման ակնիայտ է նրա նորք վերաբերմունքը իր «հերոսների» գերդաստանի ծագումնաբանական խնդիրներին, ամուսնական և բարեկամական կապերին, նրանց գործունեության մանրամասներին (հնարավորինս օրացուցային ճշգրտությամբ՝ ուսումնասիրության առարկայի ծնվելուց շատ ու շատ ավելի վաղ շրջանից սկսյալ: Զուգահեռաբար նա նշում է նյուրի հետ կապված բոլոր աղյուրներն ու հետազոտողներին հնարավորություն ընձեռնում ավելին ու ավելին խմանալու: Այստեղ հատկանշական է վենետիկցի արքա **Թողերիներին** նվիրված մասը, քանզի նա

1 İstanbul Ansiklopedisi, 1960, c.4, İst., s. 2095-2097.

2 İstanbul Ansiklopedisi, İst., 1966, c.8, s. 4188. Tarih ve Toplum, 1997, N, 7, s.9-10.

3 İstanbul Ansiklopedisi, İst., 1961, c.5, s. 2699.

4 İstanbul Ansiklopedisi, İst., 1966, c.8, s. 4057.

5 İstanbul Ansiklopedisi, İst., 1965, c.7, s. 3537.

6 İstanbul Ansiklopedisi, 1960, c.4, İst., s. 1673.

7 İstanbul Ansiklopedisi, 1960, c.4, İst., s. 1726.

8 Tarih ve Toplum, 1988, N, 49, s.42-48.

9 Söz, 1996, N.49, s.9

10 Tarih ve Toplum, 1987, N, 46, s.23-28.

11 Tarih ve Toplum, 1989, N, 72, s. 24-25.

12 Kevork Pamukciyan, Ünlü Hassa Resmi Rapayel ve Eserleri (?-1780). Tarih ve Toplum, İst., 1987, N.40, s. 28-33.

նկարչի արվեստանոցի այցելուներից է Եղել և Ռաֆայելի մասին մեզ հայտնի առաջին գրավոր աղյուրի հեղինակը:

Տաղանդավոր արքունի նկարչի արվեստին են անդրադարձել ժամանակի հայ և օտար գիտնականները, առանձին կենսագիրներ: Այնուամենայնիվ Ռաֆայելի արվեստին անդրադարձնալը շատ կարևոր է նաև այն պատճառով, որ մենք համարյա թե անտեղյակ ենք այս անվանն ու տարրեր բանգարաններում, արխիվներում տեղ գտած նրա գործերին: Այս նկարչի մասին մենք համարյա ոչինչ չգիտենք և ոչ էլ նրա ու գերդաստանի հանրահայտ անունների ստեղծագործություններն ունենք Հայաստանում: Միայն վերջին տարիներին, շնորհիվ միջազգային ճանաչում ունեցող հայազգի հանրահայտ ու տաղանդաշատ արվեստագետ Կարռ Քյուրքմանի «Օսմանյան կայսրությունում հայ գեղանկարիչները» երկիստոր բանկարժեք բացահայտում-ուսումնասիրության, մենք կարողացանք հաղորդակից լինել ոչ միայն արքունի գեղանկարիչներ Մանասների, այև բազմարիվ անունների ու նրանց հրաշալի ստեղծագործություններին: Իհարկե, այս առքիվ շմորանանք մեր երախտագիտությունն ու հիացմունքն արտահայտել պղսահայ և նվաճնի գիտնական Կարռ Քյուրքմանին՝ նրա հրաշալի ալբոմ-ուսումնասիրությունների առքիվ¹:

«Tarih ve Toplum»-ի 1987թ. հունվարյան համարում Բամպոքճյանը մնել անզամ ևս գրում է 18-րդ դարի արքունի ականավոր նկարիչ Ռաֆայելի մասին: Այստեղ նա մանրամասնորեն սրբագրում է Ռաֆայել Մանասի մասին իր նախորդ հողվածում տեղ գտած որոշ անձություններ ու կարևոր լրացումներ է կատարում: Խսկական ուսումնասիրողին պատիվ թերող վերաբերմունք սեփական գործի նկատմամբ²:

1 Garo Kürkman, Osmanlı İmparatorluğu'nda Ermeni Ressamlar, İst., 2004, 2 cilt, 988s. Այս մասին տես նաև մեր «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում», Երևան, 2011, Ա տպ, էջ 606-616): Tarih ve Toplum, 1987, N, 40, s.28-33.

2 Տես մեր «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» գիրքը, Եր., 1911, էջ 609, 610:

Մանասների տաղանդավոր գերդաստանը հետազայտմ Օսմանյան կայսրության հայտնի դիվանագետներ տված տոհմ է եղել, որոնց մի քանի անդամներ շարունակել են նկարչի ասպարեզի և դիվանագետի միաժամանակյա գործունեությունը: Նման հոդվածներն ի պատիվ Գ.Քամալուքյանի, նշանակալի ներդրում են նաև բուրքական մշակույթի և դիվանագիտության այստմուրյան մեջ¹:

Տիվրիկցի Նորատունելյան գերդաստանի և Օսմանյան կայսրության արտգործնախարար Գաբրիել Նորատունելյանի (1852-1926) մասին հոդվածն ըստ սովորության ամիրայական ընտանիքի. նրա նշանավոր այրերի մասին աղբյուրագիտական հետարքիր տեղեկություններ է ներկայացնում²: Այն է՝ տոհմածառի, ծննդավայրի նկարագրությունից մինչև հոդվածի հերոսի մահը: Այս դեպքում Գաբրիել Նորատունելյանի ժառանգների, հարազատների մասին տեղեկությունները ու Փարիզի Ռոշե փողոցի հ.85 տանը՝ Պոլիսը լրած միջազգային մեծության հայ անվանի դիվանագետի մահը:

Գ.Քամալուքյանի մասին խոսելիս հարկ է անդրադառնալ նրա գործունեության շատ կարևոր մի կողմին ևս: Այն է՝ բացի արևմտահայ մքննողրտի տարրեր դարաշրջանների ուսումնասիրող լինելուց, նա անդրադարձել է նաև բուրք իրականության, մասնավորապես մշակույթի խնդիրներին, նոր լույս սփոռելով դրանց վրա, առանձին գործիչների մոռացված կամ անհայտ ստեղծագործություններին նվիրված իր հոդվածներով: Վերոհիշյալ տողերի համար որպես հաստատում կարելի է օրինակ բերել 20-րդ դարի ծագումով խուլացի, նշանավոր նկարիչ Ֆաուլատ Զոնարյին նվիրված մի հոդվածը³: Այս փոքրիկ ուսումնասիրությամբ Գ.Քամալուքյանը ներկայացրել է վարպետի բազմաթիվ կտավներ, որոնք մինչ այդ հիմնականում անհայտ կամ անձանոր են եղել արվեստասեր հասա-

1 Tarih ve Toplum, 1988, N, 49, s.42-48. Երևանի պատկերասրահում այս նշանավոր տոհմի նկարիչների և ոչ մի աշխատանք չունեմ:

2 Tarih ve Toplum, 1985, N, 19, s.41-43.

3 Kevork Pamukciyan, Fausto Zonaro'nun bilmeyen bazı tabloları. Tarih ve Toplum, İst., 1987, N.44, s. 24-30.

բակրաքանը, փակված գանազան մասնավոր հավաքածոներում¹: Սինչղեռ հայկական պարբերականներում Չոնճարոյին նվիրված հայ արվեստաբանների ու նկարիչների (Ռաֆայել Շիշմանյանի և այլոց) հոդվածներն ու նկարների արտատպումը լրացնում է այդ հայնրահայտ ու սիրված գեղանկարչի գործունեությունը, պոլսահայ մքնողորտի հետ նրա ջերմ հարաբերությունները ու վերագնահատումների մղում: Այս հոդվածում նշանավոր հայ երգիծաբան Հակոբ Պարոնյանի «Թատրոն» ամսագրում հրատարակված նկարներն են, նրանց մասին նոր տեղեկություններ, չափսերը, հավաքածոների գտնվելու վայրերը, որոշ նկարների մասին բացառություններ, նկարված դեմքերի ով լինելուն միտված ճշգրտումներն ու ենթադրությունները: Դրանք հոդվածագիրը վերցրել է հայկական «Լոյ» ամսագրից:

1987թ. Ստամբուլում անգլերենով լույս ընծայված **Էնգին Չիգգիթի** «Լուսանկարչությունը Օսմանյան կայսրությունում»² գրքի առրևի գրված Բամպուրճյանի հոդվածը ոչ միայն բազմաթիվ վրիպակների ճշգրտմանն է նվիրված, այլև կարևոր լրացումներ է պարունակում՝ կապված Արևմտյան Հայաստանի գավառներում լուսանկարչական գործի հայ առաջամարտիկների մասին³:

Գ.Բամպուրճյան-գեղագետը գրում է նաև օտար նկարիչների հայտնի կտավների մասին, նոյնավիսի ջանախրությամբ ներկայացնելով նրանց տոհմաբանությունը: Նա սովորան Ֆարիհի հայտնի դիմանկարի հեղինակին՝ **Ջ. Բելլինիին** է նվիրել իր փոքրիկ ուսումնասիրությունը⁴:

1 Մի քանի տարի առաջ առիր ունեցանք տեսնելու այս երաշալի արվեստագետի գործերը Դոլմաբաշիի բանգարանում կազմակերպված ցուցահանդեսում: Նրա նկարներից մեկը՝ իր որդեգիր հայուսու գեղեցիկ դիմանկարն էր:

2 Engin Çizgen, Photography in the Ottoman Empire, 1839-1919, 1st., 1987, 231 s.

3 Kevork Pamukciyan, Osmanlı Döneminde Fotografçılık, Tarih ve Toplum, 1st., 1987, N.48, s. 27-29.

4 Hayat Tarih ve Edebiyat Mecmuası, 1978, N, 5, s.13-14.

Գեղանկարչությունից զատ նա բացահայտումներ է արել նաև լուսանկարչության պատմության ասպարեզում: Այսպես օրինակ, **Սովորան Աքդուկագիզի** մի լուսանկարի առքիվ նա գրում է, որ այն արվել է հայտնի լրագրող, «Մանգումէի Եֆքիար» թերթի 30-ամյա խմբագիր **Կարապետ Փանոսյանի** (1826-1905) 1869թ. հիմնած «Ազապյան աղջկանց վարժարանի» համար: Նկարի անկյունում կարդացվում է լուսանկարչի՝ **Շահին Սարգսյանի** անունը¹:

Մի ընդարձակ հոդված է նվիրված օսմանյան շրջանում Պոլսի պարբերականներին աշխատակցած հայ նկարիչների, լուսանկարիչների ու նրանց գործերի մասին²: Այդ անուններն են՝ **Աքդուկ-լահ Եղբայրներից Վիշենը, Սիմեոն Հակոբյանը, Աննա, Նվարդ և Վիշեն Ապահնյանները, Արամ Բարձրալյանը, Մկրտիչ Զիվանյանը, Սարգիս Տիրանյանը, Տելեմաք Էքսերճյանը, ոմն Էսայան, Գրիգոր Քյոչէօղլուն, Մանասների տոհմից՝ Առուբեն Մանասը, Միհրան Մարտիկյանը, Մկրտիչ Մելքոնյանը, Պոլսի Հնագիտական բանգարանի հիմնադիրներից արձանագրության Երվանդ Օսկանը, Աքրահամ Սարայանը, Առուբեն Մերոբյանը, Մերվիշեն, Պողոս Շաշյանը, Մելքոն Տիրացույանը:** Համարյա բոլորն էլ իրենց ժամանակի հայտնի անուններն են եղել, որոնց գործերը մինչ օրս հիացմունք են պատճառում արվեստասերներին:

Օսմանյան կայսրության եվրոպականացման ճանապարհին կարևոր են եղել օսմանյան պատվիրակությունների մասնակցությունները միջազգային ցուցահանդեսներին: Որոշ պատվիրակությունները առաջնորդվել են հենց սուլթանների կողմից: 1867թ. Փարիզյան ցուցահանդեսին բուրքական պատվիրակությունը մասնակցել է իտալացի ճարտարապետի նախագծած շրեն տաղափարով, ուր տեղ էին գտել Պոլսի հայ, բուրք և օտար վարպետների ստեղծագործությունները: «Դրանց թվում՝ օր. **Վերժինե Մերվիշենի** «Սուլթ մատուցող չերքեզուիին»³: Հետաքրքրության է արժանի

1 Hayat Tarih Mecmuası, 1972, N, 1, s.24-25.

2 Tarih ve Toplum, 1990, N, 80, s.34-41.

3 Tarih ve Toplum, 1992, N, 105, s.35-37.

մասնակիցների և նրանց գործերի ցուցակը:

Ինչպես խոստովանում է Գ.Քամպուրճյանը, շուրջ կես դար իր հետաքրքրությունների շրջանակում է պահել Օսմանյան շրջանում ստեղծագործած արվեստագետների մասին աշխատություն գրելու երազանքը: Առանձին մի հոդված¹ նվիրել է 1873-1908թ. Օսմանյան շրջանի հայ արվեստագետներին, որոնց գործերի ցուցահանդեսներից մեկը կազմակերպված է եղել «Բեյմեն» հաստատության կողմից: Ստամբուլյան այս ցուցահանդեսում ներկայացված են եղել 3 հայ արվեստագետներ՝ **Միքրտիչ Մելքոնյանը**, ֆրանսիական կրթությամբ և փարիզյան սալոնների մասնակից **Սարգիս Տիրամյանը** և արձանագործ **Երվանդ Օսկանը** (1855-1914): Հոդվածագիրը հավելում է ևս 24 նկարիչների՝ այդ թվում՝ **Վիշեն Արդուլլահ**(յան)ի(-1900) և ելի մի շարք արվեստագետների անուններ, որոնք հաճախ են ցուցադրվել Պոլսի կենտրոնում, Բեյօղլուի և այլ ցուցասրահներում: Հոդվածը հիմնականում ներկայացնում է վերոհիշյալ արվեստագետների կենսագրական գծերը: Առաջինը **Վիշեն Արդուլլահ**(յան)ն է՝ Օսմանյան կայսրությունում լուսանկարչության հիմնադիրներից, արքունի հայտնի նկարիչ և լուսանկարիչներ Գևորգ(1839-1918) և Հովսեփ(-1902) Արդուլլահյանների եղբայրը: 1881թվականից **Վիշեն Արդուլլահ** Բեյօղլուի «Զարդե-ի Թեքիր» կենտրոնական պողոտայում իր արվեստանոց-ցուցասրահն է ունեցել: Նա ճանաչված է եղել որպես մանրանկարիչ, փոսոկրի վրա Արդուլլեջիդ և Արդուլլակի սուլթանների, երեկոի զինվորական փաշաների դիմանկարների հեղինակ, «Օսմանիյե»-ի 4-րդ, «Մեծիդիլյե»-ի 3-րդ աստիճանների², պատվանշանների արժանացած արվեստագետ: Մի ցավալի

1 Tarihi ve Toplum, 1992, N, 105, s.34-41.

2 Mecidiye Nişanı պատվանշանը ունեցել 5 աստիճան: Առաջին աստիճանը աղամանղակոտ է եղել: Այն հիմնվել է 1852թ. Արդուլլեջիդ սուլթանի կողմից, տրվել է հիմնականում զինվորական գործիչներին մեծ արժանիքների համար:

Osmaniyeye Nişanı պատվանշանը հիմնվել է 1861թ. Սուլթան Արդուլլակի կողմից: Տրվել է Սուլթանի կազմից պետական գործիչներին, զինվորականներին: Օսմանյան շքանշանների մեծ մասը պատվիրվել է

փաստ է արձանագրված այս հոդվածում: Այն է՝ 1898 թե՝ 1899 թվականին Վերջինս դատում է խալամի հետևորդ, սկսում կրել Արդուլահ Շուրբու անունը: Պատճառը՝ հոդվածագիրը չի գրում:

Հոդվածում իրար են հաջորդում քնանկարիչ և դիմանկարիչ, հայկական եկեղեցիների համար աստվածաշնչական թեմաներով մի շարք հայտնի յուղանկարների հեղինակ Սիմեոն Հակոբյանի(1857-1921), Աննա և Նվարդ Ասլանյանների¹, Վիշեն Ասլանյանի (1866-1942), Արամ Բարձրայանի (1874-1959)², Այվազովսկու հետևորդ, սանկտ-պետերբուրգյան կրթուրյամբ տաղանդաշատ քնանկարիչ, քատերական ու Պոլսի պալատները նկարազարդած Մկրտիչ Զիվանյանի (1848-1906), Սարգս Տիրանյանի (1860-), Տելեմաք Էքսերճյանի (1840-1894), Գրիգոր Քյոչեօղլուի (1845-1883), Մանասների պալատական նկարիչների և դիմանագետների տոհմից Ռուբեն Մանասի (1810-1875-ից հետո), Սիհրան Մարտիկյանի (-1907), Մկրտիչ Մելքոնյանի (19դ.), Օ.Միասերի (20դ սկիզբ), նկարիչ, արձանագործ, փորագրությունների վարպետ Միսակ Էֆենդիի (-), Օսման Համդի քեյի հետ միասին Նեմրուր լոռան հետազոտող և Պոլսի ամենահայտնի քանգարաններից՝ Հնագիտական քանգարանի հիմնադիր Երվանդ Օսկանի (1855-1914), Արքահամ Սաքայանի (1821-1876), Ռուբեն Սերոբյանի (1875-1917), Սերփիասյանի (Զրքաշյան), 1867թ. Փարիզի միջազգային ցուցահանդեսի օրերին օսմանյան տաղավարում ներկայացված «Սուրճ մատուցող չերքեզուիին» հայտնի կտավի հեղինակ Վերժին Սերվիչինի (1845-), Պողոս Շաշյանի (19դ.), Մելքոն Տիրա-

Դրամահատարանին, նրա հայ գծագրիչներին, ուկերիչներին: Դրանց արժանացել են երկրի տարբեր քնազավառներում ներդրում ունեցած բազմարիվ հայեր, մինչդեռ բուրքական հանրազիտարաններում, ուր տարբեր պատվանշաններին կից տրվում են դրանց արժանացած հայտնի դեմքերի անունները, չեք հանդիպում և ոչ մի հայկական անվան:

- 1 Վիշեն Ասլանյանի քույրերը, Աննան ամուսնացել է Երվանդ Օսկանի հետ:
- 2 1932թ. փարիզյան ցուցահանդեսից հետո արժանանում է “Palme d’officier académique” պատվանշանի:

ցույանի (1837-1904) մասին հաճրագիտարանային ոճի կարևոր տեղեկությունները: Հողվածը նկարազարդ է, գրված աղբյուրագիտական հարուստ նյութի հիման վրա: Շատ կարևոր է հայկական մքնոլորտի սահմաններից դուրս եկած, իրենց գործերով հայտնի այս արվեստագետների մասին հողվածների ներկայացումը բուրքական գիտահանրամատչելի ու հաճրագիտարանային գրականության լշերում: Այս առումով չափազանց արժեքավոր են մեր օրերի պոլսահայ տաղանդավոր արվեստաբան Կարո Ջյուրքմանի ուսումնասիրությունները:

Գ.Քամպուրճյանն առաջիններից է, որ համարձակվում է գրել քուրք մշակույթի, ճարտարապետության պատմության ամենապայծառ դեմքի, Օսմանյան կայսրության ճարտարապետության նահապետ, շուրջ 500 մնեց ու փորք կառուցների հեղինակ Միմար Միմանի հայկական ծագման, նրա դեշիրմեի գոհ լինելու մասին¹:

1 Tarihi ve Toplum, 1985, N, 22, s.3-4. Օսմանյան կայսրությունում քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ կիրառած քաղաքականության մաս են կազմել շուրջ հարյուր տևակի անմարդկային հարկերի դատավարութելը, և որ շատ ավելի ստվարի էր՝ դա դիշիրմեն էր: Այն է՝ կայսրության քրիստոնյա ժողովուրդների մանկահասակ երեխանների բռնի մանկաժողովը: Նրանք դաստիարակվում էին մասում հասական խատագոյն օրենքներով և հետազայտ համարում ենիշերական գարբերք: Ենիշերիններն աշքի են զնիելի հպատակազգերի նկատմամբ իրենց ծայրաստիճան դաժանությամբ: Երեխանների մի մասն, որ մասում հասակում էին հավաքագրվել, տարիների ընթացքում մոռանալով իրենց ծագումը, ազգային պատկանելությունն ու ընտանիքը, վերածվում էին մոլուսն զինվորների, պատուհան դառնալով իրենց ծնած ժողովուրդների գլխախ: Ավելի մնած տարիքում ընտանիքներից խլվածները իրենց ողջ կյանքում պահել են ազգային զգացողությունը, նունիսկ, երբ ամենաբարձր պաշտոնների են արժանացել՝ քարծրագոյն իրամասնաստարներից մինչև մեծ վեզիր: Նրանցից ոմանք ոչ միայն չեն բարցրել ազգային պատկանելությունը և իրենց անուններին կցել հայ մասնիք, այլև փորձել են գաղտնի կամ անբարույց հնարավորինս օգտակար լինել իրենց ազգակիցներին:

Դեշիրմեի՝ մանկահակարի սկիզբ է Խամարփում սովորակ Մուրադ Ա-ի ժամանակաշրջանը (1359-1390թթ.): Մանկաժողովները (նաև աղջկահակարները) կատարվել են 3 կամ 5 տարին մեկ անգամ, իսկ սկսած 16-րդ դարից այս ամենամյա է եղել:

Հողվածը պատմական այս անվան շուրջ արդարության վերականգնման փորձերից է¹:

Հեղինակի «արդարության զատագով» լինելը նրան հաճախ պարտադրել է դիմել ոչ միայն հայ, այլև հույն մատենագրությանը, քուրք հեղինակներին: Պոլսի Նորի Օսմանիյի մզկիրի կառուցման պատմությունը շատ հետաքրքիր է: Հակառակ ժամանակի շեյխուլիսլամի բողոքներին, հայ դավանափոխ վաճառականը կարողանում է մզկիր կառուցվելու սուլթանական իրովադակ ստանալ: Հիմնական ճարտարապետը եղել է Մակար Պալյանը, որի հետ ցավալի ու պայծառ պատմություններ են կապված²: Երկրորդ ճարտարապետի՝ Սիմեոն Խալֆայի ազգային պատկանելությունը ճշտելու՝ հույն թե հայ լինելուն է նվիրված հողվածը:

Հայտնի է, որ Կայսրության և մասնավորապես Պոլսի լավագույն մզկիրները կառուցվել են հայ ճարտարապետների ու շինարարների կողմից: Գ. Բամպուրցյանը ժամանակ առ ժամանակ այս թեմային է անդրադառնում, իիշեցնելու նաև մահմեդական սրբավայրերի՝ սելջուկյան շրջանից ի վեր դրանց հայ ճարտարա-

-
- 1 Միմար Սիմանի հայկական ծագման մասին 1930թ. առաջին անգամ 1573 թվականին պատկանող վավերագիր իրատարակեց Ահմեդ Ռեֆիկը, Türk Tarihi Eşcümeni Mescituası, 1930-31, N. 5. Այն ներկայացնում է Սուլթան Սելիմ Բ-ի (1524-1574) կողմից 1571թ. գերավարված Կիպրոսում կեսարահայության բռնի տարիանմասն և Կիպրոս տեղափոխման մասին: Խնդրո առարկա փաստաբուրքը 82-ամյա Միմար Սիմանի խնդրագիրն է, ուղղված Սուլթանին, որպեսզի Կեսարիայի մի քանի զյուղերում ասքող իր հարազատները բռնազարդի չենքարկվեն: Ի պատասխան, Ար դադի (Եղողար) դատավոր Հյուսեյն Չալուշին իրաման է տրվում «ներում շնորհել ներկայիս արքունիք ճարտարապետների զիսավորի բրիւտունյա ազգականներին ու բարեկամներին»... Նամակում տրված անունները՝ դրանք հայկական զյուղեր են եղել: Տես՝ Հասմիկ Ստեփանյան, Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Եր., 2011, էջ 430-431, N 1 և 2 տողատակերը:
 - 2 Mimarlık Fakültesi Mimarlık ve Restorasyon Enstitüsü Bülteni, 1981, N 13-14, s.21-23. Տես նաև մեր «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» գիրքը (Եր., 2011, էջ 440).

պետների կողմից կառուցված լինելու փաստը¹:

Անվանի գիտմականը երթեք չի տառապել պատմական այս կամ այն երեխի անձին հայկական ծագում պարտադրելու հիվանդությամբ: Այս առումով, հանուն արդարության նա չի խուսափում ընկղմվելու աղբյուրագիտական հերթական դժվարին, երկարատև փնտռությամբ մեջ: Սկզբանի Մելիմիկ նզկիրի ճարտարապետի ով լինելուն նվիրված հոդվածը այդպիսի մանրակրկիտ որոնումների արդյունք է հանդիսանում: Թուրքական պաշտոնական արխիվներում Գրիգոր Պալյանի և Ֆորի խալֆայի մասին փաստաթղթերի, հայկական աղբյուրների բարգմանության շնորհիվ այս խնդիրը ևս պարզաբանվում է:²: Ամենայն հավանականությամբ Ֆորի խալֆան եղել է Միմենի Խալֆայի որդին, ազգությամբ հույն՝ Կոմինենոս կամ Կոմյանոս ազգանվամբ:

Գ.Բամպուրճյանը 17-րդ դ. Ստամբուլի հայ ճարտարապետների ու խալֆանների մասին մի հետաքրքիր ցուցակ է ներկայացնում, որով կարելի էր առաջնորդվել³: Յուրաքանչյուր անվան կից ներկայացված են փաստերը լուսաբանող աղբյուրները: Արդեն Գ.Բամպուրճյանի հոդվածների մեծագույն առավելություններից է փաստերի փակերականությանը կասկած շիարուցող աղբյուրների առատությունը: Այս պատճառով նրա հոդվածները հեղինակի, նյութի արժանահավատության գրավական են հանդիսանում: Իր մի նամակում (16.12.1990թ.) նա խոսուվանում է, որ «Tarih ve Toplum» իրատարակչականը մեզ հայերուս հանդեպ շատ համակիր է: Կրկած բոլոր հոդվածներս անփոփոխ և անհապաղ կը հրատարակեն»:

Գ.Բամպուրճյանի հատուկ բժախնդրությամբ մանրամասներ ներկայացնելու վարպետությունն ուղղակի ապշեցուցիչ է: Թվում է,

1 Այս մասին տես մեր՝ «Լուգինյան բագավորական տաճ հայ ժառանգություն» գրքի (Եր., 2016թ.), «Հայկական աղբյուրները սելցուկների Հայաստանյան արշավանքների մասին և 11-12դդ. հայերի կողմից» կտրուցված սելցուկյան հոլոքաստները հոդվածը:

2 Tarih ve Toplum, 1990, N, 74, s.21-23 « Tarih ve Toplum, 1990, N, 75, s.2.

3 Arredamento Dekorasyon, 1995, N6, s. 98-101.

թե նա բաց չի բողել և ուսումնասիրել է Արևմտյան Հայաստանի և Պոլսու հայկական բոլոր եկեղեցիների ծննդյան, մահվան, ամուսնական մատյանները, եկեղեցական ողջ գրագրությունը, ժամանակակիցների բողած ամեն մի հուշագրություն, քերթի ամեն մի հողված, պատրիարքարանի արխիվի յուրաքանչյուր նամակ ու վավերագիր: Ավելին, ինչպես միշտ, հետաքրքրասերների և ուսումնասիրողների համար նա անհրաժեշտ օգտագործման հայ և օտար աղբյուրներ է «առաջարկում»:

Առողջապահությունը եղել է Կայսրության կյանքի այն ասպարեզներից մեկը, ուր ամենամեծ ներդրումներն են ունեցել հայ բժիշկները, դեղագործներն ու կենսաբանները: Նրանց մի մեծ մասը կրքարյուն էր ստացել արտասահմանում, եվրոպական լավագույն հաստատություններում, կատարելագործվել ժամանակի հայտնի բժիշկների մոտ: Հայ բժիշկները եղել են այս ասպարեզի առաջատարները՝ արքունի բժշկապետներից սկսած մինչև բանակի ու քաղմարի հիվանդանոցների գլխավոր բժիշկներ, զիտական հայտնագործությունների հեղինակներ և համաշխարհային փորձն առաջին անգամ կայսրություն քերողներ, Պոլսի բժշկական գինվորական կայսերական հաստատության հիմնադիր դասախոսներ, Արքունի բժշկական միության նախագահներ, մասնագիտական պարբերականների ու ուսումնասիրությունների հեղինակներ: Գ. Բամպուրճյանի հողվածներից մեկը նվիրված է արքունի խորհրդատու բժիշկ Տիգրան Փեշտիմալճյանին (1837-1894): Թուրքական առողջապահության մեջ նա հայտնի է որպես միջազգային «Կարմիր խաչ»-ին անդամակցած Օսմանյան կայսրության «Կարմիր Մահիկ»¹ կազմակերպության հիմնադիր: Տիգրան Փեշտիմալճյանը 1884թ. ընտրվել է «Société Française d'Hygiène» (Հիգիենայի ֆրանսիական ընկերության) անդամ: 1892թ. արժանացել Փաշա-յուրյան տիտղոսի: Աշխատակցել է տեղական ու արտասահ-

1 Pamukçyan K., Hilâli Ahmet Kurucusu Dr. Dikran Paşa. Tarih ve Toplum, İst., 1954 s.19-22.

մանյան գիտական մասուլին: Նշանակալից դեր է ունեցել «Կարմիր խաչ»-ի և «Կարմիր մահիկ»-ի միջազգայնացմանն ուղղված կազմակերպման աշխատանքներում՝ Ժնևից Հանրի Դյունանի, նեապոլից Բալաջիանոյի, Փարիզից՝ Հենրի Առոլի հետ միասին: «Կարմիր խաչ»-ի, որպես միջազգային կազմակերպություն, առաջին համագումարը տեղի է ունեցել 1864թ. օգոստոսի 8-ին Ժնևում, 12 երկրների անդամությամբ: Հաջորդ տարի, 1865թ. համաձայնագիրը ստորագրում է նաև Օսմանյան կայսրությունը: Տիգրան փաշան եղել է միջազգային ու կայսրության մասշտարով բժշկական բոլոր կարևորագույն միջոցառումների մասնակիցն ու կազմակերպիչը: Իհարկե, կարևոր է, որ այս մասին իմանան շատերը, մանավանդ բուրքալեզու ընթերցողը:

Գ. Քամպոքճյանի ներկայացրած դեմքերը Օսմանյան կայսրության կյանքի որ ոլորտի ներկայացուցիչ էլ լինեին, մաս են կազմել այդ շրջանի հասարակության սերտցքի, կապված եղել պալատի հետ, վայելել սովորանելի բարեհաճ վերաբերմունքը, վստահությունը, անգամ մտերմությունը, եղել առանձնաշնորհյալ խավ: Կարևոր հանգամանքներից է եղել հայ բժշկապետերի, բժիշկների գործունեության ոչ միայն հասարակական գործունեության, այլև գիտության առաջամարտիկներ լինելու, այդ ոլորտը եվրոպական մակարդակին չգիշելու փաստը:

Գ. Քամպոքճյանի հոդվածներից մեկը, որ շարունակում է ներկայացնել Կայսրության առողջապահության պատմության որոշ հատվածներ, նվիրված է բազմալեզու և բազմաբնույթ բառարանների շնորհիվ բուրքերեն լեզվի զարգացման, եվրոպականացման գործում մի այլ երախտափորի՝ բժշկական ուրալեզու հայտնի բառարանի հեղինակի՝ նշանավոր բժիշկ Միքայել Ռեստենին (1774-1844)¹: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում հիվանդությունների, դեղերի, բույսերի, հանրանյութերի, կենդանիների, զագերի, հեղուկների անունների Յ տպագրություն ունեցած 9-լեզվյա նրա կազ-

1 Tarih ve Toplum, 1985, N 17, s.46-48.

մած բառարանը (Վենետիկ, 1822, 542 էջ)՝ իր տեսակի մեջ ամենահայտնի ու ամենավաղ տպագրվածներից մեկը: Միքայել Ռեստեն Տեր Պետրոսյանի մյուս գործը՝ «Կրթություն բժշկական արվեստի» վեցհատորյակն է, տարբեր հիվանդությունների և մարդակազմության մասին, տպագրված 1833-41թթ. Պոլսում:

Ընորիկվ Գ.Քամպությանի, բուրքական մամուլում, գիտահանրամատչելի հանդեսներում հայտնվել են հոդվածներ հայ նշանավոր տոհմերի, առանձին դեմքերի մասին՝ նրանց հորելյանների առթիվ: Օրինակ՝ Սերձավոր Արևելքի երկրների նավքային արքաներից, Գալուստ Սարգսի Գյուղենկյանի (1869-1955) ծննդյան 125 ամյակի առթիվ¹: Ուշագրավ է, որ իր գործունեության սկզբում «Նավքային Տալեյրան», «Պարոն 5%» անուններով հայտնի միջարդատերը եղել է Օսմանյան կայսրության ներկայացուցիչը եվրոպական երկրներում:

Դատական և պետական իրավաբանական-խորհրդատվական զանազան ասպարեզներում մեծ պատիվ ու հարգանք են վայելել հայազգի պաշտոնյանները: Այս հանգամանքը հիմնականում լուրջան է մատնվել թուրքերի կողմից: Մինչդեռ քաղաքային, պատժական և առևտրական, մասնավորապես վերաբննիչ ու վճռաբեկ դատարաններում, իրավագիտական խորհրդում հաճախ ենք հանդիպում հայ մասնագետների ընտրությանը բազմաթիվ պաշտոններում՝ սկսած տարբեր դատարանների դատավորներից: 1880-ական թթ. Պոլսում 300 բժիշկ և նույնքան էլ փաստաբան կար: Այս նրանց լուրտի երախտավորներից է իրավագետ Սարգսի Գարագոչը (1865-1944)²: Կեսարացի այս ընտանիքի պատմությանը նվիրված հոդվածը կարևոր է նաև այն առումով, որ պաշտոնական Թուրքիան միշտ ձգտել է մերժել գինվորական, դատական ասպարեզում ոչ մահմեղականների գոյությունը, առավել ևս նրանց ավանդը: Մինչդեռ փաստերը միանգամայն հակառակն են ապացուցում:

1 Tarih ve Toplum, 1994, N, 130, s.38-40.

2 Tarih ve Toplum, 1987, N, 37, s.20-22.

Սարգիս Գարագոշը 1889թ. ավարտել է Օսմանյան իրավաբանական վարժարանը: Փաստարանության ասպարեզն է ընտրել: Ծառ շուտով նա այնպիսի ճանաչում է ստացել, որ ստիպված բողեք է փաստարանական գործը, քանզի սկսել են տարրեր վայրերուն նրա նշանակումները որպես դատարանների նախագահի: 1910թ. Դատական նախարարության դիվանագետ է նշանակվել, միաժամանակ դեկավարել նախարարության Վիճակագրության և Օրենքների դասավորության քաֆիմները: Աշխատել է որպես Արդարադատության վարչության արխիվի տնօրեն: Այս շրջանում է, որ նա հնարավորություն է ունեցել ստեղծելու Կայսրության դատական համակարգի համար ամենակարևոր կողմնորոշիչ իրատարակությունները՝ օրենսգրքերը: Հեղինակել է Օսմանյան օրենքների և միջազգային դաշնագրերի վերաբերյալ ՅՈ հատորներից բաղկացած հոյակապ մի երկ, որի վրա աշխատել էր 20 տարի: Դրա համար Նախարարների խորհրդի կողմից պարզեատրվել է «*Osmalîye*» շքանշանով: Նա առաջին հայն է եղել, որ Սահմանադրության հոչակումից հետո այս պատվին է արժանացել: Շանաշված է եղել որպես դատական և իրավական գիտությունների առաջին մեծության մասնագետ: Ոչ մի փաստարան կամ իրավաբան չէր կարող աշխատել առանց այս գրականության: Հերթական մի երախտավոր, որի գոյությունն ու ավանդը չպետք է մնա պատմության ծալքերում, մասնավանդ այսօրյա հայկականության մերժողական դիրքորոշման պայմաններում:

Հայտնի է, որ հայերը և հայերենը վաղուց Եվրոպայի, մասնաւորապես Հռոմի հետաքրքրությունների կիզակետում են զտնվել: 1583թ. Հռոմի պապը ֆրանսիական դեսպանի միջամտությամբ Պոլսի Պերա քաղաքասում հիմնում է ճիզվիտյան ուսուի «Սեն Բենուա» քոլեջը, որը գործում է մինչ օրս: 1625թ. Կ. Պոլսում ֆրանսիական դիվանագիտական ներկայացուցության, կարդինալ Ռիշելյեի խորհրդական Ծողեֆ դը Գրամբեի ջանքերով կազմակերպվել է կապուցինյան ուսուի «Սեն Լոի» կոլեջը: 1699թ. Լյո-

դովիկոս 14-րդի հրամանով, Ֆրանսիայի նախարարապետ Ժան Բատիստ Կոլբերի կողմից Փարիզում հիմնադրվել է «Երիտասարդ լեզվաբանների կամ հայերի դպրոց» (Ecole des jeunes des langues ou Arméniens): Դպրոցի տնօրինությունը հանձնված էր կապուցինյան ոխտի կրոնավորներին: Այս դպրոցի նպատակն էր ֆրանսերեն, հունարեն, իտալերեն, խապաներեն, լատիներեն, բուրբերեն, արաբերեն և պարսկերեն լեզուների թարգմանիչների պատրաստումը: Ուսումն այս դպրոցում անվճար էր: Նրա հայ շրջանավարտներից Հակոբ Չամչողլուն (1695-1775)¹, 1715թ. Փարիզից վերադառնալով Պոլիս, 1721 քվականից սկսում է աշխատել որպես թարգմանիչ Պոլսի շվեյցարական դեսպանատանը: Այս ընտանիքի անունը Գևորգ Մալայիմի անվան հետ միասին միահյուսված է Պոլսի հայոց պատրիարք Ավետիք Եփոկացու (1657-1711)² առևանգման, ազատել փորձելու, Բաստիլում նրա բանտարկության, «Երկարե դիմակով ճարդու» պատմության հետ:

Հինեղով Հակոբ Նալյան պատրիարքի բարեկամներից, նրա և Հովհաննես Կոլոսի պատվերով Հակոբ Չամչողլուն 5-6 գործ է թարգմանել հայերենի՝ ֆրանսերենից, հունարենից, լատիներենից: Դրանք դավանաբանական երկեր են, ինչպես նաև՝ «Նյուտոնի փիլիսոփայություն»-ը և նույն երկի առաջին մասը, որը ֆիզիկային է վերաբերում:

Այս շարքից մի հոդված էլ Գ.Բամպուրճյանը նվիրել է հայտնի

1 Tarih ve Töplüm, 1995, N, 143, s.23-27..

2 Ավետիք Եփոկացին Պոլսու պատրիարք է եղել Երկու անգամ՝ 1702-03թ., և 1704-06թ. Նա հայտնի է եղել արևմտահայության մեջ կարողիկ քարոզիչների դավանավորման շարժման դեմ իր ծայրահեղ խօսութարականությամբ: Միավոններները վայելում էին Պոլսում Ֆրանսիայի դեսպան մարկիզ դը Ֆերրիոնի հովանավորությունը: Պատրիարքը խանգարող մի մեծ ուժ էր նրանց ճանապարհին: Այն պետք էր վերացնել: Մարկիզի կաշառքի դիմաց Պատրիարքը նախ բանտարկվում է բուրբերի կողմից, ապա՝ ֆրանսիացիների կողմից առևանգվում, բանտից բանտ, մինչև Բաստիլ տեղափոխվում: Տես՝ Հասճիկ Ստեփանյան, Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Եր., 2011, էջ 31:

պետական այր, տարբեր պաշտոններ վարած, նաև՝ թարգմանիչ, խմբագրապետ հրատարակիչ Գրիգոր Մարկոսյանին (1821-1888):

Թուրքական հանրագիտարանային կամ գիտահանրամատչելի պարբերականների համար գրված քամպուրճյանական հոդվածները փոքր ծավալի մեջ լիարժեք պատկերացում են տվել առաջարկված նյութի, տվյալ անձի ու նրա գործի մասին, այն է՝ տոհմարանուրյունից սկսյալ մինչև ժառանգները, աղբյուրներ, աղբյուրներ: Իհարկե պիտի խոստովանենք, որ այս հոդվածներն իրենց էությամբ զուտ տեղեկատվական, հանրագիտարանային բնույթի են, առանց անալիտիկ մասի, հեղինակի կարծիքի, եղրահանգումների: Հավանական է, սա ճիշտ մոտեցում է եղել, քանի որ քուրքալեզու լնրեցողը նրա մտածումները անապայման պիտի ազգային ենթագիտակցուրյան արդյունք համարեն: Իսկ չոր փաստերի հետ չես կարող մարտնչել ու փորձել խեղաքյուրել իրականուրյունը: Այն գիտնականի շափազանց գգույշ էության արտահայտուրյունն է:

Օսմանյան կայսրուրյունում հայ ազգաբնակչուրյան մասին հոդվածում մատնանշվում են օտար աղբյուրներից սկսած (1822թ. ըստ գերմանացի Կ. Սասսելի՝ 12 մլն. բնակչուրյուն և 1 690 000 հայ) մինչև 1922թ. քուրքական տերության պաշտոնական մարդահամարները, պարբերականներում ու հայկական աղբյուրներում եղած թվերը: Սովորաբար Օսմանյան կայսրուրյան կողմից ցույց տրված հպատակ քրիստոնյաների թիվը հեռու է եղել իրական վիճակից: Հայկական աղբյուրները կիմնվել են Պոլստ պատրիարքարանի ժամանակ առ ժամանակ կատարվող մարդահամարների վիճակագրուրյան վրա: Մինչդեռ վերոհիշյալ օտար աղբյուրներում եղած թվերը, որ արդյունք են Սերճավոր Արևելքում ելքրոպական դիվանագիտական, հյուպատոսական ծառայուրյունների կողմից, ինչպես նաև Օսմանյան կայսրուրյան ամենահեռավոր անկյուններում գործող միսիոներական կենտրոնների կողմից կատարված

1 Tarih ve Toplum, 1986, N, 27, s.2 (տես ամսագրի առաջին էջերում, խմբագրուրյան ուղղված նամակների բաժնում):

մարդահամարների՝ իմանականում հաճապատասխանում են իրականությանը: 1846թ. Օսմանյան կայսրության դարաձրում Անգլիան ուներ 43¹, Ֆրանսիան՝ 14, Իտալիան՝ 15, Ամերիկան՝ 10 հյուպատոսություններ: Որոշների հաշվումով 1833թ. հայերի թիվը եղել է 2 միլիոն:

Քրիստոնյա բնակչության, ազգային փոքրամասնությունների մասին այս տվյալները և դրանց իրապարակումը չեն կարող համահունչ լինել կայսրության բռնակալ քաղաքականությանը, որը ձգտում էր մեկ ազգի, մեկ կրոնի տիրապետության, երբեք չիրապարակելով հպատակ քրիստոնյաների իրական թիվը: Հետաքրքիր մի հոդված, որը ազգային փոքրամասնությունների իրական վիճակի բացահայտում, մեղադրանք է հնչում և զարմանալի է, որ այն տպագրվել է քուրքական պարբերականում²:

Արևմտահայության ներդրումը Օսմանյան կայսրությունում ներառել է տնտեսության բազմարիվ ոլորտներ: Անկասկած Գ. Քամպուրճյանին զբաղեցրել է նաև կայսրության կյանքում հայերի տաղանդի բազմակողմանիությունը ցույց տալու հոգսը: Այս առումով նա բավարարվել է անգամ 1-2 էջանոց համառոտ հոդվածներով: Կարևորը՝ ասելիքն է եղել:

Ծագումով արարկիրցի բնագետ, լեզվաբան Արմենակ Բեղլիյանի (*Պետևյան, 1884-1957*)³ մասին հոդվածը պատմում է բուսաբանության և լեզվաբանության ասպարեզում նրա բողած գիտական ուշագրավ ժառանգության մասին: Նրա և՛ կրթական, և՛ աշխատանքային գործունեությունը կապված է եղել իմանականում Եղիպատոսի հետ, որը Օսմանյան կայսրության մաս էր կազմում: Աշխատել է Կահիրեի բամբակամշակման ֆաբրիկայում որպես ինժեներ ու փոխտօնօրեն, 1920-ականներին դեկավարել Գիզայի Գյուղատնտեսական նախարարության ուսումնասիրությունների կենտրոնը,

1 Shu' Uygur Kocabəşoğlu, Britanik Majesteleri'nin İstanbul Konsoloshanesi 1856-1871, 2004, 292s.

2 Tarih ve Toplum, 1995, N, 142, s.16-18.

3 Tarih ve Toplum, 1985, N, 13, s.65..

դեկավարել բամբակի արտադրությունը: Արժանացել է «Նեղոսի» 5-րդ աստիճանի շքանշանի: Ուսանողական շքանում իր կազմած հերթարիտոմի և կենդանիների հավաքածոյի հիման վրա 40 տարվա աշխատախրությունից հետո հրատարակել է 1100 էջանոց և 3657 անուն ընդգրկող բույսերի անունների լատիններեն, արաբերեն, հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, թուրքերեն նկարագրող եզակի արժեքի բառարան¹: Թողել է նաև «Հայ բուսաշխարի» հայերեն անտիպ գործը:

Քյոթահիացի Արքին Հինդոոլին (1780-1840)² մեկն է այն հեղինակներից, որը ֆրանսերենով ու գերմաներենով թուրքերենի դասագրքեր է հեղինակել, մեծ ծառայություններ մատուցել թուրքերենի զարգացմանը, Վիեննայում հրատարակել թուրքերեն լեզվին ու հայ մշակույթին նվիրված գրքեր: Նա կրթություն ստացել էր Վենետիկի Սլյութարյանների մոտ, ապա՝ Վիեննայում թարգմանչի, թուրքերենի մասնագետի պաշտոններ վարել: Մի քանի լեզուներ տիրապետող Հինդոոլին հեղինակել է ֆրանսերեն-թուրքերեն բառարան, ֆրանսերենով թուրքերենի ուսուցման ձեռնարկ, գերմաներենով թուրքերենի դասագիրը է տպագրել Վիեննայում (1829): Կրկին Վիեննայում, 565թ. էջից բաղկացած ֆրանսերեն-թուրքերեն «Nazne-i Lugat» բառարանն է տպագրել (1831թ.): Հեղինակել է հայերեն-գերմաներեն-թուրքերեն և հայերեն-թուրքերեն-գերմաներեն բազմալեզու բառարանները: Նրա դասագրքերն ու բառարանները չափազանց օգտակար են եղել գրական նոր թուրքերենի զարգացման, ինչպես նաև օտարներին թուրքերեն սովորեցնելու համար: Այսօր հայատառ թուրքերենով արտահայտ-

1 Armenag Bedevian, Illustradet Polyglottic Dictionary of Plant Names, Cairo, 1926, Նոյն այս «Բառարան» հայատառ թուրքերեն հրատարակվել է 1936թ. 1099էջ: Տես՝ Յասին Ա. Ստեփանեան, Հայատառ թուրքերեն գրքերի եւ հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն (1727-1968), Ստամբուլ, 2005, հ.1648: Կ.Պոլսում Ն. Արքինյանը ֆրանսերեն, հայերեն, թուրքերեն լեզուներով տունկերի բառարան է հրատարակել(1908):

2 Tarih ve Toplum, 1985, N, 16, s.8.

ված բառարանների թեման բուրքական համալսարաններում գիտնականների համար որպես գիտական թեզ պաշտպանելու նյութ է ծառայում: Ընդհանուր առմամբ բառարանագիտության մեջ հայերի մեծագույն ներդրումն անկարելի է ժխտել: Այն թուրքիայում տարբեր ասպարեզների զարգացման համար կարևոր միջնորդ է հանդիսացել: Խոյնիսկ որոշ բուրք մտավորականների մասին իր հոդվածներում, նրանց մասին իր հիշողությունների հրապարակումներում, Գ. Թամանդը առիրն օգտագործում է կրկին ու կրկին անգամ նրանկատորեն սրբագրելու բուրքական կողմի բազմարիվ սխալները, անշշուրջունները: Այդպիսիններից է Ռեշադ Էքրեմ Գոչուի (Reşad Ekrem Koçu) մասին հոդվածը¹:

Հայկական աղբյուրների կարևորությունը թուրքիայի պատմության ուսումնախիման գործում այսօր արդեն կասկած չի հարուցում: Այս գործի երախտափորների՝ աղբյուրագետ պատմաբանների, բանասերների, քարգմանչների ու հրատարակիչների մասին Գ. Թամանդը բազմարիվ հոդվածներ է տպագրել: Դրանցից մեկն էլ մեր ժամանակակից Հրանտ Տեր-Անդրեասյանին է (1892-1978)²: Նա քարգմանել, ծանոքագրել, հրատարակության է պատրաստել Օսմանյան կայսրության պատմության համար մի քանի շատ կարևոր հայկական աղբյուրներ, ինչպես Եղիա Ջյոնուրծյանի «Պատմութիւն Ստամբուլ» (1952), Ղ. Խնճիճյանի «Ստամբուլ» (1956), Գրիգոր Ակներցու, Միմեռն Լեհացու, Գ. Օղուզուխյանի, Թետրոս դի Սարգիս Գիլանցու պատմությունները, ժամանակագրությունները, քարգմանություններ կատարել ֆրանսերենից, անգլերենից, ռուսերենից (Ժան Ռամո, Կնուտ Համսուն, Հանրի Գյուլբերնուա, Իվան Տուրգենև), հրատարակել Պոլսին Վերաբերող բազմարիվ գիտական հոդվածներ:

Ցավոք սրտի հայկական հանրագիտարանային գրականության մեջ բացակայում է Թերգիբաշյան Գևորգի (1859-1929)

1 Tarih ve Toplum, 1990, N, 83, s.49.

2 Tarih Dergisi, Türk Tarihine Ait Ermeni Kaynakları, 1949, N, 1, s.95-118; N2, 1950, s. 401-438.

անունը: Թուրքական աղբյուրներում նա ներկայացվում է որպես Արևելքի դիվանային գրականության և մասնավորապես Ֆիզուլիի մասնագետ: Ընորհիվ Գ. Քամպուրջյանի հոդվածների, մոռացուրյան շղարշի մեջ չի մնացել այս անունը ևս¹: Տիրապետել է լատիներենին, իտալերենին, սանսկրիտին, ֆրանսերենին, անգլերենին, հոլանդերենին, հունարենին, պարսկերենին, և բնականաբար հայերենին և օսմաներենին: Այսպիսի կրթությամբ մարդը ծառայել է որպես քահանա Աղանայում, Հաճնում, Էրգումում, Անկարայում, Պոլսում: «Սեն Շողեֆ» լիցեյի գրականության ուսուցչից մինչև Կ. Պոլսու հայ կարողիկների պատրիարքարանի գանձապետ, «Կարողիկէ Արծագանք» պարքերականի տնօրեն, գիտնական այս վարդապետը ընդարձակ ուսումնասիրություն է հրատարակել նվիրված 16դ. արևելյան միստիկ գրականության հսկաներից Ֆիզուլիին²: Ահա մի երևելի հայկական ներդրում-ևս արևելյան պոեզիայի ուսումնասիրության ասպարեզում:

Բացի Ֆիզուլիին նվիրված մի քանի կարևոր ուսումնասիրություններից (1928, 1929, 1950), Թերզիքաշյանը հեղինակել է լաւ տիմերենի թերականություններ, հայ-բյուզանդական հարաբերություններին նվիրված «Հայերը և Կոնստանդինը» (1913) գործը, կրոնադավանաբանական երկեր:

1 Tarih ve Toplum, 1988, N, 56, s.20-22

2 Tarih ve Toplum, 1988, N 56, s. 20-22. Ֆիզուլի, նրա գրական ժառանգության, նրա դարաշրջանի մասին բողել է գրականագիտական, փիլիսոփայական, լեզվաբանական պատկանելի արժեք ունեցող չի հնգասորոյակ: Առաջինը նվիրված է Ֆիզուլի գրականության փիլիսոփայական, միստիկ, սիրային և այլ գործերին: Առանձին գործի է նվիրված Ֆիզուլի և Պետրարկայի գրական համեմատական դիմանկարներին: Աշխատության Գ. և Դ. հաստորները հիմնականում կրոնադավանաբանական հայեցակետից արված մտորումներ են՝ նվիրված աստծոն, նրա մարդեղությանը, փիլիսոփայական մտքերին: Ենասը նվիրված է միստիկ սիրուն և հավելվածի մաս ունի: Այն Ֆիզուլի նախին հավանաբար լսագույն ուսումնասիրություններից է, որը ցավոք սրտի գիտական շրջանառության մեջ շատ չենք գտնում:

Գ. Քամպուրճյանը առանձին հոդվածներ է նվիրել հայատառ թուրքերն ձեռագիր և տպագիր բառարաններին¹, որոնց դերն անգնահատելի է եղել մի երկրում, որ արարատառ օսմաններն պարսկական թերականական բարդ սխատեմի պատճառով ոչ բոլորին է հասու եղել: Թուրք լուսավորիչները երազում էին նոր, գրական թուրքերնի մասին, որը գրագիտուրյան, երկրում բարենորոգումների, եվրոպականացման ճանապարհին կարևորագույն դեր պիտի խաղար: Հայկական բատերախմբերի թուրքերն ներկայացումների լեզուն, եվրոպական գրականուրյունից կատարված թարգմանուրյուններն ու պիեսների վերածված գործերը, աղապտացիանները դարձան այդ հեղափոխական շարժման հիմնական գործիքներն ու գլխավոր հիմքը: Հայատառ թուրքերէն թարգմանական հարուստ գրականուրյունը, որի մի մասն էր կազմում բատրոնի համար գրականուրյունը՝ հասկանալի էին ընթերցողներին, հանդիսատեսներին: Հայկական բատերախմբերի շորջ հավաքված թուրք լուսավորիչ հեղինակները որքան էլ որ ձգտում էին, այնուամենայնիվ չեն կարողանում դուրս գալ օսմանների ազդեցուրյունից: Նրանց երկերը, որ այսօր առատորներ հրատարակվում են Թուրքիայում, թարգմանուրյուններ են՝ թուրքերնից նոր թուրքերէն: Մինչդեռ հայ թարգմանիչների ու հեղինակների երկերը մինչ օրս էլ կարելի է դյուրուրյամբ հասկանալ: Այն արդյունք է հայ թարգմանիչների լեզվաբանական բացառիկ օժտվածուրյան, բառսկազմուրյան նկատմամբ հատուկ տաղանդի: Եվ այս գործում մեծ դեր են խաղացել բառարանները, տարբեր ոլորտների մասնագիտական, բազմաթեզու, անգամ ճանապարհորդական բառարանները, գրուցարանները, նամակների ու բազմապիտի գրությունների համար օրինակներ պարունակող հրատարակուրյունները:

Գևորգ Վրդ. Թերզիրաշյանի կենսագրուրյանն ամդրադառնալով, Գ. Քամպուրճյանը գրում է նաև, որ 1885թ. Վատիկանում 150 լուսանողների մեջ առաջինն է եղել, պարզեատրվել մեղալներով,

1 Tarih ve Toplum, 1986, N. 25, Stu նաև՝ Հասմիկ Ստեփանյան, Լուգինյան բազմավրական տան հայ ժառանգները, Եր., 2016, էջ 37-50.

ստացել դոկտորի աստիճան: Հռոմի Լեռն 13-րդ պապը նրա մասին խոսելիս ղիմել է՝ «Սա իմ հայն է» խոսքերով:

Սովորաբար իր հոդվածների սկզբում Գ.Քամալուքյանն ընթերցողներին է փոխանցում այս կամ այն թեմայով գրելու իր շարժառիթը: Հոդվածների մեծ մասը տպագրվել են որևէ անձի կամ իրադարձության հորելյանական տարեքվերի առքիվ: Դրանց մի կարևոր մասը պալատին կապված բարձրաստիճան հայերի մասին է, որոնք մաս են կազմել ամիրայական, փաշայական խավի, որևէ ոլորտի ղեկավար հանդիսացել: Այսպիսի լավագույն հոդվածներից է ծագումով կեսարացի արքունի ճարտարապետ Հովհաննես ամբողջ Սերվերյանի ծննդյան 200 ամյակին նվիրված հոդվածը¹:

Հոդվածների մեծ մասը նկարագրություններու և նաև՝ ձևավորություններու մի անձի, հիմնականում իր ժամանակակից բուքք գրագետի կամ գրագիտուուու: Մի շաբաթ հոդվածներ հիշեցնում են Թուրքիու Հայոց պատրիարքների մասին, նկարագրում որոշ կարևոր դեպքեր, պալատի հետ ունեցած նրանց փոխհարաբերությունների, նաև սուլթանների կողմից նրանց շնորհված պարզեցների, ֆերմանների մասին²: Դրանց տեքստերը սովորաբար պատմական կարևոր աղբյուր ներկայացնող նյութեր են:

Քիչ չեն եղել Թուրքիայի այս կամ այն ոլորտում արևմտահայության և նրա առանձին ներկայացուցիչների ունեցած ներդրման մասին, երբեմն՝ հակահայ, խեղաքյուրումներ պարունակող և կամ էլ՝ որևէ ասպարեզի կամ անձի մասին հոդվածները, որոնք տառապել են թերաժեռությամբ, աղբյուրներին տեղեկացված չլինելու միակողմանիությամբ և այլին: Բոլոր այս դեպքերում բարեխիղճ գիտնականն իր պարտքն էր համարում սրբազնել մտացածին կամ ակամա սխալները, թերությունները, կրկին ու կրկին ներկայացնելով հայկական աղբյուրների կարևորությունն ու եզակիությունն

1 Ünlü Hassa Mimarı Ohannes Amira Serveryan, Tarih ve Toplum, İst., 1987, N.46, s. 23-28.

2 Onsekizinci Yüzyılda Patrik Basmaciyana Verilen Cülaus Fermanı. Tarih ve Toplum, 1991, N, 88, s.37-40.

ապացուցող հսկա ցուցակներ: Ահա այդպիսի մի պատճառաբանություն էլ առիթ է հանդիսացել գրելու Կեսարացի Զարդարյան ընտանիքի և Գևորգ Զարդարյանի մասին¹: «Tarihi ve Toplum» ամսագիրը որպես կանոն սկսվում է «100 տարի առաջ այս ամսին՝ օսմանյան տպագրության պատմությունից» և «Հայութարություն և գովազդ» խորագրերով: Այն հիմնականում տարբեր պարբերականներից բերված պատառիկներ են, որ լույս են տեսել 1 դար առաջ: Զարդարյաններին նվիրված Գ. Բամպուրճյանի հոդվածը գրվել է ի պատասխան հերթական մի պատառիկի, որում Հաջի Էմին բեյի դաշնամուրային և քանաստեղծությունների հիման վրա գրված երգերի, եվրոպական նոտագրության, դրանց Զարդարյան հրատարակչատանը տպագրված լինելու մասին է: Գ. Բամպուրճյանը նյութը չիմացողներին ծանոթացնում է Զարդարյան փառավոր ընտանիքին ու օսմանյան տպագրության զարգացման պատմության մեջ նրանց ունեցած դերին: Հոդվածն այս գերդաստանի մի քանի հայտնի անդամների հրատարակչական բուն գործունեության մասին է:

«Tarihi ve Toplum» ամսագրի առաջին էջերը սովորաբար հատկացված են եղել նաև առանձին նամակների ու որոշ հոդվածների հակիրճ արձագանքներին: Այսուել, սկզբնական էջերում շատ հաճախ են եղել Գ. Բամպուրճյանի հրապարակումները՝ ուղղումների, քացահայտումների, լրացումների տեսքով:

Թատրոնին նվիրված հոդվածներին Գ. Բամպուրճյանը միշտ իր արձագանքներն է ներկայացրել: Նրանց մի մասը եքել վերաբերվել են զուտ քատերական ներկայացումներին, առանձին ստեղծագործությունների, անգամ քայլերգերին ու երգերին, ապա մյուս մասը եղել է առանձին դերասան-դերասանուիխների մասին, բուրք քատրոնի ստեղծման մեջ նրանց ներդրումը նկարագրող կենսագրական նյութերով: Նրանց հետ կապված հետաքրքիր դրվագներին ծանոթացնելու, նրանց մասին ավելի մանրամասն իմանալու համար

1 Tarihi ve Toplum, 1986, N. 34, s. 17-19.

հողվածագիրը հայերեն և բուրքերեն մի շաբթ աղբյուրներ է մատնանշում: Այսպիսիներից է օրինակ, հայ-բուրք բնեմերի պրիմադոննաներ Ռոզալի Պենլյանի, Քնար Սվաճյանի մասին ակնարկները: Երբեմն այսպիսի մի հողված գրվել է մի քանի մտացածին կամ հանիբաւի սխալների ճշումների համար: Մտացածին՝ քանզի որևէ անձի անվան մեկ տառը փոխելով այն հնարավոր է որպես բուրք ներկայացնել: Օրինակ, Գ. Բամպուրճյանն ուղղում է բուրք գիտնական Ուրիշինին, երբ նա որպես «Այլա Դյուզ» է ներկայացնում Այդա Դյուզ քարգմանչուուն և նման շատ ու շատ «մանրութներ»¹:

Բնականարար եղել եմ ոլրտսներ, թեմաներ, պոանձին պատմական անձինք, որոնց նկատմամբ բուրքական պատմագրությունն առանձնակի զգայուն վերաբերմունք ու վերապահումներ է արձանագրել: Ըարտարապետության բնագավառում, օրինակ այդպիսի տարբու է եղել Միմար Սինանի հայկական ծագման շուրջ: Երաժշտության ասպարեզում ընդունելով հանդերձ բուրք երաժշտության մեջ լիմոնճանական ծայնանիշերի ներդրման փաստը², շատ հիվանդագին վերաբերմունք է եղել բուրքերենով արտահայտված (հայատառ բուրքերենով գրի առնված) հայ աշուտների, բուրքական դասական երաժշտության տարբեր ասպարեզների հիմնադիր, կոմպոզիտոր Տիգրան Չուխաջյանի, իսկ բատրոնին նվիրված ոսումնասիրություններում՝ բուրք բատրոնի և դրամատուրգիայի հիմնադիրներից դերասանապետ Գյուլի Հակոբի (Հակոբ Վարդովյանի)³

1 Tarihi ve Toplum, 1985, haziran, s. 2.

2 Պարզվում է, որ մինչև 20-րդ դարի վերջերը, որոշ մեղեսներում շարունակել են ոսումնասուրյունն ու լիմոնճանական ծայնանիշերի օգտագործումը՝ մերժելով օտար, իստալական մոտագրությունը:

3 Հակոբ Վարդովյանի փառքն այնքան մեծ է եղել, որ բազմից փորձեր են կատարվել նրան բուրքացներու ուրբուրյանք՝ ընդիուկ նրան բուրքական գերեզմանոցում բաղեցվ: Ինարկել այս մտացածին պատմությանը գուցե նպաստել է Վարդովյանի կյանքի վերջին շրջանում, 1884 թվականից պարտական բատրոնի դեկավար լինելը Արդուլ Համիլ Ռ սուլթանի (1842-1918) օրոր: Գառնիկ Ստեփանյանի համոզմանը սովորանական այս բայլը դերասանապետին ոչ թե զնահատելու, այլ նրան պատժելու համար է արվել: Այդ շրջանում, 1882թ. Վարդովյանի բատրոնում մեծ

Ակատմամբ: Նյութի սրությունը հասկանալի կլինի, եթե ասենք, որ որոշների քորք լինելու ապացուցելու համար ներկայացվել է անգամ նրանց մահմեդականություն ընդունելու մտացածին պատմությունները: Որպես կանոն՝ նվազագույնի է հասցվել արևմտահայության ունեցած ներդրումը Օսմանյան կայսրության կյանքի ամենատարբեր ոլորտներում և կամ ընդհանրապես այն օանց է առնվել, փոխարինվելով քորքանպատ պատմություններով:

Գ.Քանդուրճյանը տայթեր առիթներով անդրադարձել է նաև Պողսի հայ քատերախմբերին, քատրոնի մարդկանց: **Գևորգ Չռպանյանի** (1861-1944) ինքնակենսագրությունը տպագրել է նրա փոխարինվելով քորքանպատ պատմություններով:

հաջողությամբ նմբանում էին քորք լուսավորիչ հեղինակ Ահմեդ Սիրիատի «Եօզինէլեր» (Չերքեզ ազգականներ) հերոսական դրաման: Հատ պայտա ուղարկված լոտեսազրերի, այդ ներկայացումը կայսեր հպատակների միջև թշնամություն էր՝ սերմանում: Թատրոնը փակելուց, պատժելոց ավելի սուրբանը հարմար է գռանում Վարդուլյանին գրկել քատրոնից՝ նրան իրավիրելով պալատական քատրոն: Առաջարկություն, որը հանագոր է եղել իրամանի: Ansiklopedik Sözlük բորբական և նբարագիտարանը գրում է, որ Վարդուլյանը մահմեդականություն է ընդունել Յակով Էֆենդի, Գյուղի Յաղուա անվամբ և մահացել. Այս անվանումը Գառնիկ Ստեփանյանը «Ուրվագիծ արևմտահայ քատրոնի պատմության» մեջ գրում է, որ ոչինչ չի նշանակում, քանի այն ընդամենը Հակոբ անվան քորքական տառադարձումն է:

Տես՝ Ansiklopedik Sözlük, 1st., 1967, № 11, s. 813-814. Այս մասին մի անգամ չէ, որ գրվել է բորբերի կողմից: Արևմտահայ քատրոնի պատմաբան Գառնիկ Ստեփանյանն իր «Ուրվագիծ արևմտահայ քատրոնի պատմության» եռահատոր աշխատության մեջ մի շարք փաստարկներով հերքում է այն, անզամ չընդունելով անձ դերասանապետի կողմից մահմեդականության առերես ընդունումը, համարելով այն ոչ հավաստի: Հակառակ փաստարկներից կարելի է համարել մահվանից առաջ հայ քահանան խոստովանակոր հետ հանդիպումը: Պոլսահայ մամուլն անդրադարձել է կայսրության տարածքում դավանափոխության յուրաքանչյուր դեպքի, ամենայն մանրամասնորեն ներկայացնելով փաստը: Այնպիսի հանրահայտ դեմքի, ինչպիսին եղել է մեծ դերասանապետը, նրա դավանափոխությունը չէր կարող լուրջան մատնվել հայկական պարերականների կողմից և շրմքահարվել քորքական մամուլում: Տես՝ Գառնիկ Ստեփանյանի «Ուրվագիծ արևմտահայ քատրոնի պատմության» (Եր., հ.2, 1962-75թ.):

մահվան 50 ամյակի առիթով¹, ափսոսելով, որ այս տաղանդավոր դերասանին քիչ են անդրադարձել թէ հայ, և թէ բուրք պարբերականները: Մինչդեռ Վարդովյանի «Օսմանյան քատրոնում», հետո՝ **Մարտիրոս Մճակյանի** «Օսմանյան դրամատիկ»-ում, իսկ Օսմանյան Սահմանադրությունից հետո՝ Ֆելիքյան քույրերի քատերախմբում կատակերգու այս դերասանը վայելել է իր հանդիսականների զերմ համակրանքը, կերտելով քազմաքիվ մեծ ու փոքր դերեր, իր իրական լուման ներդնելով քույրական քատրոնի զարգացման մեջ: 2-3 էջանոց այս կենսագրությունը հուզիչ պատմություն է աշջի ու քիչ իրականություն ունեցող մի որբուկի մասին, որին իրականության պատճառով 14 տարեկանում հանել են դպրոցից, սաղափազործ հորեղայրների մոտ աշակերտելու տարեն: Սաղափի փոշին ավելի է վնասել նրա առողջությանը: Պատրիարքարանում ներքին խնդիրների պատասխանատու Տեր Սուրբիանի մոտ օգնական են կարգել: Հազիվ 3 տարի ծառայելուց հետո 17 տարեկանում դառնում է Հակոբ Վարդովյանի քատերախմբի անդամ: Դա արդեն որոշ կյանքի համար էր: Կենսագրության մնացած մասը վերոհիշյալ երեք քատերախմբերում նրա ունեցած դերակատարություններին է վերաբերում: Օսմանյան սահմանադրությունից հետո, երբ իրմանադրվում էր քույրական քատրոնը, հայ դերասաններին հեռացրին թեմից, քողմնելով միայն որոշ հայտնի դերասանուիկների, քանզի այդժամ դեռ բրուիկն չէր համարձակվել թեմ եկալ: Չոպանյանը երախտագիտությամբ է հիշում, որ երբ իրեն ևս հանգստի կոչեցին, դերասան Նաշիդ բեյը (1886-1943) սիրված կատակերգուի ծերերը համբութելով ճանապարհ դրեց: Պոլսում էլ անելիք չուներ և 1931-ին մեկնեց ԱՄՆ: Քիչ խաղաց: Միսիրարվում էր ամերիկյան ականավոր կինոռեժիսոր Ռուբեն Մամուլյանի մոր՝ դերասանուի Վերժինի Մամուլյանի հետ ունեցած իր քարեկամությամբ, սիրով մասնակցում նրա

¹ Tarih ve Toplum, 1994, N, 125, s.43-44, Թատրոնի մարդկանց մասին հոդվածներում Գ.Բանպովճյանի հիմնական աղբյուրը Գառնիկ Ստեփանյանի «Ուրվագիծ արևմտահայ քատրոնի պատմության» գործն է (Եր., 1962-75թ.):

կազմակերպած բարեգործական ներկայացում-հավաքներին:

Շարունակելով թատրոնի թեման, Գ.Բամպուրճյանը գրել է Թագ-փոր Նալյանի (1843-1876) մասին: Շնորհալի թարգմանիչը, որ Հակոբ Վարդովյանի թատրոնի համար բազմաթիվ եվրոպական օպերետների լիբրետոններ է թարգմանել, տեղայնացրել, հայտնի է որպես Տիգրան Չոխաչյանի «Լերլերիջի Հոր Հոր աղա»-ի լիբրետիստ և մի բանի սիրված գուգերգերի երաժշտության հեղինակ: Նրա բուրքերենով լիբրետոնները բազմից տեղայնացվել են, փոփոխվել, մասնավանդ ֆիլմերի նկարահանման առիթներով¹: Երաժշտական թատրոնի այս հրաշալի նմուշը մինչ օրս չի իջնում թեմերից և շարունակում է մնալ մասնագետների ուսումնասիրությունների շրջանակում: Թագ-փոր Նալյանը բուրքական օպերետի պատմության երախտավորներից է համարվում: Վերջին անգամ թեմ է բարձրացել Վարդովյանի թատերախմբի «Լիոնի սուրհանդակը» պիեսում: Վայելել է Հակոբ Պարոնյանի մտերմությունը: Այդ տաղանդավոր երիտասարդը 35 տարեկանում հրաժեշտ է տվել կյանքին:

Թատրոնի մասին հաջորդ հոդվածը հայ և բուրք թատրոնների ամենահայտնի դերասանապետներից Մարտիրոս Մնակյանի (1837-1920) մահվան 50 ամյակի առիթ է գրել²: Դերասանապետը 1854-1919թթ. թեմում գտնվելու 65 տարիների ընթացքում շուրջ 300

1 «Լերլերիջի Հոր Հոր աղա» -ի 140 ամյակին է նվիրված (1875թ.) բուրք երաժշտագետ Էֆդալ Սևինչի ուսումնասիրությունը՝ Efdal Sevinçli, Leblebici Horhor Ağa Operetinin 140 Yıllık Serüveni (İst., 2016, 192+30 էջ): Հեղինակը սիրավոր էր եղել և մեզ գրքի մեկ օրինակ է նվիրել: Գրքում ի մի են թերված օպերետի տարրեր տարրեր տարիների ներկայացումների լիբրետոնները (հայատար բուրքերենից ժամանակակից լատինատառ բուրքերնենի վերածված), նույսներ, ազդագրեր, լուսանկարներ: Առաջարանում Էֆդալ Սևինչին իր երախտագիտությունն է հայտնում պղսահայ դերասան և թատրոնի պատմարան Պողոս Չալգճրովոյին գրքի հրատարակության գործում ցուցաբերած մեծ օգնության համար: Արժեքավոր այս աշխատությունը, բացի օպերետային մշակույթի մեջ կարևոր ներդրման, նաև՝ երախտագիտության տուրք է այն ստեղծողների հիշատակին:

2 Hayat Tarihi Mecmuası, 1971, N, 11, s.32-34.

դեր է խաղացել: Հողվածում հիշվում է այն մասին, որ 1890թ. Եղիք-նեյում հյուրախաղերի ժամանակ նրան հայտնում են որդու՝ Արշակի մահվան մասին: Նա չի բողնում, որ ներկայացումը տապալվի ու ինքը՝ տապալված հոգով շարունակում է խաղալ: Նույնային դեպք է հիշվում մեծն Սիրանույշի հետ կապված: Հետաքրքիր է, որ այս հողվածում որպես հիմնական նյութ Գ.Քամպուրճյանը ներկայացնում է Մնակյանի ինքնակենսագրությունը: Սրանք հետաքրքիր վավերագրեր են հայ և բուրք քատրոնի պատմության ուսումնասիրության համար:

Այն հողվածները, որոնք գրված են հանրագիտարանների համար, նրանց պատվերով՝ շատ փոքր ծավալի են՝ համարյա մեկ էջ: Այդպիսին է հանրապետական շրջանում Ազանյան եղբայրների եռյակի մասին հողվածը, գրված «Ստամբուլի Հանրագիտարանի համար»¹: Վահագն (ջութակահար), Վարուժան (դաշնակահար) և Վարդան (մեներգիչ) Ազանյանների տրին (1940թ.) եղել է Թուրքայի սիրված երաժշտական խմբերից: Նրանք Գևորգ արք. Ազանյանի բոռներն են: Սաս են կազմել Ստամբուլի «Զաղարային ուղիղյի» սիմֆոնիկ նվագախմբերի:

«Քնար Հայկական», «Նուագ Օսմանեան», «Օսմանեան երաժշտութիւն» (օսմաններեն, հայերեն, ֆրանսերեն, հունարեն տիտղոսաթերթով) պարբերականները աննախնճաց նորություններ էին Օսմանյան կայսրության մշակութային, երաժշտական կյանքում: Նրանք մեծ-ընդունելություն գտան հայկական և օսմանյան մքննութուում: Նրանցում տպագրվել են և՝ հռ.գևոր, և՝ բուրքական ու հայկական երգեր, նաև՝ հայ և օտար կոմպոզիտորների փոքր ստեղծագործություններ, երգեր, քայլերգեր, վալս, պոլկա (Չուխացյանից): 1875թ. Նիկողոս Թաշճյանն իր եղբոր հետ միասին հրատարակում է «Նուագ Օսմանեան» կիսամսյա թերթը: Նրա առաքելությունն էր դաշնամուրի և այլ գործիքների համար դաշնավորներ արևելյան երաժշտության ընտրանի նմուշները: Այն 10 համար է միայն ունե-

1 İstanbul Ansiklopedisi, c.2, İst., 1959, s. 1121-1122.

նում, որին և Գ.Քամպուրճյանը նվիրել է իր հերքական հոդվածը:¹

Գ.Քամպուրճյանը նախընտրելի է համարել հայատառ քուրքերն հրատարակությունների միջոցով ամսղաղաղնալ այնպիսի նյութերի, որոնք իրենց հետ նաև նորություն են բերել Կայսրություն: Այդպիսիք շատ են: Իր մի հոդվածում Գ.Քամպուրճյանը հայատառ քուրքերն «Խեյալ» երգիծաբերքի մասին է գրել²: Այն ունեցել է նաև արարատառ քուրքերն (օսմաներեն) տարբերակ: Նորությունը հետևյալում էր. նախ՝ քուրքերնով առաջին երգիծաբերք, երկրորդ՝ պարբերականներում սկիզբ է դրվում ծաղրանկարների, շարժերի ներմուծմանը, որը եվրոպական մամուլում արդեն կայուն տեղ էր գրավել: Այն բնականարար զարկ պիտի տար նաև ծաղրանկարչության զարգացմանը: Այս պարբերականի էջերում հանդես են գալիս առաջին ծաղրանկարիչները, եվրոպական և կայսրության քաղաքական դեմքերի նրանց շարժերը, կենցաղային թեմաներով ծաղրանկարները: Հողվածը համեմված է ծաղրանկարներով: Օսմանյան մամուլի 100 ամյակին նվիրված հոդվածաշարերից հայտնի խմբագիր և քարգմանիչ Երվանդ Թողարքյանի «Սէճնուայի Ախապար» (1884-1907թթ.) օրաբերքին նվիրված հոդվածը իրեն իրենց տեղը դնող հերքական պատասխան է³ փաստերը խեղաքուրել փորձողներին:

Գ.Քամպուրճյանի մեղմ բնափորւթյան, իր ժամանակակիցների հետ բարի հարաբերությունների ապացույցներից կարելի է նկատել որևէ անվանի հայի հորելյանական տարերվի առթիվ գրած հոդվածի ձոնելը որևէ քուրք մտափորականի: Նա քուրք և պոլսեցի օտարազգի գիտնականների մասին ևս հանդես է եկել հոդվածներով, նրանց տարեղարձերի առթիվ, ներկայացրել նրանց գործունեությունը: Այդպիսի հեղինակներից է գերմանացի Առքերտ Անհե-

1 Tarih ve Toplum, 1990, N, 82, s.22-23.

2 Tarih ve Toplum, 1987, N, 42, s.36-40. Տես՝ Յասմիկ Ստեփանեան, Հայատառ Թուրքերէն Գրերի և Հայատառ Թուրքերէն Պարբերական Տամուլի Մատենագիտութիւն, Ստամբուլ, 2005, էջ 577, հ.38. Tarih ve Toplum, 1987, N 42, s.36-40.

3 Tarih ve Toplum, 1987, N, 46, s.2.

ԳԵՐԾ¹, որի գոմե մեզ ծանոք հողվածները աշքի չեն ընկնում հայերի ու հայկական մշակույթի նկատմամբ հարգալից վերաբերմունքով ու համակրանքով, եթե հակառակը շասենք: Նա գրել է Օսմանյան կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում հայերի և նրանց ներքին տարածայնությունների, պայքարի մասին²: Ծայրահեղ քուրքամետ պոլսարնակ հեղինակ է: Բամպուրճյանը պարբերաբար անդրադարձել է իր «սիրելի բարեկամի» հրատարակություններին, գրախոսականներով հանդես եկել նույն «Tarih ve Toplum» ամսագրի նոր գրքերին նվիրված բաժնում³:

Քառահատորյակի Գ հատորն ավարտվում է հրատարակիչների կազմած հետևյալ հողվածներով՝ **Աւոնի Ալիշանի «Սիսուան»-ի մասին⁴**, **Պ.Ինճիճյանի** առանձին ուսումնասիրությունների⁵, **«Երզնկան ըստ» Ղուկաս Ինճիճյանի⁶**, «Գալաքայի հրդեհի աշտարակն ըստ Ինճիճյանի», 1855թ. Բուրսայի երկրաշարժի⁷, Իզմիրի երկրաշարժային գոտու⁸, ի պատասխան Արարատ լեռան մասին մի հողվածի⁹, ի պատասխան **Միփրարյան միարանության** դեմ գրված հերյուրանքների¹⁰:

Քառահատորյակի չորրորդ հատորը անվանվել է «Biyografileriyle Ermeniler» (Հայ կենսագրություններ): Հետաքրքիր է այս հատորի շապիկը: Սա նկարիչ **Դմիտրի Նալբանդյանի**

1 Tarih ve Toplum, 1988, N 57, s.57-58.

2 Robert Anhegger, Bir Hıristiyan ve iki Ermeni. Osmanlı Devleti'nde Hıristiyanlar ve İç Tartışmalar, Tarih ve Toplum, 1987, N 47, s.17-20.

3 Tarih ve Toplum, 1988, N 57, s.185.

4 Hayat Tarih Mecmuası, 1973, N 1, s.75-79.

5 Tarih ve Toplum, 1986, N 26, s.61-62.

6 Tarih ve Toplum, 1993, N 114, s.43-47.

7 Tarih ve Toplum, 1986, N 6, s.22-25.

8 Tarih ve Toplum, 1989, N 70, s.51-52.

9 Tarih ve Toplum, 1987, N 37, s.23-24.

10 Tarih ve Toplum, 1985, s.311-315. Tarih ve Toplum, 1986, N 26 s.60-62. Tarih ve Toplum, 1986, N 28, s.46-47 և Tarih ve Toplum, 1986, N 33, s.2-3.

«Վերնատան» հայտնի նկարն է,որ հայ մտավորականները մեկտեղված են դաշնամուրի առջև նստած Կոմիտասի շուրջը: Միայն վերջին՝ Դ-հատորն է,որ կազմված չէ նախկինում տպագրված հոդվածներից:

Շորջ 3500 կենսագրությունները հավաքել են իմբնականում մատենագետի արխիվում առկա կենսագրական նյութերից: Հեղինակը նույնիսկ չի նախատեսել այն ներկայացնել որպես կենսագրական բառարան: Դրանց մի մասը ուսումնախորությունների, տպագրված և անտիպ հոդվածների նյութեր են եղել: Մյուս մասը՝ եղել են հոդվածներին կից, տեքստերի վրա հավելագրված, նշումների ձևով: Կենսագրականների ահա այս երկու տեսակներից է կազմված վերջին հատորը՝ շնորհիվ հրատարակիչների ու խմբագրի տրնաջան աշխատանքի:

Սեկ էջից մինչև մեկ տող պարունակող այս կենսագրականները շատ օգտակար ծառայություն կարող են մատուցել: Իհարկե՝ այն վերջնական ստուգման, խմբագրման չի ենթարկվել և վիճելին շատ է այստեղ:

«Խմբագիրը, խղճամիտ ու գլուխական թծախմնդրութեամբ իրարմէ զատորոշած է երկու տեսակ կենսագրականները, առաջինը՝ լայնաշունչ ու հեղինակին կողմէ գրի առնուած իր ամբողջական կենսագրութիւն, երկրորդը՝ միայն մեկ կամ երկու տողով, հեղինակին կողմէ գրուած որպէս սինակներու տակ ենթատեղեկութիւն: Առաջինները տպուած են մեծատառ, իսկ երկրորդները գրուած են մանրատառ: Այս կերպով հարգուած է հեղինակին գլուխական վարկը, քանի որ ողբացեալ Բամպուրճեան անշուշտ երբեք չի երեւակայած, թէ իր այդ ցիրուցան կենսագրական նօրերը օր մը պիտի կարենային մեկտեղուիլ որպէս կենսագրական բառարան», -գրում է Պոլսի «Մարմարա» օրաթերթի խմբագրապետ, մեր ժամանակի մեծագույն մտավորականներից Առեւր Հատտենյանը¹:

1 Գ. Լեռնյան, Հայ աշուղները և նրանց արվեստը, Ե., 1944, էջ 34: Տես նաև՝ Ամիրյան Խ.Պ., Սիրո թեսան բորբակող հայ աշուղների երգերում. «Արևելագիտության հարցեր» ԵՊՀ ժողովածուի 1-2 համարում, Եր-

Քառահատորյակի իրատարակիչ Օսման Ջոքերն իր առաջարկում, զնահատելով բուրքական հանրագիտարաններին աշխատակցելու Գ. Բամպուրճյանի վաստակը, նշում է, որ նա որպես հայ է դասել նաև այն անձանց, որոնք, հայկական ծագում ունենալով հանդիրձ, ավելի ուշ ընդունել են մահմեղականություն, ինչպէս օրինակ բուրք իրականության ամենահայտնի անուններից մեկը՝ Միմար Սինանը¹: 450 էջերում տեղ են գտել նաև մի շարք հայտնի բանաստեղծներ, աշուղներ, որոնք բուրքերն ծածկանուներ են ունեցել: Դրանցից են, օրինակ, «Նիհատի» անվան տակ՝ Կ.Պոլսի հայոց պատրիարք Հակոբ Նալյանը (1701-1764), 18-րդ դարի աշուղ Կարսպետ Գըրդանը՝ հայտնի որպես «Քարաջառլան»։ Կենսագրական հատորում օսմանցիների պաշտամունքի առարկա ճարտարապետություն է գտել որպես «Սինան» կամ «Քոնճ Սինան»։

Բոնի մահմեղականացվածների ազգային պատկանելության հարցը չի կարելի միակողմանի ընկալել: Առավել ևս, եթե այն հասուն մարդու այլակրոն դառնալու իմքնուրույն որոշում չի եղել: Սա յուրաքանչյուրի համար առանձին քննարկելի որոշում է, մանավանդ որ այդ անձանց շատերի ազգային զգացողության պահպանում արդեն խոսում է ի վեան նրանց «բուրքականության»։

Դ. հատորն արժեքավոր է նաև նրանով, որ գրի վերջում տեղ է գտել Գ. Բամպուրճյանի հայերեն ուսումնասիրությունների, առանձին հոդվածների լատինատառ հայերեն ցանկը: Օսմանյան կայսրության պատմությանն ու մշակույթին վերաբերող հարուստ նյութերը շափազանց հետաքրքիր են նաև հայ մշակույթով հետաքրքրությունների համար:

1983, էջ 230) և Ամիրյան Խ. Պ., Թուրքական հայ աշուղներ, Օսմանյան Կայսրություն. 16-20-րդ դարեր, 1990, Օլիս-սու Բուս (Ֆրանսիա):

¹ Tarih ve Toplum 1988, N 1, s.219-220. Այս նույն ամսագրում Սիմար Սինանի արմատների որտեղից լինելու մասին է գրել նաև Հակոբ Սկասպանը. *Sarı Tarih ve Toplum* 1985, N 7, s.41-43

Գևորգ Քամպուքճյանի հայերեն աշխատությունները¹

Պոլսոն Շնորհը արք.Գ.Ավուտյան պատրիարքի պատվերով Գ.Քամպուքճյանը պետք է մենագրություններ պատրաստեր 17-18-րդ դարերի մեր ամենահայտնի հոգևոր գործիչների՝ Հովհաննես Կոլոտ, Հակոբ Նալյան և Պողոս Կաղզվանցի Կ.Պոլսոն պատրիարքների մասին: Հովհաննես Կոլոտի և Հակոբ Նալյանի մասին ուսումնասիրությունները արժեքավոր մենագրություններ են: Այս աշխատություններում արտացոլվում է արևմտահայ իրականություն Մերիսութած կաթոլիկական կրոնի, դրա դեմ ուղղված հայ ժողովրդի պայքարը, որ դեկավարում էին Կ.Պոլսոն պատրիարքները հայ գործարար սերուցքի և առաջարեն մտավորականության հետ միասին: Հովհաննես Կոլոտի ստեղծած «Գրական-քարգմանական» դպրոցի, նրա ականոնությունները շարունակող Հակոբ Նալյանի գործունեությամբ են պայմանավորված եղել այդ շրջանի գրական ժառանգության կարևոր նաև կազմող հայատառ բուրքերեն ինքնուրույն և քարգմանական գործերը: Անոնի փաստական նյութ է ամբարված այս մենագրություններում, որը մեր ժողովրդի պատմության շատ ու շատ անհայտ էջերի վրա լույս է սփռում, քազմաքիվ նոր մանրամասներ ի հայութեարություն նյութ է: Փաստական հարստագույն նյութ, որը կարող է աղբյուր ծառայել մի քանի լուրջ ուսումնասիրությունների համար, մանավանդ, որ այս արժեքավոր նյութն ինքնին կիարստանա դրանց քննական մոտեցման արդյունքում: Այս աշխատությունների մեծագույն արժեքներից է Կ.Պոլսոն Հայոց Պատրիարքարանի առաջնորդների, հոգևոր գործիչների և Սլովաքարյան միաբանության հայերի, մասնավորապես Սլովաք Սերբաստացու ու մյուսների միջև նամակագրական հարուստ նյութը, որը նոր էջ է հայ դավանաբանական իրականության մեջ՝ միջնեկեղե-

1 Գևորգ Քամպուքճյանի բուրքերեն աշխատությունների քառահատորյակի հետմահու հրատարակության 4-րդ հատորում կազմողները փորձել են ի մի բերել նաև նրա հայերեն հոդվածների ցանկը լատինատառ հայերենով:

ցական հարաբերությունների արտացոլման տեսակետից: Ի տարբերություն մեզ հայտնի հասունյանական պայքարի շրջանի՝ Սխիքարյանների հետ այս կապը չափազանց հոգիչ է ու շատ հետևողինների ակնկալող, ի շահ մեր ժողովրդի տարրեր եկեղեցիների ու նրանց հովապետերի միջև հարաբերությունների լուսարանման առումով: Համակրանքի այս զգացումների, գործունեության որոշ հարաբերակցության փաստը, որ ամփոփվել է նամակներում, մինչ օրս հիմնականում ի ցույց չի դրվել:

Համոզված ենք, որ Պողոս պատրիարքարանի ձեռագիր նյութերը, արխիվը, որի մի մասը միայն հասցեց ուսումնասիրել մատենագիտ Բամպուրճյանը, մեր ժողովրդի, նրա եկեղեցական, դավանարանական կյանքի, պատմության վերաբերյալ կարևորություն ներկայացնող դեռ շատ հետաքրքիր աղբյուրներ են պարունակում, որոնք սպառում են ուսումնասիրողներին:

Գ.Քամպուրճյանը նպատակ ուներ գրել նաև Գրիգոր Շղբայակիր պատրիարքի մասին, սակայն Պողոս Կաղզվանցու և Գրիգոր Շղբայակիրի մասին աշխատությունները մնացին որպես չիրագործված երազներ:

Գ.Քամպուրճյանի հայերեն իրատարակություններն են

1. Ակնցի իհմ գերդաստաններ ու դեմքեր, Խոր., 1956թ. (Թորոս Ազատյանի «Ակն»-ում):
2. «Շողակար»¹ տարեգիրը, որ 1970թ. սկսյալ համարյա բոլոր

1 «Շողակար» կրոնարարոյական, տրամարանասիրական, գրական ամսագիր, պարբերագիրը, ապա՝ տարեգիրը (1970թ.), Թուրքիայի Հայոց պատրիարքության Սր Խոչ Դարենվանքի պաշտոնական իրատարակություն: Լույս է տեսնում 1952 թվականից, Ստամբուլում: Հրապարակում է Ամենայն Հայոց կարողիկության և պատրիարքարանի պաշտոնական հաղորդագրությունները, ծանոթացնում Կոստանդնուպոլիսի հայոց պատրիարքության առօրյային: Տպագրում է հայ պատմագիրների, մատենագիրների, տաղերգունների, համաշխարհային դասականների, արևմտահայ և հայ խորհրդային հեղինակների ստեղծագործություններ:

- հողվածները պատկանում են Գ.Քամպուրճյանի գրչին:
3. Մատենագիտութիւն Հանրապետական Հիմնամեա Շրջանի Ստանդարտահայ գրքի (1923-1972)¹:
 4. Յակոբ Նալեան Պատրիարք 1706-1764. կեանքը, գործերը և աշակերները, Խար., 1981թ. 279 էջ:
 5. Յովիաննես Պատրիարք Կոլոտ (1678-1741) և իր աշակերտները, Խար., 1984, 415 էջ:²
 6. Պատմութիւն հրակիզման Կոստանդնուպոլսուն:³
- Գ.Քամպուրճյանի գիտական գործունեությունը ուրույն դրոշմ է կրում: Այն հիմնականում կապված է մեր ժամանակների Պոլստ ամենապայծառ պատրիարքներից Շնորհը արք. Գալուստյանի գահակալության շրջանի հետ:
- Շնորհը արք. Գալուստյանը Թուրքիո հայոց պատրիարքարանի ու նրա գիտնական պատրիարքների, գիտության հովանավորների՝ Հովիաննես Կոլոտի, Մաղարիա Օրմանյանի գործի արժանավոր շարտնակողն է եղել: Նրա գործունեության կարևոր ոլորտներից մեկը հայագիտական ուսումնամիտություններ հրատարակելու ծրագրերն են եղել: Նա 1961թ. «Վերակենդանացրեց» Գարեգին Պատրիարք Խաչատուրյանի «Շողակար» գիտական մատենա-

1 «Շողակար»- 1976-78թթ. համարներում:

2 Գ.Քամպուրճյանն է հեղինակել Պոլստ հայտնի պատրիարքների ու ականավոր որոշ ճտավորականների հորելյանական տարեփառների առթիվ Պատրիարքարանի նախատեսած հանդիսությանց փոքրածավալ շքեղ հրատարակությունները: Դրանցից են Հովիաննես Կոլոտին, Հակոբ Նալյանին նմիւրված գրքույկները, ինչպես նաև «Պրոտացի Յովիաննես Տերյենց Սեծ Մտատրականի Յիշատուկի Ոգեկոչում Մահուան Հարիբարձեակին 1801 առիթով 1888» (Խար. 198860 էջ), «Յիշատուկի Ոգեկոչում Տ.Ներսէս Վարժապետեան Ազգասելք Պատրիարքին Հայոց Թուրքիոյ իր Մահուան Հարիբարձեակին առիթ» (Խար. 1985, 48 էջ): Այս հրատարակությունն արժեքավոր է նրանով, որ վերջին էջերում տեղադրված են Պատրիարքի նահիւն առիթով Տիգրան Չուխացյանի հեղինակած «Մահանուազ»-ի (Marche Funèbre) Արամյան հրատարակության կողմից տպագրության տիտղոսարերը (հայերեն և ֆրանսերեն) և նուանները:

3 «Շողակար»- 1991թ. համարում:

շարը (1952-58թթ.): Այն ստեղծվեց «հայագիտական, պատմաբանափրական անտիպ գործերը լույս ընծայելու, նոր ուսումնափրություններ իրատարակելու, հայ պատմաբանափրությունը ճոխացնելու» նպատակով:

Նակատագրի բոլոր դառնությունները ճաշակած գրասեր այս մտավորական այրը դույզն իսկ շարություն չունեցավ և միշտ ու ամենուր հավատք, առարինություն, բարիք, լույս, հույս ու սեր էր ամփոփում իր անձի ու գործի մեջ, տարածելով այն իր շրջապատմ: Նրա ուղղորդությամբ, պատվերով ու հովանափրությամբ են կատարվել գիտական մի շարք ուսումնափրություններ, այդ թվում նաև Գ. Քամպուրճյանի կողմից: Շնորհք Պատրիարքի շրջանում Պոլիսը տոնում էր մեր անվանի եկեղեցական հայրերի, մասնավորապես գրական առատ հունգը տնեցած, մեր եկեղեցու և ժողովրդի կյանքում ճակատագրական դեր խաղացած պատրիարքների հորելյանները, հրավիրում միջազգային գիտաժողովներ, հրատարակում հորելյանական գրքույկներ և գիտական իրական արժեք ենրկայացնող ուսումնափրություններ: Վերջիններից են Գ. Քամպուրճյանի հեղինակած Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի (1678-1741) և Հակոբ Նալյան (1706-1764) Պոլսու Պատրիարքների 300 և 275 ամյակներին նվիրված հորելյանական շքեր գրքույկներն ու մենագրությունները, որոնք առաջին ընդարձակ ուսումնափրություններն են ԺՇ դարի մեծագույն մատենագրի ու աստվածաբանների մասին:

Երկու ուսումնափրություններն էլ սկսում են Ծայրագոյն Պատրիարք և Կարողիկոս Ամենայն Հայոց Վազգեն Ա-ի ողջույնի և օրինության գրություններով և Շնորհք պատրիարքի գիտական անշառ, համառոտ առաջարաններով:

1981թ. հրատարակված «Յակոբ Նալեան Պատրիարք (1706-1764), կեանքը, գործերը և աշակերտները» գիրքը բազմակողմանի ուսումնափրություն է: Շնորհք Պատրիարքն իր առաջարանում մեջբերում է Մադաքիա Օրմանյանի տողերը. «Առանց վարանանք կրնանք յայտարարել, թէ Նալեան Կ. Պոլսոյ Պատրիարքա-

կան Աքոռին վրա *գրական արդիսավորութեամբ և ուսումնական արժանիքով* ամենէն բարձր անձնավորութիւնը եղած է, ոչ միայն իր հմտութեամբ եւ աշխատութեամբ, այլև ուսումը տարածելու համար բափած ջանքով» (ԱԶԳԱՊԱՏՈՒՄ.էջ 3037):

Իրապես, ուսումնական գործին ուղղված ջանքերով, դասախոսությամբ ու մանավանդ իր կրթած աշակերտներով, գրական գործունեությամբ Հակոբ Նալյանը մեծագույն բափ է հաղորդել արևմտահայ վերածննդի շարժմանը, գրում է Շնորհը Պատրիարքն առաջարանում:

Ակնցի Հակոբ Նալյանի մասին գրքում ամենայն մանրամասնությամբ պատմվում է Նալյան վարդապետի, Եպիսկոպոսի, Երուսաղեմի պատրիարքի, Պոլսու պատրիարքության, հիվանդության ու վախճանի մասին: Ոչ մի կարևոր հանգամանք այս գրքում չի շրջանցված՝ ծնունդից մինչև հուղարկավորություն, տապանագրի տերսող, բարեգործությունները, գրքերի իրատարակությունների մեկենասությունը, կնիքները, աշակերտները, 1746թ. տպագրված «Ուսկեփորիկ»-ի և 1762թ. Իզմիրում լույս տեսած Եզնիկ Կողբացու «Գիրք ընդդիմութեանց» (Եղծ աղանդոց) գրքերի առաջարանները, 1764թ. կտակագիրը¹:

Գրքին առանձին հետաքրքրություն են հաղորդում Նալյանի ժամանակակիցների, աշակերտների բողած գրությունները Նալյանի կյանքի առանձին կարևոր իրադարձությունների, բողած աստվածաբանական ու գրական ժառանգության մասին: Մատենագետը շնորհակալությամբ է անդրադառնում Նալյանի մասին գրած հեղինակներին, հոդվածներին: Հիշատակությունների մաս են կազմում Նալյանի անունը պարունակող վիմագիր երեք արձանագրություններ, նորահայտ աղբյուրներ ու վավերագրեր, նրա մասին առանձին հետաքրքիր պատմությունների շարադրում, նամականի, Նալյան գերդաստանի այլ դեմքերի մասին: Հակոբ Նալյանը առանձ-

1. Երուսաղեմին նվիրած գույքերի մասին գրությունը Գ.Բամպուրճյանը հրատարակել է 1970թ. «Շողակաք» տարեգրում:

Որպես հավելված Գ.Բամպուրճյանը մի քանի չափազանց տարբեր, հետաքրքիր աղբյուրներ է ներկայացնում, որոնք արդեն աշխատանքի ավարտին եր գտել և որոնք տերսուում տեղ չին գտել: Դրանցից մեկը Օսմանյան կայսրությունում հպատակ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ պալատի կիրառած հետևողական ջաղաքականության հերքական ապացույցներից է: Այն է՝ եթք մի ժողովրդի քշնամացնում էին մյուսի նկատմամբ, որպեսզի վերջիններս չկարողանային համախմբվել պալատի դեմ: Այդ միջոցներից եր մի ժողովրդի նկեղեցին մյուսին տալը: Հաճախ այս քայլն օգտագործվել է հայերի և հույների նկատմամբ՝ երկարատև քշնամանք սերմանելով կողմերի միջև: Հավելվածում հեղինակը աղբյուրագիտական քազմաքիվ ճշգրտումներ է անում, համեմատելով մի շարք ծանոթ ու մինչ այդ անձանոր աղբյուրներ:

Հակոբ Նալյանն աստվածաբանական երկերի² կողքին տպագիր ու անտիպ հայերեն ու հայատառ բուրքերեն սրանչելի տաղերի, ուսանավորների, քառյակների հեղինակ է։ Զեռագիր երգարան-

¹ Յակոբ Նալեան Պատրիարք 1706-1764. կեանքը, գործերը և աշխանութեանը, Խաչ., 1981թ. էջ 160:

2 «Գիրը կոչեցեալ Ձեն Հոգեւոր»-ն ունեցել Յ տպագրություն և ծառայել նաև որպես դասագիրք: Երեք մասից բաղկացած երկի Բ և Գ մասերը հայատառ բորբերն են: *Տես՝ մեր «Հայատառ բորբերն զրերի Եւ հայատառ բորբերն պարբերական մասով մատենագիտութիւն»*, Ստամբուլ, 2005, N 8, 29, 103, 212, 371, 1029.

ներում նրա ստեղծագործությունները գրի են առնված հիմնականում «Նիհատի» ծածկանվան ներքո: Երանի մի օր լույս ընծայվի այս սրեմավոր տաղերգուի հայերեն ու հայատառ թուրքերեն շափած ստեղծագործությունների գլուխական հրատարակությունը:

Հակոբ Նալյանի միասին գրի վերջում տրվում է ամենայն քծախնդրությամբ կազմված հայկակական և օտար աղբյուրների մատենագիտությունը, անձնանունների և տեղանունների, հեղինակի հայերեն և թուրքերեն աշխատությունների ցանկերը:

Երկրորդ մենագրությունը նվիրված է Հովհաննես Կոլոտ պատրիարքին (1678-1741) Թուրքիայի հայ պատրիարքներից ամենամեծ, ամենապայծառ դեմքին, որը արևմտահայության զարթոնքի ռահվիրան եղավ: Նս կատարելության մոտ անձ է եղել մի երկրում, ուր 115 տարվա նջջ (1600-1712թ.) պատրիարքական Արոռ են բարձրացել 55 դեմքեր՝ շուրջ 60-70 անգամ, ընդամենը 2-3 տարի միայն պատրիարքություն անելով: Պոլսի գրավումից հետո 1461թ. Հայոց պատրիարքական արոռի հիմնադրման փաստը մեր ժողովրդի համար ճշանակալի հանգրվաններից է եղել: Անշուշտ, առաջին 250 տարիները, որքան էլ որ կարևոր, սակայն այնքան էլ դրական ու լուսավոր չեն եղել արևմտահայոց հոգևոր ու մշակութային կյանքում: Հետազայում միայն, շնորհիվ Հովհաննես Կոլոտ, Հակոբ Նալյան, Շոբայակիր պատրիարքների ամրապնդվեցին ու անկումից փրկվեցին Պոլս և Երևանականի պատրիարքությունները, դրանով իսկ զորացնելով 1441թ. Կիլիկիայից Էջմիածին տեղափոխված Հայրապետական Արոռը:

Հովհաննես Կոլոտի շրջանը բարդագույններից է եղել արևմտահայոց համար: Օսմանյան կայսրությունը սկսել էին ողողել Եվրոպական տերությունների ու Հռոմի միսիոններները, ծրագրելով Կայսրության մասնատումը միմյանց միջև: «Արևելյան» հարցի իրականացման ջատագովներ էին նույն այդ երկրների դեսպանատները, երկրով մեկ տարածված հյուպատոսական կորպուսները: Նրանք Օսմանյան կայսրությունում քրիստոնյա հպատակների միջոցով

կաքոլիկուրյան տարածման գլխավոր ուժերն ու միսիոներների հովանավորներն էին: Դեսպաններից մինչև պալատական բժիշկ և հարեմի ուսուցիչներ, նրանք իրենց ազդեցությունն էին տարածել անգամ պալատում, փաշայական ազդեցիկ շրջանակներում: Իսկ կաքոլիկական տարրեր ուխտերի կրողմից հիմնադրվող Եկեղեցիները արևմտահայ նքնուրուտում վերածվում էին առաքելական կրոնի և կաքոլիկուրյան միջև սուր պայքարի կենտրոնների: Ցավոր սրտի պոլսահայության սերուցքը հանդիսացող ամիրայական ու փաշայական շրջանակները, որ Եվրոպական առաջադիմական գաղափարների ու կրուրյան գնահատողներ էին, դյուրությամբ հակվում են դեպի կաքոլիկուրյուն, արևմտահայության ապագան կապելով Եվրոպական զարգացման հետ: Ավելի ուշ նրանք հասկանում են այս քաղաքականության հայաշինչ, մեր ժողովրդին մասնաւոր, միմյանց դեմ լարող, կործանարար հետևանքները:

Ահա այս քաղաքույն շրջանում է Արռո քարձրանում Հովհաննես Կոլուսը: Մինչ այդ մեր Եկեղեցին անընդհատ կորուստների շղթա է գրանցել: Ամենախոսուն օրինակներից է կաքոլիկների դեմ սուր ու անհանդուրժող պայքար հայտարարած Ավետիք Եվդոկացի (զահակալել է 1702-03թթ., 1704-06թթ.) Պոլսուն Քրանսիայի դեսպանի մասնակցությամբ նրան առևանցել են, քանտարկել Բաստիում, մահկանացուն կնքել է Փարիզում: Քրանսիական գրականության մեջ նա հայտնի է որպես «Երկարե դիմակով մարդ»: Այս օրինակը ևս ազդել է Հ.Կոլուսի տաճելիք քաղաքականության վրա: Այն եղել է չափազանց զգույշ, հեռատես, ինաստուն, պատրաստ ֆրանսիական կողմից հետ քանակցությունների, անգամ համատեղ Եկեղեցական արարողությունների, թեև գերծ չի մնացել ծայրահեղ քայլերից, պալատին բողոքներ ուղղելուց: Կաքոլիկ հայերը մեր Եկեղեցիներ հաճախելու և չհաճախողները զանակոծության ու թիապարտության դատապարտելու դիմումը մեկն էր Յըլլըդ ուղարկված այդ բողոքներից:

Կոլուտը մեր եկեղեցու և գրականության պատմության մեջ մնացել է ավելի իր մշակութային հուժկու գործունեությամբ¹: Նրան տրվել է «ոսկերերան», «Վեհալույս տեր» անունները: Հովհաննես Կոլուտն իր գահակալության սկզբնական շրջանում (1715-1739թ.) հիմնադրել է Ալյուտարի հոչակավոր «Դասատունը» (1715թ.): Մեծ քվով աշակերտներ էին սովորում այնտեղ, որոնց մի մասը մեր մշակույթին նվիրված մտավորականներ դարձան (23-24 հոգի): Այստեղ է, որ հիմնադրվեց պոլսահայ գրական դպրոցն իր թարգմանչական մշակույթով՝ մեկնողական, կրոնադավանաբանական, փիլիսոփայական, գիտական ուղղվածությամբ: Այն Ռուսեղարի ու Արծարեղարից հետո մեր երրորդ թարգմանական դպրոցն է: Կոլուտ սատրիարքի շրջանում թարգմանվեցին, հրատարակվեցին բազմաթիվ գրքեր, հոգևոր կենտրոնները ողողվեցին բազմահատոր գրքերով ու դասագրքերով: Նույն այդ կենտրոններից թերվեցին հազվագյուտ ձեռագրեր, որոնք ընթօրինակվում էին բազմաթիվ օրինակներով, փրկելով մեր մատենագրության բանկազին ու հազվագյուտ գանձերը: Այն հիմք դարձավ Հովհաննես Կոլուտի հիմնադրած Մատենադարանի, որի մեկնաբաներն էին Պոլսու և Վենետիկյան պոլտահայ ամիրանները:

Գ.Բանապուրճյանի ուսումնասիրությունը մանրամասն արծանագրումն է վերոնիշյալի: Գիրքն արժևորում էն բազմաթիվ փաստաքրթերը, կոնդակները, ֆերմանները, Կոլուտի նկարը, ձեռագիրը, կնիքը և այլ հետաքրքիր մանրամասների շարադրանքները: Կարևոր է Կոլուտ-Միխրար Սերաստացի հարաբերությունների մասին հատվածները: Սա նման է Երկսայր սրի: Սի կողմից՝ ավանդական կրոնը կարովիկությամբ փոխարինած մի «ուխադրուժ», որը նույն Կոլուտի բողոքների շրջանակում հետապնդվել է և հավանական է ողբերգական վախճան կարող էր ունենալ, եթե... Ուսումնասիրությունը պարզում է Հովհաննես Կոլուտի վեհանձն վարվելակերպը Միխրարյան միարա-

1 1978թ. Պոլսում, Սիյուորում և ս.Էջմիածնում տոնվել է Հովհաննես Կոլուտի ծննդյան 300 ամյակը:

նության ապագա իխմնադրի նկատմամբ: Հովհաննես Կոլոտոք գաղտնի աշակցել է, որ Սխիքար Սեբաստացին փրկվի հետապնդումներից և օգնել է նրան, որպեսզի բողնի կայսրության սահմանները: Նրանց գաղտնի նամակագրության որոշ հատվածներ մեր ժողովրդի ապագային իրենց ողջ կյանքը նվիրաբերելու պատրաստ այս երկու իրաբամերժ այրերը կարողացել են գնահատել մեկնեկո, խորանալ դիմացինի էության, նպատակների ու ծրագրերի մեջ: Նպատակը նույն է եղել՝ մեր ժողովրդի փրկությունը: Նրան հասնելու ուղիներն են եղել տարրեր: Այսօր կարող ենք ասել, որ երկու հսկա մտավորականներն էլ ազնիվ ու ճշմարիտ են եղել իրենց երազանցների իրականացման առումով: Հետագայում Սխիքարյան միաբանության հարաբերությունները Պոլսի հետ ավելի բացահայտ ու փոխադարձ են եղել: Եվ այն եղել է ի շահ մեր ժողովրդի:

Բամպուրճյանը առիջը քաց չի բողել և քուրքերենով հանդես է եկել Սխիքարյաններին ու նրանց գործունեությունը, վաստակը շարախոսող քուրք լրագրողների, գիտնականների դեմ:

Հովհաննես Կոլոտի և Հակոբ Նալյանի մասին երկու գրքերը կարևոր ներդրում են մեր եկեղեցու և մշակույթի ուսումնասիրման առումով: Պոլսու այս երկու պատրիարքներն իրեն տեղի են գտել նաև ֆրանսիական հանրագիտարանային և պատմագիտական բառարաններում¹:

Մանագրությունները, ինչպես նաև առանձին ուսումնասիրություններ, հայերեն կամ քուրքերեն հոդվածներ, նաև քամպուրճյանական երախտագիտության զգացումների արտահայտություններ են՝ ուղղված առանձին մտավորականների, հաստատությունների, ինչպես Սխիքարյան վանքերի վարդապետներին, երեանյան Մատենադարանին և այլոց: Նրանք օգնել են հեղինակին ուսումնասիրությունների համար պակասող և Պոլսում գոյություն չունեցող աղբյուրներ հայրայքելու խնդրում:

¹ Heofer Jean-Chrétien-Ferdinand (1811-1878), Nouvelle Biographie Général. Paris, 1857, t.21, col. 124-125; t.37, col. 146-147. Feller François Xavier de 1735-1802, Dictionnaire Historique, Paris, 1835, t. 15, p. 21-22.

Գ.Բամպործյանի գիտական հրատարակության պատրաստած աղբյուրագիտական արժեքների թվում են՝

1. Երեմիա Չելեպի Քեօմիւրճեան, «Պատմոթիւն Հրակիզման Կոստանդնուպոլսոյ (1660 թ.)» երկը ծանոթագրություններով հանդերձ (Ծողակար, Խոր., 1991, 184 էջ):

2. Միքայել ա. քիոյ. Երամեան, «Պատմոթիւն Արմաշու» (Երևան, 1991, 70 էջ)

Նա խմբագրել և հրատարակության է պատրաստել նաև **Տրդատ քիոն. Ուղուրլեանի «Պատմոթիւն Կիլվակնեան գերդաստանի»** երկը: Այս նշանավոր գերդաստանի մասին անտիպ, մեքենագրված 127 էջերի լուսապատճենի մեկ օրինակը գտնվում է Գ.Բամպործյանի արխիվում և մյուս օրինակը՝ Լիսարոնում, Գյուլբենկյան հիմնարկում: Այս ուսումնասիրությունը հրատարակվել է հետմահու (Անրիիհաս, 2006)¹:

Տաղարանները ժողովրդական ստեղծագործության ու առանձին անհատ ստեղծագործությունների մի անպիսի փունջ է, որն անհատնում ուսումնասիրությունների, տաղարանների հրատարակման, նորանոր բացահայտումների, նոր արժենորումների է ակնկալում: Հայատառ բուրքերն տաղարաններն արժեքավոր են նրանով, որ նրանց շնորհիկ կարող ենք վերականգնել մի քանի հարյուրամյակներ Արևելքում շրջած բազմազգ աշուտների ինքնորույն տաղերը, ծշտել նրանց անձերը, հետեւել այս մշակույթի զարգացման ընթացքին՝ ունենալով ոչ միայն երգերի բառերը, հեղինակների անունները, այլև արևելյան եղանակների, ոիրմիկայի ընդիհանուր պատկերը²: Հայտնի է, որ միայն 17-19-րդ դդ. ավելի քան 500 հայ աշուղներ

1 «Ակոս» օրարերին տված մի հարցագրույցի ժամանակ (27.09.1996թ., հայերեն հավելված, էջ 1) արդեմ հիվանդ Գ.Բամպործյանը ցավով խոստվանում է, որ Լիսարոն ուղարկած այս զործը «չիրատարակեցին եւ չուզեցին ալ հրատարակուի...»:

2 Տես՝ Երևանի Մ.Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 197, 201-215 (Ըոր ձեռագրերի հավաքածու): Երկու ձեռագիր ժողովածուներ պարունակում են 19-րդ դ. բուքը հեղինակների երգեր՝ հայատառ բուրքերն բառերով, լիմուճյանական և խտական նոտագրույամբ:

ստեղծագործել են միաժամանակ հայերեն և բուրքերեն լեզուներով¹: Հայատառ բուրքերեն տաղարաններում և առանձին ժողովածուներում տեղ գտած մեծ ժողովրդականություն վայելած, սիրված տաղերը դրա լավագույն արտահայտություններն են:

Գ.Քամպուրճյանը հայերեն և բուրքերեն լեզուներով թողել է միշարք անտիպ, իր խմբագրությամբ ու ծանոքագրություններով հրատարակության պատրաստ գործեր, մասնավորապես հայերեն լեզվով: Պատմագիտական որոշակի արժեք ներկայացնող ուսումնասիրությունների մի մասը հակիրճ հոդվածների տեսքով նախապես հրատարակվել են բուրքական հանրագիտարաններում և պարբերականներում:

Անավարտ գործեր²

1. Տապանագիրք Սկյուտարի հայոց գերեզմանատան (314 էջ):
2. Յուցակ Պալըրըլի հայոց գերեզմանատան իին և կարևոր տապանագիրերու:
3. Յուցակ Էտիրնեգափուի հայոց գերեզմանատան իին և կարևոր տապանագիրերու:
4. Ընդարձակ յուցակ ծեռագրաց Օքազյութի Ս.Աստուածածին նկեղեցւոյ (271 էջ):
5. Ընդարձակ յուցակ ծեռագրաց Պալատու Ս.Հրեշտակապետ նկեղեցւոյ (227 էջ):

-
- 1 Ստամբուլի «Մարմարա» օրաթերթը (9.01.2018 թ.) տեղեկացնում է, որ լոյս է տնօնի «Մարմարա» երաժշտական միուրյան նախազահ Ահմետ Ֆեվզի Յոքերի (Ahmet Fevzi Yoker) Müzikimizre renk katanlar 150 էջանոց զիրքը, իրատարակված MC իրատարակչության կողմից, բուրքական երաժշտությանը ծառայած հայ վարդատների մասին: Բազմաթիվ հայտնի անոնների թվում է Կոմիտաս վարդապետը: Գրքի հեղինակն այն հարստացրել է որոշ երգերի նուտաներով:
 - 2 Քամպուրճյանը ասիրի դեպքում տարբերում է իր երկերի անավարտ և անտիպ լինելը, ներկայացնելով դրանք առանձին առանձին: Մեմբ նախընտրել ենք այն ներկայացնել միասին:

6. Զաղվածքներ պոլսահայ Եկեղեցիներու մկրտությանց և ննջեցելոց ցուցակների:
7. Ցուցակ Պոլսի հայկական Եկեղեցիներում եղած հնատիպ գրքերի:
8. Մատենագիտութիւն Հանրապետական շրջանի ստամբուլահայ մամուլի:
9. Կեսարացի Զարդարեան գերդաստանը:
10. Ուսումնասիրութիւն Օսմանեան արքունիքի հայ սեղանակորական դասի՝ «Սարաֆլար Քեթիկուտասը» պաշտոնում գտնվածների մասին:
11. Պատմութիւն Կարազյողյան գերդաստանի:
12. Սարգիս Գարագոչի մասին:
13. Հարութիւն արք. Պալատեցու (1705-1752) մասին:
14. Արարկիրցի Մարտիրոս Ա. Սարկավագ, 1743-1813թ.:
15. Զամբայեան կամ Դուրեան գերդաստանի պատմութիւնը:
16. Գևորգ Փափազեան ամիրայի կենսագրութիւնը:
17. Պրոֆ.Գրիգոր Ջյոմուրճեանի կենսագրութիւնը:
18. Հայազգի կարևոր դեմքերու համառոտ կենսագրականներ (այրբենական կարգով դասավորված):
19. Գերգապատում (Գևորգ ամունը կրող նշանակոր անձանց կենսագրությունները):
20. Մատենագիտութիւն Հանրապետական շրջանի հայ ուպագրութեան:
21. Ուսումնասիրութիւն Պոլսու խաների մասին¹:
22. Պատմութիւն Ակխուտարի Ս.Կարապետ Եկեղեցւոյ:

1 Խաների-իջևանատների, մասնավորապես Պոլսու խաների մասին բազմաթիվ ուսումնասիրություններ կան, այդ թվում հայ հեղինակների: Տարբեր ժամանակներում տարբեր հեղինակներ ներկայացրել են դրանց ցուցակները: Գ.Բամպուրճյանը իր Յ էջանց հոդվածում ևս ներկայացնում է մի ցուցակ, որը կազմված է 56 խաներից: Տես՝ Tarikh ve Edebiyat Mecmuası, 1979, N, 11, s. 74-76. Հինգ տարի անց, խաներին նվիրված իր հաջորդ հոդվածում նա այդ թիվը հասցնում է 196-ի: Տես՝ Tarikh ve Toplum, 1994, N, 128, s. 124-130.

23. Անդրեաս արք. Գաղատիացի, «Օրագրութիւն» գործի մասին¹:
24. Դուկաս Ինճիճեան, «Ամսուանց Բիզանդիան»-ի բուրքերեն թարգմանությունը ծանոթագրություններով հանդերձ:
25. Արշալույսի շողեր (86 էջ, արձակ և չափածո գործեր), 1943-1960թ.:
26. Օնա Տաիր Հարըրալարըն (Խուշագրություն բուրքերեն լեզվով), 1948, 130 էջ.:
27. Արքահամ Անկյուրացիի «Պոլսո գրավման ողբը» (թարգմանություն և ծանոթագրություն), 1955թ. 25 էջ.:

Գ.Քամպուրճյանի հայալեզու տպագիր ու անտիպ գործերի մեծ մասի ցուցակը պարտական ենք Կարո Արքահամյանի աշխատասիրությանը²: Հայերեն աշխատասիրությունների ցանկը, «Մարմարա»-ի կարծիքով կարող է լրացվել³ հետագա ուսումնասիրողների կողմից:

Ամենայն խնամքով կազմված այս ցուցակում գտնում ենք Գ.Քամպուրճյանի աշխատակցած պարբերականների, հանրագիտարանների ու լրանցում տպագրված հոդվածների անվերջանալի ցանկը⁴:

Աշխատու, որ Գ.Քամպուրճյանի անտիպ գործերի ցանկը ևս բավականին մեծ է⁵:

1 Այս ուսումնասիրությունը Գ.Քամպուրճյանն ուղարկել է Գարեգին Ավեհափառին, Անքիլիասում, «Հասկ» հանդեսում տպագրելու համար (Կարո Արքահամյանին ուղղված նամակից՝ 4.11.1993: Այդ տարիների հմտինում ուսումնասիրությունը մենք չգտանք):

2 Tarih ve Toplum. 1997, N,7, s.4-8.

3 Մարմարա, Խար. 24.09. 2003, էջ 4:

4 Տես՝ Քառահատորյակի Դ հատորի 391-430 էջերը:

5 «Վաղահաս ու անփոխարինելի կորոստ մը՝ Գերգ Քամպուրճեան» հոդվածում Կարո Արքահամյանը գրում է, որ 193 հայերեն և 104 թուրքերեն հոդվածներ է գտել հայկական և բուրքական մամուլում. «Հասկ», Անքիլիաս, 1995-96թ., էջ 666):

Գ.Քամպուրծյանն իր հայերեն հոդվածները ստվորաբար ստորագրել է իր իսկական անունով՝ Գևորգ Քամպուրծյան։ Թուրքերեն հոդվածները ստորագրել է՝ Kevork Pamukciyan։ Նաև՝ Գիմ-Մենթեն, Գ.Մ.Բ.։ Օգտագործել է Գևորգ Մրայոն, Գ.Մրայոն, Գ.Արգեսու, Խարազան գրչանունները։

Զառահատորյակի վերջին հատորն ավարտվում է «Գ.Քամպուրծյան աղբյուրագետի» օգտագործած հայալեզու եւ հայատառ թուրքերեն գրականության ցանկով։ Դրանք հայկական պարբերականներ են, տարեզգրեր, համրադիտարաններ, գրքեր՝ որոնք այնքան օգնել են հեղինակին տարիների իր ուսումնակրությունների ընթացքում։ Հայերեն պարբերականների էջերում Գ.Քամպուրծյանն անպայման իր վերաբերմունքն է արտահայտել հայ և հայատառ թուրքերեն գրականության մասին բուրք գիտնականների ուսումնախրությունների, առանձին հրատարակությունների նկատմամբ։ Այսպիսով, հայախոս ընթերցողն էլ իր հերքին տեղեկացվում էր այն ուշադրության ու հետաքրքրության արդյունքներին, որ ոնքին բուրք գիտնականները հայկական մշակույթի վերաբերյալ՝ կողմնակալ թե՝ ազնիվ¹։ Թվում է, թե հրատարակիչները ավելի շատ նկատի են ոնեցել այն հանգամանքը, որ այս ցուցակը առաջնորդող կինի այսօրյա հայ, բուրք ուսումնախրությունների, երկու ժողովուրդների մշակութային կապերի, դրանցով հետաքրքրված հետաքրքրված համար։

Զառահատորյակի յուրաքանչյուր հատոր անմիջապես բարեխորեն արժանացել է Պոլսի «Մարմարա» օրաթերթի խմբագրապետ, մեծ գրագետ Ռոբեր Հատտեճյանի ընդարձակ ու վերլուծական անդրադարձին։

1 Գ.Քամպուրծեան, Հայատառ թուրքերեն պատմուածքներու մասին կարեւոր յօդուած մը. «Մարմարա» օրաթերթ, Ստամբուլ, 1984, 19 ապրիլ, էջ 2։ Այն բուրք գիտնական Սարբի Ջոզի Խմբագրած «Halk Kültür» բանասիրական ու ազգագրական եռամսյա համեսի առաջին համարում տպագրված թուրքութ քորի «Հայատառ թուրքերեն ժողովրդական գրքեր» ուսումնախրությանն է վերաբերում (69-79 էջերում)։

Գ.Քամպուրճյանը մեզ ուղղված մի նամակում (22.01.1992) ուրախությամբ հայտնում է, որ Սրբազն Պատրիարքի ցանկությամբ¹ վերսկսվելու է «Շողակար» հանդեսի հրատարակությունը և իրեն էլ հանձնարարված է յուրաքանչյուր համարի համար երկարաշունչ հոդվածներ գրել: Ա եռամսյայի համարում նա տպագրել է «Թագուք վարժապետ Ասլանեան»-ին նվիրված հոդված, իսկ երկրորդ համարում՝ «Տաղասաց Յովհաննես Կարրեցու» 1604թ. կովկասահայոց բռնագաղթի մասին» ընդարձակ հոդվածը: Գ.Քամպուրճյանը հաջորդ համարում երկար աշխատություն է հրատարակել մինչ այդ համարյա անձանոր մնացած Հակոբ Պարոնյանի «Խիլկարի տարեցոյցի» ամբողջական բնագրի շուրջ:

Գ.Քամպուրճյանը բարեբախտաբար աշխատակցել է Հայաստանի և սփյուռքի շատ հայագիր պարբերականների:

Գ.Քամպուրճյանի ուսումնասիրությունների մի մասը տեղ են գտել Մխիթարյանների վիեննական և վենետիկյան պարբերականների էջերում: Դրանցից է «Բազմավեպ»ի 150-ամյա հորելյանին Մարտիրոս պատրիարք Նրիմեցուն նվիրված նրա հոդվածը (1995թ.):

Իրապես, հայ անվանիների կամ՝ լնդիանրապես արևմտահայուրյան կյանքի տարբեր ոլորտների ու ժամանակների նշանակոր այրերի գործունեության ուսումնասիրությունը եղել է այս համեստագույն մատենագետի նախասիրած թեմաներից: Ժամանակ առ ժամանակ նա այս կենսագրականները հրատարակել է թուրքական գիտական և հանրամատչելի պարբերականներում, թուրքական տասնյակ հանրագիտարաններին սնելով հայկական նյութով²: Նա սիրով համագործակցել է և իր որոշի ներդրումն է ունեցել օսմանյան կայսրության պատմության հետ առնչվող հայ հեղինակների երկերի՝

1 Նկատի ունի Գ.արեգին Բ Գագանճյանին (1990-1998թ.):

2 Եթե ոչ առանձին հոդվածներով, ապա նամակի ձևով նա տպագրել է առանձին անձանց կենսագրությունները, բազմաթիվ կարևոր ճշտումների հեղինակ դարձել: Tarih ve Toplum, Biografik Notlar. İst., 1985, haziran, s. 2.:

մասնավորապես քուրք գիտնականների կողմից թուրքերեն լեզվով հրատարակությունների գործում: Այսպիսի օրինակները շատ շատ են: Դրանցից է պատմաբան, նկարիչ Կոզմաս Կոմիտաս Քյոնուրծյանի կենսագրությունը և մատենագիտությունը հրատարակության պատրաստելու օրինակը, որ մաս էր կազմել Կոզմաս Կոմիտաս Քյոնուրծյանի կորողային աշխատության՝ *Երեսիկ Էօքբայողովի* կողմից գիրք-փորագրանկարների ալբոնի թուրքերեն քարզմանության հրատարակությունը տպագրելիս (Cosimo Comidas de Carbognano, Descrizione Topografica dello stato presente di Costantinopoli):

Գ.Քամպուրծյանի մոտ հայերեն ուսանած ստամբուլցի քանասեր Թուրքութ Քուրքի հոդվածը Օսմանյան կայսրությունում տպագրված հունատառ թուրքերեն գրականության մասին¹ է: Այն Կայսրության տարբեր ժողովուրդների այբուբեններով, սակայն թուրքերեն լեզվով հրատարակություններից մասին հայտնի շարքի ուսումնասիրություններից է: Ընթիկ հայերենի իմացության, հեղինակը համեմատություններ է կատարում հայատառ թուրքերեն գրականության հետ, մեջբերում է մեր մատենագիտությունից քաղված հայատառ թուրքերեն գրքերի թիվը, մի շարք օրինակներ, տիտղոսաբերերեր, որոնք հարստացնում և արժենորում են հոդվածը: **Գ.Քամպուրծյանի** հոդվածներից և նյութերից առատորում օգտվել են մի շարք քուրք գիտնականներ: Այն ակնհայտ է դառնում նրանց հրապարակումներից, երբ որևէ նյութի կամ աղբյուրի օգտագործման դեպքում մատնանշվում է հայ մատենագետի անունը: Դրանց մի որոշակի մասը վերաբերում է Արևելքում դարերով շրջող սիրային պատմություններին, ինչպես նաև Նասրեղին հոջայի գրույցների տարբեր լեզուներով, այդ բվում հայերենով և հայատառ թուրքերենով լույս տեսածներին²:

1 Turgut Kut, Evangelinos Misalidis Efendi, Tarih ve Toplum, İst., 1987, N.48, s. 22-26.

2 Mustafa Duman, Karamanlıca, Yunanca, Ermeni Harflı Türkçe ve Ermenice Nasreddin Hoca Kitapları, Tarih ve Toplum, İst., 1991, N.92, s. 61-64.

Գևորգ Բամպուքճյանը նամակներում

...Ուրախ եմ, որ ինձ հետ կը փափագիք Ձեր նամակագրութիւնը շարունակել: Ես ալ նոյնը կը փափագիմ: Կը հուսամ, թէ մեր այս բղրակցութիւնը ոչ միայն երկուսիք օգտակար պիտի ըլլայ, այլև Հայ Մշակույթին համար ալ նպաստավոր պիտի ըլլայ: (23.05.1991թ. Սկամբուլ նամակից)

Մի քանի տարիվ պատիվ ունեցա նամակագրական կապ ունենալու Գևորգ Բամպուքճեանի հետ: Այդ նամակները մինչ օրս ինձ մոտ են: Ունեմ նաև եղբորս՝ Արմեն Տեր Ստեփանյանին ուղղված նրա մի քանի նամակները: Եղբայրս աշխատում է Երևանի Մատենադարանում և միմյանց կապող ու հետաքրքրող բազմաթիվ նյութերի շուրջ են այս նամակները: Դրանք գրված են սրանչելի պարզ ձեռագրով, մեզ դիմելով ոչ պարզ ձևով՝ ազնվաշոր, ազնվափայլ, մեծարզո և այլն:

Արմենի հետ նրա կապը գիտնականների դասական նամակագրության օրինակ էր: Հարցումներ որևէ ձեռագրի, հողվածի մասին, խնդրանքներ՝ անձամբ իր ուսումնասիրությունների համար անհրաժեշտ մի շարք ձեռագրերի պատճեններ, մատենադարանի նոր հրատարակված ձեռագրացուցակները, պարբերականները Պոլս պատրիարքարանի գրադարանին ուղարկելու խնդրանքով: Նա իր անխառն ուրախությունը, «Չերմ խնդակցությունը» ու հիացումն էր հայտնում Արմենի մատենագիտական յուրաքանչյուր հայտնագործության առիթով, քանզի համոզված էր, որ պատմագիտության համար կարևոր են նոր կյանք տուացած, վերծանված նյութերը: Մեր պատմությամբ ու գիտությամբ հետաքրքրվողներին նա քուրքենով ներկայացնում էր հրատարակված կամ անտիպ գործերում առկա հայատառ բուրքենով հետաքրքրություն ներկայացնող բնագրերը, բուրքական մքնողութում հայ կյանքի կարևոր հրադարձություններին, վերջինիս նկատմամբ Յըլլըզի¹ վերաբերումների մասին:

1 Սույրանական պալատ Ստամբուլում:

Այսպիսի հրատարակություններից է «Tarih ve Toplum» ամսագրում **Գարեգին Պատրիարք Պատմաճյանի** (1715-1791) գահակալության ֆերմանը¹, որի հայատառ բուրքերնենով բնագիրը գտնվում է **Ավետիս Վարժապետ Պերպերյանի** (1798-1873) «Հայոց Պատմութիւն»-ում: Այս վավերագրերի հրատարակությունները միանգամից մի քանի նպատակ են հետապնդում: Նախ՝ ներկայացվում է հայ կյանքն իր ունեցած դիրքով ու որակով և ապա՝ սուլթանական պալատի հարգալից վերաբերմունքը պատրիարքարանի, նրա առանձին առաջնորդների, անհատների նկատմամբ:

Անկասկած մեծ հետաքրքրություն է ներկայացնում **Ստամբուլի պատմությունը** գրած հայերի մասին ուսումնասիրությունը²: Այն այս ոլորտի անաշառ ու նորովի ուսումնասիրության համար նոր նյութերի, դեպքերի ու դեմքերի առատություն է ներկայացնում: «Ստամբուլի պատմագիրները» խորագրի ներք անասելի խոռորդական մի քանի նկարազարդ էջերում ներկայացվում են 25 անհատներ ու նրանց գործերը: Մեծ ու հարուստ աղբյուրագիտական նյութ այսօրյա քուրք և օտար գիտնականների համար, որոնք առանց հայերնեն ու հայատառ բուրքերնեն աղբյուրների իմացության շատ հեռու գնալ չեն կարող: Այս շարքի մեջ կարելի է միավորել նաև ստամբուլյան մի քանի հուշարձանների պատմությանը³ ու նրանց ստեղծողներին նվիրված հրապարակումները: Դրանք հավասարապես վերաբերվում են հայ ճարտարապետների կառուցած հայկական ու օսմանյան հուշարձաններին, մասնավորապես՝ դամբարաններին, մզկիրներին⁴:

Գ. Բամպուրճյանի հոդվածները մեկական հայտնագործություններ կարելի են համարել քուրք պատմագրության մեջ: Դրանք իրենցից պատմական իրողության բացահայտումներ են ներկայացնում: Ահա այս պատճառով է, որ Գ. Բամպուրճյանի համար միշտ

1 Tarih ve Toplum, 1991, N, 88, s.37-40.

2 Tarih ve Toplum, 1991, N, 89, s.48-52.

3 Tarih ve Toplum, 1990, N, 81, s.39-42.

4 Tarih ve Toplum, 1990, N, 74, s.21-23

բաց են եղել բուրքական զիտական պարբերականների էջերը, իսկ հոդվածները եղել են սպասված ու հաճույքով կարդացվող:

Նամակներում առկա էին խնդրանքների շարք, որ ապացույցն էր բամպուրճյանական հետաքրքրությունների լայն շրջանակի, ուսումնասիրությունները Պոլսու նյութերով չսահմանափակելու, պատրիարքարանի գրադարանը հետևողականորեն և մատենագիտական տեսանկյունից հարստացնելու մղումով: Նրա որոշ նամակներ կարելի են կատել որպես սեփական գործունեության ժամանակագրություններ: Նամակներից կարելի էր տեղեկանալ տարբեր տեղերում տպագրված ու մեզ շատ հետաքրքրող և օգտակար նրա հոդվածների մասին:

Մեզ ուղղված իր մի նամակում (23.05.1991) մեր ազնիվ բարեկամը ուրախությամբ հայտնում է, որ Անկարայում լույս է տեսել իր բուրք բարեկամ Յըլմազ Օգրունայի «Թուրքական Երաժշտական Հանրագիտարան»-ի Ռ տպագրությունը, «որու երկարաւու աշխատակցություն մը ունեցած եմ, թէ՝ արևելյան հայ երաժշտագետներու կենսագրութեանց մասին իրենց տեղեկություններ տալով, թէ՝ համբարձույան խազերով գրված երկտանյակ մը նորատեսրերու մանրամասն պարունակությունը իրենց հայտնելով: «Աշխատակցությունս բարձր գնահատելով, 32 տող իմ կենսագրությունս ալ հանրագիտարանին մեզ գետեղնեց»-գրում է Գ.Բամպուրճյանը: Մի այլ առիթով էլ գրում է, որ ուրախ է Գ.առնիկ Ստեփանյանի «Կենսագրական բառարանում» իր անվանը հատկացված 8 ու կես տողերի համար:

1995թ. «İstanbul Ansiklopedisi»-ն 106 տողով անդրադարձել է քուրք մշակույրի համար աշխատած մեղվածան մատենագետի կենսագրությանը և տեղադրել լուսանկարը, թեև գործող գիտնականներից շատ քչերի մասին է գրվել նրա էջերում:

Գ.Բամպուրճյանը ցավով գրում է իր նամակում, թէ՝ «Թուրքերը զիս մեր հայերեն ավելի կը գնահատեն»: Ահա ինչպիսի զուսպ երախտագիտություն՝ մեծագույն ներդրման համար... Քչով զոհացող բարի հոգի:

Գալով քուրքական պարբերականներում իր համագործակցությանը, Գ.Քամպուրճյանը վերջին շրջանում «Tarih ve Toplum»-ին հողվածներով հազվադեպ աշխատակցելու փաստը ժամանակի սղությանն էր վերագրում:

Սովորաբար իր հողվածների առանձնատիպերը նա ուղարկում էր մեր Արևելագիտության ինստիտուտին և Ակադեմիայի հիմնարար գրադարանին: Նրա խնդրանքով և Պոլսի Պատրիարք հորի ուղղված իր միջնորդությամբ քազմարիկ քանկազին գրականություն է ստացել Արևելագիտության ինստիտուտը¹: Ուղարկել էր իր աշխատասիրած՝ Երեմիա Չելեպի Քյոնուրճյանի «Պոլսոյ 1660 տարոյ մեծագոյն հրդեհին պատմութիւնը», նաև երաժշտագետ, լիմոնճյան խազերի հեղինակ Համբարձում Լիմոնճյանին նվիրված իր հողվածը: Զնորանանք ասել, որ մինչ իտալական նոտագրության տարածումը Օսմանյան կայսրությունում հայերը, նաև քուրքերը օգտագործում էին հենց լիմոնճյանական խազերը: Որքան եղավ մեր զարմանքը, երբ վերջերս իմացանք, որ քուրքական մեղրեսներում ոչ միայն այսկերպ էր ուսուցանվում երաժշտությունը, այլև երկար տասնամյակներ հետո էլ մեղրեսները չին ընդունում իտալական նոտագրությունը՝ հարազատ համարելով ավանդական լիմոնճյանական խազերը: Եվ դա՝ մինչև վերջերս: Շնորհիվ Գ.Քամպուրճյանի մեզ ուղղված նամակների, կարևոր հրատարակությունների մասին էինք տեղեկանում: Այսպես օրինակ, իր նամակում գրում էր, որ շուտով լույս է տեսնելու Կողման Կոմիտաս

I Գևորգ Քամպուրճյանն իր կարևոր աշխատասիրություններից մեր գրադարանին է նվիրվել Պատրիարքներ Հովհաննես Կողստին, Հակոբ Նայսանին նվիրված մենագրությունները, ինչպես նաև Պոլսի Պատրիարքարանի կողմից նշված մի քանի հորեւյանների շքեղ հրատարակություններ: Հոքելյաններ, որոնք պատիվ էին քերում Պոլսի Պատրիարքարանին, նրա գրասեր, մշակույրի հովանավոր, այսօր հիվանդության անկողնուն զամփած Մեսրոպ Մուրաֆյան Պատրիարքին: Ավաղ, նրանից հետո Պատրիարքարանի կողմից որպես կանոն ո՞չ լուրջ հրատարակություններ և ո՞չ էլ արժանավորների ու երախտավորների հորեւյաններ հանդիպեցինք մինչ օրս...

Ջյոնուրծյանի Կոստանդնուպոլսին նվիրված շափազանց կարևոր մի աշխատության «Descrizione Topografica di Costantinopoli»-ի բուրքերեն թարգմանությունը, կատարված բուրք պրոֆեսոր Է. Էղք-քայողովի կողմից: Այս հրատարակության համար Գ. Բամպուրճյանն էր պատրաստել Կողմաս Կոմիտաս Ջյոնուրծյանի կենսագրությունն ու մատենագիտությունը: Այսկերպ մենք ծանոթանում ենք նաև հայ մքնոլորտի ուսումնասիրության հետ առնչվող բուրք զիտնականներին ու նրանց ուսումնասիրություններին: Սա կարևոր հանգամանք է ամեն մի հայագետի համար:

Թուրքական «Decorasyon» հանդեսի 1995թ. հունիսյան համարում գտնում ենք. «Ժեղարդ պոլսահայ Արքունի և այլ ճարտարապետների մասին» կարևոր հոդվածը: «Պարբերականի տնօրինության խնդրանքով գիտնականը պիտի իր հոդվածաշարով անդրադառնար նախորդ դարերում ստեղծագործած հայ ճարտարապետներին ու նրանց գործերին՝ հուսալով բուրք ճարտարապետության պատմության մեջ կարևոր մի բաց լրացնել: Զգիտենք, թե որքանով այն իրականություն դարձավ: «Yeni Yuzyıl» պարբերականում (15.07.1995) հանդիպում ենք Օսմանյան կայսրության պատմագիտության կարևորագույն անուններից Երևանի Զելեալի Ջյոնուրծյանի 300 ամյակին նվիրված Գևորգ Բամպուրճյանի հոդվածին: Խսկ նույն բվականին, «İstanbul» եռամսյա հանդեսում հրատարկվել է XV դ. տաղերգու Աքրահամ վրդ. Անկյուրացի «Ողբ ի Վերայ մայրաքաղաքին Կոստանդնուպոլսյ՝ վասն տիրելոյն տաճկաց» երկը, որը 1953թ. ծանոթագրություններով հանդերձ թարգմանել էր Գևորգ Բամպուրճյանը:

Գևորգ Բամպուրճյան մատենագետը տարբերվում է իր գրածների նկատմամբ հատուկ մի մուտեցմամբ: Մենք, որ հակված ենք ուսումնասիրություններում հենվել պատմահամեմատական մեթոդի վրա, քննարկել համենատեղ հնարավոր աղբյուրները, փնտրել նյութում առկա խնդիրների ծագման պայմաններն ու պատճառները, ապա նաև՝ հետևանքները, բամպուրճյանական ուսումնա-

սիրություններում դրանց պակասն ենք զգում: Այս ոճը մենք նկատում ենք նաև շատ քուրք ուսումնասիրողների երկերում: Գևորգ Քամպուրճյանը առատորեն հում նյութ է դնում ընթերցողի առջև, որը նրա տրնաջան պրատումների ու աշխատանքի արդյունք է: Սրանք հոդված-պատմություններ են՝ զարմանալիորեն համառոտ, առանց ավելորդ զգացմունքայնության, փաստերի շարադրանք, նույնիսկ՝ մի քիչ «չոր»:

Նյութի շուրջ խորհրդածությունները, հետևությունները նա բողնում է ընթերցողին: Մեր կարծիքով սա կարող է արդյունք լինել իր ստացած կրթության կամ՝ ոչ թե դիրքորոշում, այլ ստիպողական ոճ լինել, պայմանավորված մի շարք հանգամանքներով: Մենք նկատի ունենք Թուրքիո Հայոց Պատրիարքարանում նրա ունեցած պաշտոնները, որոնք Գևորգ Քամպուրճյանին գրասահմանաւորական ազգային պատասխանականությունները, ուստի առաջարկությունները, որոնք պահպանում են պարտադրել: Ուզած եղերական դեպքերի ակնարկ, ցավոտ եզրահանգում, որով առկցուն պիտի լինեին նրա ուսումնասիրությունները՝ կարող էին անդառնալի հետևանքներ ունենալ նրա հետ կապված ամեն ինչի վրա՝ իր անձից մինչև շրջապատի անձինք, մրնուրտը: Պատմաբանի մեր ստացած կրթության համար պարտադրող պայման է հանդիսացել եզրահանգումներ, անալիք կատարելը: Երևի թե այս հանգամանքը կամ անտեսվել է և կամ էլ խելամտորեն, զգութությամբ շրջանցվել մատենագետի կողմից: Սովորաբար այսպիսի կեցվածքը հատուկ է միայնակ, ինքնամփոփ կերպարներին: Այնուամենայնիվ նա չխուսափեց մեծագույն փորձանքից, թե՝ պատժից, որ կարող էր արմատախիլ անել մտավորականին, կյանքը միայն գիտությանը նվիրված «դերվիշին»¹: Այրվեց, իրունական դարձավ նրա գրադարանը, գրքերը, գործերը, որոնց դեռ պիտի սեղանին դրվեին, կարևոր աղբյուրների հրատարակության պատրաստ ու կամ անմշակ տրցակները...

1 Այսպես էին ճանաշում նրան մերձավորները, աշակերտները, համակիրները:

Գևորգ Բամպուքճյանի հրապարակումներից որոշները մեզ հիշեցնում են մեծն Ալիշանի գործը: Այն է՝ առանց իր ս.Դազար կղզու խցից դուրս գալու նա ստեղծել է մեր ժողովրդի պատմաշխարհագրական ուսումնասիրությանը նվիրված կորողային երկեր: Ահա փոքրիկ մի օրինակ, որ հանդիպում ենք Գևորգ Բամպուքճյանի մոտ, երբ նա Մոնթեալում հրատարակվող «Արմաշ» պարբերականում (1990թ. հ.15.) գրում է Աշտարակի Ծիրանաձին ս.Աստվածածին Եկեղեցու նորահայտ արձանագրության մասին, որ լուսանկարի վրայից կարդացել է խոչորացույցով (ինչպես իր 25.05.1991թ. նամակում է մեզ գրում): Ապա հավելում է՝ «Արդյոք ցարդ ուրիշներ հրատարակեցի՞ն»:

Գևորգ Բամպուքճյանն ուրախությամբ էր արձանագրում հայատանյան գիտական պարբերականների և գիտնականների հետ իր համագործակցությունը, ինչպես օրինակ «Հայ հնատիպ գրքի մատենագիտության» հոկա հատորի տպագրությունը, «որին 1966 թվականից հետո ես ալ երկար տարիներ մեծ նվիրումով համագործակցած եմ»: Նա առիրի ղեպքում իր ուղղումները և որ շատ ավելի կարևոր է՝ որոշ ձեռագրերում պակասող հատվածների ընդօրինակություններն էր ուղարկում Մատենադարանին, Արմենին: Օրինակ՝ Մատենադարանի հ.9696 ձեռագրում պակասող 4 քառյակները:

Գևորգ Բամպուքճյանը մի առիրով ցըում է, թե ուրախ է, որ մեր ընտանիքի անդամները (Ստեփանյանները) բոլորն ել պոլսահայ նշակույթի ուսումնասիրությանն են նվիրել իրենց: «Այս պարագան թիշ մը կը թերևսնել Պօլսեն արդեն պատմաբան կամ բանասեր չհասնելուն մեր վիշտը: Ուրախ ենք, որ այսօրեա սերմնի մեջ կան կարող պատմաբաններ»:

Իհարկե, մեզ համար շափազանց կարևոր են եղել մասնավորապես մեր ուսումնասիրությունների մասին նրա կարծիքը, զնահատականները: Ահա դրանցից մեկը, որ մեծագույն ոգևորություն է հաղորդել ու ներշնչել մեզ, թե իզուր չեն բոլոր տանջանքներն ու անքուն գիշերները...

«Վատահ եղեք, որ սրտանց կը գնահատեմ Ձեր տքնաջան և խոճամիտ աշխատությունները, որոնք կարեռ պարապ մը կը լեց-նեն մեր գրականության մեջ», գրում է նա (22.01.1992):

Գևորգ Բամպուրճյանը համարյա իր բոլոր նամակներում հետաքրքրվում էր հորեղբորս առողջությամբ, որի նկատմամբ անսահման ակնածանը ու գնահատանք ուներ, անհամբեր սպա-սում էր նրա «Կենսագրական բառարանի» հաջորդ հատորնե-րին: «Աղորող եմ իր կատարեալ ապարինման համար»- գրում է Գևորգ Բամպուրճյանը: Իհարկե, Արմենին ուղղված նամակները շատ ավելի ուսանելի են, քանզի իրենց ուսումնասիրության շրջա-նի, առարկաների միջև ընդիանուր շատ բան կար: Առաջիկայում հետաքրքրություն ներկայացնող, նաև պատվիրված, փափազած քեմաների մասին գրելիս Գևորգ Բամպուրճյանը անպայման հա-վելում էր՝ «Եթէ Տէրը կամենայ»: Նա շատ էր ցանկանում բուրքե-րեն լեզվով գրել Օսմանյան պատմությունը գրած հայ հին ու նոր հեղինակների մասին՝ անկախ աղբյուրների լեզվից (հայերեն, օս-մաներեն, հայատառ բրերեն): Այս մտածումը այսօր էլ չի կորցրել իր կարևորությունը: Հայերեն և հայատառ բուրքերեն ձեռագրերի գիտական իրատարակությունները հայերեն կամ բուրքերեն լեզու-ներով, կարևորագույն ներդրում կիանողիսանային օսմանագիտու-թյան, հայագիտության, արևելագիտության համար, լրացներով ժուրքիայի պատմության բազմաթիվ ճերմակ էջեր, սրբագրելով ժամանակակից բուրք և օտար որոշ պատմաբանների շինծու գրե-րի մտածածին նյութը: Որքան շատ էին անխոնց ուսումնասիրողի պրատումներին սպասող այդ ծրագրերը, որոնք այնքան էլ լավա-տեսությամբ չէին շնչում: Խսկապես, մի շարք ծրագրած գործեր նա այդպես էլ շիասցրեց սկսել կամ ավարտել, մեզ բողնելով դրանց մա-սին գոյություն ունեցող աղբյուրների մասին հավաստիացումները:

Մեր միջոցով երեմն խնդրում էր իր բարեները և որոշ խնդրանք-ներ հաղորդել երևանյան իր բարեկամ գիտնականներին: Շատ էր անհանգստանում, երբ գրադարաններին ու բարեկամներին ուղար-

կած իր գրքերի մասին երկար ժամանակ լուր չէր ունենում: Այդժամ մեզ էր խնդրում տեղեկանալ դրանց հասցեատերերին իր ծանրոցների հասած-չհասած լինելու մասին: Փոխարենը գրում էր իր նոր ու իին աշխատանքների մասին, կամ, նույն թեմայով եղած գործերում առկա թյուրիմացությունների, սխալների մասին, ուղարկում իր հրատարակությունները մեզ և Մատենադարանին, Ազգային գրադարանին, Արևելագիտության ինստիտուտի իր անվան Գոնողին:

Նա նաև իր բարեկամներին կորցնելու ցավի մասին էր գրում: Այնուամենայնիվ նրանցից **Գրիգոր Ավագյանի** (1924-1989), **Թորոս Ազատյանի**¹ (1893-1955) և դոկտ. **Վրասր Մեզպուրյանի** (1879-1957) գրադարանների կարգավորման գործը որպես հաճույք է նկատում:

1995թ. Ժնև, ինձ ուղղված իր մի նամակում գրում է տարեվերջին պատրիարքարանի իր պաշտոնից հրաժարվելու մասին: Պատճառը՝ իր շատ հոգնած լինելն էր և միայն իր ուսումնասիրություններով գրադվելու հեռանկարը:

Երբեմն իր նամակներում նա խոսում է սփյուռքին այնքան հետաքրքրող մի հարցի՝ դասական ուղղագրության վերականգնման խնդրին, այն դիտելով որպես մեծ ու անտեղի խոշընդուռ Սովետական Հայաստանի և Սփյուռքի մշակութային հարաբերություններում, ինչպես նաև պատմարանասիրական ուսումնասիրություններում (16.12.1990թ.):

1 Գ.Բամագործյանն իր հեղինակած գրքերի վերջին էջում, ինչպես սովորաբար անում են շատ հեղինակներ, իր աշխատությունների ցուցակն է հրատարակել՝ հայերեն՝ տպագիր, անտիպ և անալգարտ սյունակներով, և բոլքերեն՝ տպագիր և անտիպ մասերով: Հովհաննես Կորտիսն նվիրված իր մենագրության վերջում նա որպես տպագիր գործ է ներկայացրել «Ակնցի իին գերդաստաններ ու դեմքեր» երկը՝ Թորոս Ազատյանի «Ակն»-ի 58-140 էջերում (Ստանըրու, 1956թ.):

Վերջաբանի փոխարեն

Մենք շատ ենք ափսոսում, որ չկարողացանք իրազործել այս գրի կարևոր մի գլուխ ևս: Այն է՝ «Գևորգ Բամպուրճյանը ժամանակակիցների հուշերում»: Միայն մի առիթով նրա մերձավոր բարեկամ-գործընկերներից անվանի արվեստարան Կարո Ջյուրընանը իրաշալի պատմություններ իիշեց: Այդամիք, իհարկե շատ ու շատ պիտի լինեին: Առիթը շունեցանք այցելելու նրան մոտ կանգած մարդկանց: Ափսոս, չկարողացանք...

Մաղթում ենք, որ ի վերջո ի մի հավաքվի ու մշակվի հայտնի բանասեր, մատենագետ պատմագրի արխիվը: Հրատարակվեն նրա անտիպ ուսումնասիրությունները, իսկ բուրքերնենները՝ բարգմանվեն ու տպագրվեն Գևորգ Բամպուրճյանին նվիրված հատորներում¹:

Ամենայն Հայոց կարողիկոս Գարեգին Ա-ն (1932-1999) 1997թ. հոկտեմբերի 11-ին Թարգմանչաց տոնի առիվ Հայրապետական կոնդակով Գևորգ Բամպուրճյանին հետմահու շնորհեց «Ս.Մեսրոպ Մաշտոց» շքանշան:

Գևորգ Բամպուրճյանը, հայ մատենագիտության այդ հանրագիտարանը, իր ողջ կյանքը նվիրեց մի մեծ գործի՝ հայ մշակույթի ուսումնասիրության, ճանաչելի դարձնելուն ու արժևորմանը: Նա այդ արեց անշշուկ ու անձայն:

1966թ. սեպտեմբերի 24-ին Պոլսի հայագիր մամուլը գումարեց բարի ու ազնիվ, համեստ ու մերկացան, մատենագիտական մեծ հունձը Ժառանգություն բողած Գևորգ Բամպուրճյանի մահը, որ կնքել էր

1 Երկու տարի առաջ, Պոլսում, մեր մի հանդիպման ժամանակ Գևորգ Բամպուրճյանի բարեկամ, բուրք գիտնական Սարբի Քոզն ասաց, որ մի գիրը է պատրաստում իր ուսուցչի՝ «Հայ Դերվիշի» մասին: Ափսոս, որ 2017թ. մարտին (մահվան 20-րդ տարվա առիվ) այս գիրը դեռևս հրատարակված չէր: Վերջերս Սարբի Քոզնի խնդրանքով այդ գրքի համար գրեցի Գևորգ Բամպուրճյանի մասին իմ խոսքը և փոխանցեցի ինձ ուսարկված Գևորգ Բամպուրճյանի ինքնակենսագրության ձեռագիր օրինակը: Հուսանք, որ շուտով հրատարակվի:

Ա.Հակոբ իիվանդանոցում: Մահազդին հաջորդեցին հայտնի գիտնականի մեծ վաստակին նվիրված հայ ու քուրքական գիտական շրջանակների մի շարք ծավալուն հողվածներ: Ի դեպ, կենդանության օրոր Բամպուրճյանի խնդրանքով լույս չեն տեսել նրան մեծարող հողվածներ:

Գևորգ Բամպուրճյանը հանգչում է Պոլսում, Շիշլիի հայոց մտավորականության պանթեոնի պատրիարքական գերեզմաններին կից, ընտանեկան դամբարանում: Նրա գերեզմանին արձանագրված է՝ «Ասդ հանգչի բանասեր ու պատմաբան Գևորգ Բամպուրճյան որ իր անձին առելի ուրիշներուն ծառայեց»:



ՎԵՐՀԻՇԵԼՈՎ ՀԱՐԳԱՐԺԱՆ ԲԱՐԵԿԱՍԻՄ

Իմ սիրելի եւ յարգելի աշխատակցիս՝ Պատմաբան Գէորգ Բամպուրճեանի հետ ծանօթանալու բախտն ու առիթը ունեցած եմ, երբ 1985 էն սկսեալ իքք քարտուղարուիի կը պաշտօնավարելի Պոլսոյ Պատրիարքարանի մէջ:

Բաղդատմամբ միս աշխատընկերներուն իր հետ ունելի աւելի ջերմ յարաբերութիւն մը, քանի որ ես պատմաբանութեան ճյուղին նոր շրջանաւարտ եղած էի: Իր հետ նոյն երթիկին տակ գտնուիլը ինձի համար անգտանելի գանձ մըն էր:

Նկատելով, որ համալսարանի մէջ ուսանած էի միայն թրքական պատմութիւն, պաշտօնէ ազատ մնացած ժամերուս յաճախ կ'այցելէի իրեն Հայոց պատմութեան վերաբերեալ իմ պակասները լրացնելու եւ հարցումներուս պատասխան ստանալու փափարով: Հոգելոյս Բամպուրճեան միշտ սիրով եւ յարգանօք կ'ընդունէր զիս եւ երբեք չէր զգացներ որ տակախին շատ ճամբայ ունելի քալելու համար: Միշտ կը խրախուսէր զիս որպէսզի առիթ մը ներկայանալու պարագային շարունակէի ուսումն, շրջանաւարտ եղած ճյուղիս մէջ մասնագիտանալու համար: Երբ 2005 թուականին հանգստեան կոչուեցայ արդէն շատոնց մահացած էր Բամպուրճեան: Ու անոր խրախուսական խօսքերը կտակ ընդունելով շարունակեցի ուսումն եւ երբ այս օրերուն մագիստրոսութեան իմ թեզս պաշտպանելու վրայ եմ, անգամ եւս կը խոնարհիմ իր յիշատակին առջեւ երախտագիտական զգացումներով:

Բամպուրճեան իրայատուկ անձնաւորութիւն մըն էր, մանաւանդ ժամանակը խնայելու ուղղութեամբ օրինակ հանդիսացած է ինձի, հակառակ անոր որ իր որդեգրած կեցուածքը քիչ մը իյխտ ըլլալ կը բուէր ինձի: Երբ ամէն անգամ կը հարցնէի իրեն թէ հեռուստացոյցի մէջ այս կամ այն սերիալը կամ ֆիլմը դիտա՞ծ էր, իր պատասխանը միշտ կըլլար «ատանկ քաներու համար ժամանակ չունիմ, անոր տեղ կը նախընտրեմ աշխատիլ» : Բայց այդ հարցի

շուրջ այդքան խիստ ըլլալով հանդերձ շատ անգամ ականատես եղած եմ, թէ իր ամենէն խճողուած պահերուն ան ինչպէ՞ս կը տառապէր, որիշի մը գործը յաջողցնելու համար: Այդ ալ իր անհատականութեան հետաքրքրական այլ մէկ երեսակն էր: Իր փափաքին համածայն Շիշլի Ազգային Գերեզմանատան ընտանեկան դամբարանին վրայ դրուած տապանաքարի արձանագրութիւնը կը ցուցացնէր իր այ երեսակը: «Իր անձեն աւելի որիշներու ծառայեց»: Բան մը որ իրականութիւն մըն է: Իր օժանդակութիւններուն փոխարէն ալ դիմացիններէն կը սպասէր միայն յարգանք, այդ ալ ոչ թէ իր անձին, այլ՝ իր գիտութեան: Իր այցելուները միշտ մեծ յարգանօք կը դիմատրէր, զանոնք կը հիւրասիրէր եւ անոնց կ'օգնէր առանց նկատի ունենալու ազգի, ցեղի կամ կրօնքի կամ այլ տարրերութիւնները:

Իր պատահանատուութեան յանձնուած եւ կամ իր կողմէ որիշի մը աւանդ տրուած գիրքերու նկատմամբ խիստ նախանձախնդրութեամբ կը վարուէր եւ բծախսոյրութեամբ կը քննէր զանոնք անաղարտ պահելու առաջադրութեամբ: Կը յիշեմ պաշտօնավարութեանս շրջանին, խիստ վիճարանութիւն մը ունեցած էր պատմաբանի մը հետ որ գրադարանի գիրքերէն օգտուելու ընթացքին անխղճութեամբ յանդնած էր գիրքերէն էջեր պատռել:

Իր ունեցած երկու երեք յատկութիւնները, որոնք ըստ ինձի պատմաբանի մը համար մեծ զնահատանքի արժանի են, իբր ուղղեցոյց ընտրած եմ իմ այլապումներուս եւ աշխատանքներուս ընթացքին: Անոնցմէ մին է յարատել աշխատանք տանիլ առանց զգուելու միշտ հասնելու համար սկզբնադրիւթներու. իսկ երկրորդ՝ յուրմներու կամ յառաջարաններու մէջ յիշել անպայման անունները բոլոր անոնց, որոնք օգնած են իրեն քանիս քերանոյ եւ կամ իրատարակութիւններու միջոցաւ: Բամպուրճեան ունի երրորդ կարեւոր մասնայատկութիւն մը, որ ըստ ինձի ամենէն կարեւորն է եւ որուն դժուար է հանդիպիլ մանաւանդ մեր ներկայ դարուն. «անոնք պահել գործին ետել եւ չարտօնել որ անցնի գործին առջեւ»:

Երախտազիտական զգացումներով կը վերջացնեմ տողերս ըսելով. «Օրինեալ ըլլայ իր յիշատակը»:

Սիրվարդ Մալսասեան

Պատմաբան եւ նախկին պաշտօնեայ Պոլսոյ Ազգային Պատրիարքարանի



*Ընորհը արք Գալուստյան
Թուրքիո հայոց պատրիարք
(1961–90թթ.)*

ԳԵՎՈՐԳ ԲԱՄԲՈՒԿՅԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԸ

(ԳԻՏԱԾԿԱՆՆԵՐ)

Վերջին տասնամյակների պոլսահայ պատմագրությունը մի շաբթ արժանավոր անուններ է ներկայացնում:

Այս զիտնականները հայտնի են իմանականում արևմտահայ իրականությունում հայկական հետքի և կյանքի տարրեր ոլորտներում հայերի ներդրման ուսումնասիրմանը նվիրված գործունեությամբ: Այն ներկայացվել է իմանականում բուրքերեն, մասնաւոր հայերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով:

Այս հեղինակներն այսօր հայտնի են միջազգային զիտական հանրությանը, իմանականում որպես բուրքական պատմագիտական շրջանակների ներկայացուցիչներ:

Դրանցից առաջինը բառարանագետ, հանրագիտարանագետ, լեզվաբան, պատմաբան, բանասեր, մշակույթաբան, միջազգային ճանաչում ունեցող Բարս Թուղլաճին է (Բարսեղ Թուղլաճյանը, Pars Tuğlaci, 1933-2016):

Բարս Թուղլաճին ծնվել է Պոլսում 1933 թվականին: Նա Կիպրոսի Սելրոնյան վարժարանի սաներից է եղել, իսկ բարձրագույն կրթությունը ստացել է ԱՄՆ-ում, Միջիգանի համալսարանում: Պոլիս վերադարձին նա դասավանդել է հայկական վարժարաններում և բուրքական մի քանի համալսարաններում: Բարս Թուղլաճին իմանականում բուրքագիր գիտնական է, սակայն արևմտահայ իրականության հետ կապված նրա իմանական աշխատությունները հրատարակվել են նաև անգլերեն, մասամբ նաև հայերեն լեզուներով:

Նրա գործունեությունը տարրեր բնագավառներ է ներկայացնում՝ օսմաններեն և նոր գրական բուրքերեն լեզուների բառարանագիտություն, տարրեր ոլորտների տերմինարանություն և լեզվաբանություն¹, գրականություն (վիպակներ, պատմվածքներ), քար-

¹ Ingilizce - Türkçe Sözlüğü; Ingilizce Türkçe Deyimler Sözlüğü; 2002; Okyanus Ansiklopedik Sözlük 6 cilt, 1972; Tip Sözlüğü Ingilizce-Türkçe;

մանուրյուններ (Շերսպիր, Պրոսպեր Սերխին, Գի դը Մոպասան), մշակույթի տարրեր ասպարեզների ուսումնասիրություն (ճարտարապետություն¹, կիրառական արվեստ², գեղանկարչություն³, Օսմանյան կայսրության կյանքում մեծ ներդրում ունեցած պոլսահայ նշանավոր գերդաստանների մասին⁴, քատերագիտություն և այլն), Թուրքիայի⁵, արևմտահայության պատմությանը վերաբերող⁶ հանրագիտարանային գրականություն, ազգագրական երկեր⁷:

Բ. Թուղլաճի գիտա-տերմինարանական բառարանները նկա-

İngilizce - Türkçe Ekonomi ve Hukuk Terimleri Sözlüğü, 2003;

Türkçede Anlamdaş ve Karşıt Kelimeler Sözlüğü 1996; Türkçe-Fransızca Büyük Sözlük International. . Bilimsel ve Teknik Terimler Sözlüğü.

- 1 The Role of The Balian Family in Ottoman Architecture, 1982. Tarih Boyunca Batı Ermenileri 3Cilt -Cilt 1 (287-1850), Cilt 2 (1851-1890)-, Cilt: 3 (1923-1966)3 (1891-1922)-2004, Cilt: 4 (1923-1966). 2009 (Օսմանյան ճարտարապետության արևմտականացման ժամանակաշրջանն ու Պայման գերդաստանը).
- 2 Թուրքական ալիսնդական կիրառական արվեստը, Ստամբուլ, 1985.
- 3 Ավագովսկին Թուրքիայում, Ստամբուլ, 1983. Հովհարան Հովհարանյանի (1730-1801) մասին, 1991:
- 4 Տայյան գերդաստանի մասին, Ստամբուլ, 1993: Գրիգոր Զոհրապի մասին Ստամբուլ, 2008, Թուրքական բանակի հայ սպանների մասին 2010: The Role of The Dadian Family in Ottoman Social, Economic and Political Life 1993; Osmanlı Ordusunda Ermeni Askerler -armenians in the ottoman army: service and destruction - Genocide ...1993 Örnek Bir Osmanlı Vatandaşı Kirkor Zohrab Efendi 2008;
- 5 Բուլղարիան և բուր-բուլղարական հարաբերությունները, 1984; Bulgaristan ve Tür - Bulgar İlişkileri 1984; İstanbul Ermeni kiliseleri - Armenian Churches of İstanbul1991; Osmanlı saray kadınları. The Ottoman palace women 1985; Suna Korad: Türk Operası'nın Sönmeyen Yıldızı2008; Türk Tiyatrosu'nun Sönmeyen Yıldızları2005; Mehterhanc'den Bando'ya: Turkish Bands of Past and Present1986; Osmanlı Şehirleri; Sinan Ottoman Master Architect[Archive] 2006; Ermeni Edebiyatından Seçkiler2012;The Kalfayan Orphanage Bulding 2004.
- 6 Պուլի Իշխանաց կղզիները պատմության ընթացքում, 2 հ.1989., Օսմանյան պալատական կինը, Կինը Թուրքիայում, Ստամբուլ, 1985, Tarih Boyunca İstanbul Adaları 1989; Osmanlı saray kadınları - The Ottoman palace women 1985; The Kalfayan Orphanage Bulding 2004,
- 7 Ալյուտարի, Այրամարի, մասին.

տեսի ներդրում են քուրքական բժշկության, առողջապահության, ֆինանսների, տնտեսագիտության, իրավաբանության զարգացման մեջ: Անզերենի, ֆրանսերենի օգտագործմամբ քուրքերեն բազմաթիվ տպագրություններ ունեցած տարբեր բնույթի իր բառարանների համար նա արժանացել է Մեծ Բրիտանիայի բարձրագույն պարզեցներին և կոչումների, Թուրքիան ներկայացրել է միջազգային բազմաթիվ գիտական նատաշրջաններում: Իհարկե, նրա երկերում, մասնավորապես որոշ գրքերում, հոդվածներում վիճելի շատ հարցեր կան, ինչպես Օսմանյան ճարտարապետության նահապետ Սիմար Սիմանի հայկական ծագման, նրա հույն լինելը անհիմն համարող ուսումնասիրությունը, Խամեր Խնենյուին նվիրված մենագրությունը, Զեմալ փաշայի սպասողի հայ շինելուն, քուրք-քուրդարական հարաբերություններին, թուրք առաջին կին օդաչու Մարիա Գյուկենին, Հրանտ Դինքին նվիրված գործերում¹:

Բ. Թուղարժին հրատարակության է պատրաստել մի շարք կարևոր գործերի թուրքերեն տպագրությունը, քարզմանությունը, ինչպես օրինակ ֆրանսերենով լույս տեսած Գևորգ Արդուլահի «Կարմիր կայսրը» (2002թ.), Այվազովսկու, «Պոլս Եկեղեցիներում եղած Հովհանքան Հովհաննյանի գործերի մասին ալբոմը, «Թուրք քատրոնի անմար կրակները գիրքը» (2005թ.), առաջին շերքեզուի կոմպոզիտոր Նեկեսեր Կյորքեշի, օսմանյան քաղաքների մասին հրատարակությունները: Անկասկած Բարսեղ Թուղարժյանի գիտական ժառանգությունը նկատելի ներդրում է ժամանակակից Թուրքիայի գիտության տարբեր ոլորտների զարգացման և դրանց միջազգայնացման մեջ: Այն իր լուրջ ներդրումն ունի հայագիտության, մասնավորապես արևմտահայության պատմության ուսումնասիրության ասպարեզում: Նա թուրքերենով հրատարակել է «Հայ գրականության ընտրանի», «Օսմանյան քաղաքացի Գրիգոր Զոհրապը» (2008թ.), «Արևմտահայությունը պատմության լնրացքում» (2004թ.) քառահատոր հսկա ժամանակագրություն-մատենագիտությունը,

1 Cemal Paşa'nın Katılı Ermeni Değildi 2008; Sabiha Gökçen Ermeni'yi 2004

բուրքական կիրառական արվեստի հայուի վարպետ Արշալույս Ռեթուզյանի մասին (1985թ.), օսմանյան շրջանի պղծեցի կանաց մասին երկլեզու (թուրքերեն և անգլերեն) գրքերը (1984թ.) և այլն:

*

Պոլսահայ պատմագրության մասին խոսելիս անհնար է շրջանցել ստամբուլահայ ճանաչված ու հեղինակավոր գիտնական, Օսմանյան կայսրության տարածքի գիտության և արվեստների, արհեստների հետազոտող, խորհրդական, կերպարվեստագետ, միջազգային ճանաչման արժանացած, մեր ժամանակակից Կարո Քյուրքմանի (Garo Kürkman) անունը: Ծնվել է 1947թ. Ստամբուլում: 1974թ. ավարտել է Ելլոդի Պետական Ակադեմիայի ճարտարագիտության բաժինը: 1978թ. ճիմելյ Կեօքչիր հետ «Եսափ վէ: Քրետի» դրամատան մեջ բացել է: Օսմանյան շրջանի բոլոր դրամանիշներին նվիրված իր առաջին ցուցահանդեսը, իսկ 1991թ. Օսմանյան կշիռների մասին գրքի առթիվ ցուցահանդես՝ «Թուրք և Խոլան Արվեստների» բանօպարանում: Հրատարակության է պատրաստել Օսմանյան դրամատան Սուլթան Արդուլմեջիղի շրջանի ոսկերիչների արհեստանոցների արձանագրությունների գրքույկները, որոնք հիմնականում հայ ոսկերչապետներին են վերաբերում:

Դրամագիտության (նույնիզմատիկայի) և կերպարվեստի աճուրդների ճանաչված խորհրդական (էքսպերտ) է:

Հեղինակավոր հրատարակչատների կողմից լույս ընծայված գեղարվեստի տարբեր ճյուղերի պատմության, օսմանյան, ապա նաև՝ անատոլիական շափ ու կշոփ գործիքների, օսմանյան արձարե կնիքների և նրա այլ արժեքավոր ուսումնավիրությունները մեծագույն ներդրում են Թուրքիայի մշակութարանության պատմության մեջ¹: Իհարկե, նրա տասնյակից ավելի ծավալուն, նկարա-

1 Անգլերեն և բուրքերեն լեզուներով հրատարակել է՝ 1. Ալանիայի մետադրամները, 1981: 2. Օսմանյան արձարե կնիքները 1996, 2010:3. XIV դ. Էգեականի բեյությունների մետադրամները, 1998: 4. Անատոլիայի շափ ու կշոփ գործիքները, 2003: 5. Հայ նկարիչները

զարդ, իրական գիտնականի հմտությամբ արժեքավոր ու ճաշակա-
վոր հայտնագործություն-ուսումնասիրությունների, հրատարակու-
թյունների (անգլերեն, բուրբերեն լեզուներով) գլուխգործոցը, մեր
կարծիքով «Հայ նկարիչները Օսմանյան կայսրությունում 1600-
1923թ.» երկիատորյակն է¹:

*

Թուսահայ այսօրյա պատմագրության հայտնի ներկայացու-
ցիներից է Արտեմ Յարմանը (Arsen Yarman): Նա իր գիտական
գործունեությունը սկսել է 2001թ. բուրբական առողջապահության
պատմության մեջ իր նմանը շտմեցած շրեղ հրատարակությամբ²:
Այն նվիրված է Օսմանյան առողջապահության պատմության մեջ
հայերի ունեցած դերին և «Սուլթան Փրկիչ» հայկական ազգային հի-
փանդանոցի պատմությանը³:

Հանրագիտարանային արժեքի այս աշխատությունը գրված է
բուրբերեն լեզվով: 865 մեծածավալ էջերից կազմված նկարագրող
մենագրությունը ներկայացվում է 10 գլուխներով:

Աշխատության առաջին էջերում կարդում ենք Ստամբուլի հա-
մալսարանի պրոֆեսոր Մերե Թունջայի և Ֆրանսիացի ճանաչված
ուսուցչաբան, մարդու իրավունքների պաշտպանության հայտնի
դեմքերից Լեռն Շվարցենբերգի գիրքն արժենորող, հայերի ավանդո
խորապես գիտակցող խոսքերը: Լ.Շվարցենբերգի առաջնորդողում

Օսմանյան կայսրությունում 2h.2004' 455 հայ նկարիչների 924 գործերի
մասին՝ 1600-1923թ., 988 էջ: 6. Կալի և կրակի մողական ուժը, 2005:

- 1 Garo Kürkman. Osmanlı İmparatorluğu'nda Ermeni Ressamlar 1600-1923. (İstanbul, Matüsləm Uzmanlık ve Yayıncılık, 2004, 2cilt; 988s.):
- 2 Arsen Yarman. Osmanlı Sağlık Hizmetlerinde Ermenile ve Surp Pırgıç Hastanesi Tarihi (İst., 2001. Yayınlayan Surp Pırgıç Ermeni Hastanesi Vakfı, 865s.). Այնչ այս աշխատությունը նախորդ հեղինակը՝ Բարսեղ Թուլլաճյանը բազմաթիվ ու բազմատեսակ, բազմալեզու թշկական բառարաններ է հրատարակել:
- 3 Հասմիկ Ստեփանյան, Հայերը Թուրքիայում և հայ-բուրբական
մշակութային վերաբերումներ, Պատմա-Բանահրական Հանդես.
ՀՀ ԳԱԱ, Եր., 2005, 2 (169), էջ 316-318: (Տպագրվել է նաև ուսանելու
«Медианиформ» ամսագրում, 2006թ. N.3, էջ 26-27)

անդրադարձ կա նաև մեր ժողովրդի տառապանքի, սակայն կանգուն մնալու ոգու ուժին:

Իր տեսակի մեջ եզակի այս աշխատության հեղինակ Արսեն Յարմանը պղղահայ համայնքի երևելիներից է սերում: Ծնվել է 1949թ.: Սովորել է Կ.Պոլսի Մխիթարյան միաբանների վարժարանում, ապա ուսումը շարունակել Խտալիայում: Տիրապետում է մի քանի օտար լեզուների: Այն, որ հետազոտողը հայազգի է, մեծապես շահեկան դեր է ունեցել ուսումնասիրությունը հնարավորինս լիարժեք ներկայացնելու առումով, քանի որ Օսմանյան կայսրությունում մշակույթի, գիտությունների, արհեստների և որոշ այլ բնագավառների զարգացման պատմությունն անխօնիորեն կապված է հիմնականում արևմտահայ համայնքի գործունեության հետ: Հիմնականում հայկական աղքյուրներում են ամբարված (հայերեն և հայատառ բուրքերեն գրական ժառանգության մեջ, փաստաթղթերում, պարբերական մամուլում և այլուր) Օսմանյան կայսրության կյանքի ամենատարբեր կողմերի ուսումնասիրության վրա լույս սփռող նյութերը, սկզբնաղյուրները: Բազմաթիվ հեղինակներ, որոնք ծեռնարկել են Օսմանյան կայսրության կյանքի այս կամ այն ասպարեզի ուսումնասիրությունն առանց օգտագործելու հայկական նյութը՝ ի վիճակի չեն եղել այն լիարժեք ներկայացնելու և ստիպված են եղել բավարարվել միայն դրա ուրվագծումով:

Այս աշխատանքը մեծապես շահեկան է նաև ուսումնասիրված հարուստ աղքյուրների, օգտագործված արխիվային նյութերի առումով: Ներկայացված են շափազանց մեծ հետաքրքրություն ներկայացնող օսմաններեն եզակի փաստաթղթեր, սուլթանական իրամանագրեր՝ թերաքներ, ֆերմաններ, հայերեն, ֆրանսերեն, հայատառ բուրքերեն նյութեր: Փաստաթղթերի մի մասը, որ առաջին անգամ են գիտական շրջանառության մեջ դրվում, այսուհետ ևս արժեքավոր աղքյուր կարող են հանդիսանալ կայսրության տարբեր բնագավառների ուսումնասիրողների համար:

Առատորեն ներկայացված են Արևմտյան Հայաստանի բոլոր

գավառների հայաբնակ բնակավայրերը ներկայացնող նկարներ՝ վանքեր, պատմական հուշարձաններ, կալվածազրեր, հաշվեցուցակներ, այդ վայրերում գործած առողջապահական հիմնարկների, շենքների արտաքին ու ներքին, բժշկական առումով կահավորնան, աշխատակիցների բժշկական առօրյային վերաբերող բազմաթիվ նկարներ: Բնականաբար շատ են հայկական դեղարանների, բժիշկների, այցետումների, մամուլում նրանց գովազդների, հայտարարությունների հայերեն, օսմաներեն, հայտառ բուրքերն, ֆրանսերեն օրինակները: Այս ամենը, հիրավի, մեծ տպագրություն է գործում:

Գրքի վերնագիրը գուսապ է՝ ընդգծելով ընդամենը հայերի ունեցած դերը օսմանյան առողջապահության բնագավառում՝ շեշտելով մինչ Օսմանյան կայսրության հայ բժշկության պատմությունը ներկայացնող նյութերը, հայ բժշկության ունեցած ավանդույթները: Հիացմունք է պատճառում գրքում ծայրաստիճան ճաշկով ու տեղին ներկայացված կառավարական, համայնքի ու անձնական հավաքածուների, վիմագիր արձանագրությունների, սկզբնադրյութների փաստաթրային կամ կիրառական առարկաների, մանրանկարների ու նկարների, ճարտարապետական կառույցների արտադին ու ներքին տեսքի, հայաշատ քաղաքների, քանգարանային, հնագիտական բրածո իրերի, դրամների, ծեռագիր մատյանների, զարդերի, շրանշանների, կիրառական շատ առարկաների, ինչպես նաև առողջապահության հետ մոտավոր կամ հեռավոր առնչություն ունեցող իրերի, սարքերի, գծանկարների, փորագրանկարների ու լուսանկարների, գրքերի, ատլասների և շատ ու շատ տարրեր, բազմալեզու նյութերի բազմությունը: Ազդեցիկ թիվ են կազմում օսմաներեն նյութերը, որոնցից շատերն այս ուսումնասիրության էջերում առաջին անգամ են լույս աշխարհ գալիս:

Գրքի երկրորդ նապատակի՝ Կ.Պոլսի Ս.Փրկիչ ազգային հիվանդանոցի մասին պատմող գլուխը սկսվում է 447 էջից միայն: Այն ոչ միայն հայերին ու Թուրքիայի այլ ազգերին ծառայող հիվանդա-

նոցի պատմությունն է, ներկան, այլև ապագան պայմանավորող ծրագրերն ու պարագաները: Մեծ արժեք են ներկայացնում տարբեր ցուցակները, բժշկական միությունների ու հայ դեղագործների, բուսաբանների մասին գլուխը, բժշկական մամուլն ու մասնագիտական գրականությունը, տարբեր ասպարեզների բժիշկների ցանկերը՝ նրանց մասին տեղեկություններով, նկարներով հանդերձ: Հեղինակը հետևել է անզամ նրանց ճակատագրին՝ լիարժեք ներկայացնելու համար Օսմանյան կայսրությունում ապրած ու գործած իր գրքի հերոսներին:

Այս գրքում ի մի են բերված եվրոպական տարբեր երկրներում ուսանած, կարևորագույն գիտական կենտրոններում հայտնագործությունների հեղինակներ դարձած, ապա՝ Թուրքիայում գործունեություն ծավալած հայ բժիշկների, նրանց տարբեր երկրներում ունեցած բարձրագույն պարգևների ու գիտական աստիճանների արժանացած լինելու, նաև այլ ասպարեզներում ծավալած գործունեության մասին տեղեկությունները: Գիրքը հարուստ է հայ բժիշկներին վերաբերող տարբեր մանրամասն ցուցակներով, նկարներով՝ սկսած Բալկանյան, Առաջին համաշխարհային պատերազմներում մասնակիցների, բժշկության տարբեր բնագավառները ներկայացնողներից մինչև օտար երկրներում քուրքական կառավարության դիվանագիտական ներկայացուցություններում, հյուպատոսություններում, քուրքական բանակում ծառայած հայազգի բժիշկների ներկայացմամբ:

Գիրքը եզրափակում են Օսմանյան կայսրության առողջապահության ասպարեզում մեծ ավանդ ունեցած հայ բժիշկների կենսագրությունները, օգտագործված աղբյուրների, տեղանունների ու անձնանունների հարուստ ցանկերը, որոնք այնչափ կարևոր են օսմանյան երկրի այդ բնագավառի պատմությամբ հետաքրքրվողների համար:

Այս ուսումնասիրությունը լիովին արդարացրել է հեղինակի առջև դրված կարևորագույն խնդիրներից հիմնականը՝ ներկա-

յացնել առողջապահության պատմությունն Օսմանյան իրականությունում:

Ավելին՝ առաջին անգամ բուրքերեն լեզվով գիտական գրականության մեջ նման ծավալով ներկայացվել է հայ ժողովրդի պատմությունն իր սկզբնավորման շրջանից ի վեր, արևմտահայության պատմությունը, պոլսահայ համայնքի պատմությունը, արևմտահայերի դերն ու ավանդն այդ երկրի կյանքի ամենատարբեր քնազավառներում, նրանց ունեցած նպաստը: Անդրադարձ կա պոլսահայ հարուստ սերտոցի՝ ամիրաների, պատրիարքական արորի, մտավորականների, առանձին անհատների, ինչպես նաև բժշկության պատմության հայ երախտավորների գործունեությանը՝ կենսագրականներով, տոհմածառերով, նրանց գեղանկարներով կամ լուսանկարներով հանդերձ:

Հիրավի, արժեքավոր մի աշխատանք, որի հեղինակը՝ Մխիթարյան հայրերի անսպառ աշխատասիրությունը որդեգրած մտավորական այս ժառանգը, մեծ գործ է կատարել: Այն հավասարապես նշանակալի ավանդ ու հետաքրքրություն է ներկայացնում ինչպես Օսմանյան իրականությունում բժշկության, առողջապահության պատմության, այնպես էլ ընդհանրապես բժշկության պատմության Մերձավոր արևելյան թիվ ուսումնասիրության, արևելագիտության համար:

2012թ. հրատարակվեց «Սուրբ Փրկիչ» հայկական ազգային հիվանդանոցի 1900-1910թթ. լույս տեսած տարեգրերի փոքրածավալ 10 հատորյակը և նույնի խտասալիկը: 2014թ. «Թարիի վարժը» հրատարակչության կողմից լույս տեսավ հայկական բժշկական ընկերության մասին աշխատությունը, որն ընդգրկում է 1912-1922թթ.:¹ Գիրքն արժևորող առաջարանը գրել է Մյունիսենի «Լյուդվիգ Մաքսիմիլիան» համալսարանի պրոֆեսոր, պատմաբան Քրիստոֆ Նոյմանը:

¹ Arsen Yarman, «Ermeni Etibba Cemiyeti» 1912-1922. Osmanlıda Tiptan Siyasete bir Kurum. İst. 2014, 464s.:

Սևան երախտագիտությամբ ենք օգտվել այս սրանչելի գորից:

Արսեն Յարմանի հետագա գործունեությունը պատմաբանի և հրատարակչի ներդրում է քուրքազիտության և մեր ժողովրդի պատմությունը քուրքախոս շրջանակներին ծանոթացնելու գործում:

Այսօր Թուրքիայում շատ են կարևորվում Արևմտյան Հայաստանի առանձին նահանգների մասին աշխատությունները։ Ակնհայտ է, որ հայկական աղյուրների, նախկին և այսօրյա հայ հեղինակների ուսումնասիրությունների՝ քուրքերն քարգմանված հրատարակությունները չափազանց կարևոր են պատմական արդարությունը խեղաքյուրվելու վտանգից պահպանելուն, կանոնավոր դարձած նման գայքակղության հնարավորություններից գերծ մնալու համար։

2008թ. «Birzamanlar» ստամբուլյան հրատարակչության լույս ընծայած «Սվագ 1877» 560 էջից քաղկացած քուրքերն հատորը հրատարակության եր պատրաստել, ծանոթագրել և լուսանկարներով հարստացրել Արսեն Յարմանը։ Թարգմանչուին՝ Միրվարդ Մալխասյանն է։

Սվագի, նաև՝ Թոքատի, Ամասիայի, Մարզվանի մասին պատմող այս հատորը հրատարակիչ Արսեն Յարմանը նախարարել է ներկայացնել ծնունդով վանեցի քանասեր, մշակութային գործիշ Պողոս Նարքանյանի (1856-1886)՝ Պողոս տպագրված մի քանի երկերի թարգմանությամբ, որոնք Արևմտյան Հայաստանում վերջինիս շրջագայությունների տպագրություններն են և XIXդ. դարի արևմտահայ գավառի տնտեսական, քաղաքական կյանքի մասին հարուստ նյութ են պարունակում¹։ Գրքում գետեղված մի քանի լուսանկարներ պատկերում են կաքողիկ եկեղեցու կողմից ամենասիրված սրբերից մեկի՝ ծագումով սվազի, հայ, հայկական աղյուրներում հիշատակվող ս.Վշասի (ծնվ.՝ 280թ.-նահատակված՝ 316թ.)

1 Այդերկերն են՝ «Տեղեկագրութիւն ընդիհանուր վիճակին Գաղատիոյ» (1873), «Տեղեկագիր ընդիհանուր վիճակին Սերբասիոյ և ամոր կոսակալութեան ներքեւ գտնուղ մեկ քանի զիսատը քաղաքաց» (1877): Այս հատորի երկրորդ մասում տեղ են գտնել հատկածներ Գարեգին Մրգանձայանի (1840-1892) «Թորոս աղքար»-ի Ա մասից (1879), և հավելվածը:

գերեզմանաքարը՝ դեղատունսերի արարերեն արծանազրություններով համերձ: Նշենք, որ այս սրբի անունով աշխարհում շուրջ 2000 եկեղեցի, զանգակատուն և այլ հուշարձաններ կան: Նա համարվում է Եվրոպական մի շարք վայրերի, քաղաքների հովանավոր (օր. Դուռը վճիկի): Ապշեցուցիչ է, որ այսօն հարյուրամյակներ անց այսօր Արևեն Յարմանը գտնել է նրա գերեզմանը՝ Ավագի Բուրուջին Սեղեսեի մուտքի աջ կողմում՝ մուտքմանական երկու գերեզմանաքարերի միջև:

Արևեն Յարմանի նման որակի երկրորդ կարևոր հրատարակություններից է¹ «ԲԱԼՈՒ-ԽԱՐԲԵՐԾ 1878. Զարսանջակ, Շեմիշգեղեկ, Ճապաղջոր, Երզնկա, Խիզում և շրջակայք», 2 հատոր, Ստամբուլի «Derlem» հրատ., 2010, հ. I՝ 494 էջ, հ. 2՝ 563 էջ:

Այն «Ավագ 1877»-ի տրամաբանական շարունակությունն է հանդիսանում:

Կան հեղինակներ և ուսումնասիրություններ, առանձին հրատարակություններ, որոնց կարևորությունը դուրս է գալիս սուկ արժեքավոր լինելու գիտական շրջանակներից, մանավանդ, եթե ուղղված են այլակազմ ընթերցող շրջանակներին և ծանոթացնում են մեր երկրին, նրա պատմությանը, վերհանում մինչ օրս անհայտ վավերագրեր, քարգմանաքարը ներկայացնում հույժ կարևորության ուսումնասիրություններ: Մի կողմից, ծանոթացվում և կարևորվում են հայ հեղինակների ու հայկական աղբյուրների եզրակիցությունն ու հավաստիությունը, մյուս կողմից, կից տրվում է հայագիտական այնպիսի մատենագիտություն, որը մրցակցություն չի հանդուրժում: Ավելին, եթե այս ամենը կարող է նաև վերահաստատել պատմական արդարությունը՝ կամիսելով տվյալ ասպարեզին, նյութին սպառնացող մոռաց-

¹ Հասմիկ Ստեփանյան, Արևեն Յարմանի նոր հրատարակությունը՝ Բալու-Խարբերդ, BALU-HARPUT 1878. Çarsancak, Çemişgezek, Çapakçur, Erzincan, Hizan ve Civar Bölgeler-Raporlar. İstanbul, “Derlem” yayınları, 2010, c I-494s., c II-563s. «ԼՐԱԲԵՐ Հասարակական գիտությունների», Երևան, 2011, ՀՀ ԳԱԱ հրատ., 2011, հ.3, էջ 298-301: Նաև՝ «Անկախ» շաբարաքերը, Երևան, 2010, հոկտ. 28-նոյեմբերի 4, հ. 38(62), էջ 4:

ման, խեղաքյուրման որոգայթները, ապա «առաքելորյուն» որակավորումը չի կարող ներկայանալ որպես ծերծերուն մի քառ: Եթե դրանց հավելենք նաև լուսանկարչական հարուստ ու եզակի նյութը, ֆարսիմիլեները, ապա բուրքերն այս հրատարակությունն այնքան լիարժեք կդառնա, որ, մեր կարծիքով, երկար ժամանակ որևէ բուրք զիտնական չի ձեռնարկի այս նույն նահանգների մասին նոր ուսումնասիրություն կատարելու աշխատանքներին, ներկայացնելու համար բուրքացված մի նյութ, որ հայկական էլեմենտը նվազագույնի է հասցված, կամ իսպառ բացակայում է:

Ա հատորը հեղինակել է Արսեն Յարմանը: Այն իրենից ներկայացնում է XIX դ. Օսմանյան կայսրության համառոտ պատմությունը և արևմտահայության վիճակի նկարագրությունը, անդրադառնում է 1877-78թթ. ուսու- բուրքական պատերազմին, որի ժամանակ էլ Պոլսի Հայոց Պատրիարքարանի կողմից Անատոլիայի հայկական գավառներն ուղարկվեցին գրքում ներկայացված տեղեկագրերի հեղինակ հոգևոր երեք հայրերը:

Ա հատորի առաջաբանի հեղինակ, Նյու-Յորքի Պետական համալսարանի Բինգհամթոնի մասնաճյուղի պրոֆեսոր, պատմաբան **Դոնալդ Քարերդը** (Donald Quataert) գիրքը համարում է տարբեր կրոնների պատկանող բազմազգ ու բազմալեզու ժողովուրդների կյանքը պատկերող հրաշալի մի ուսումնասիրություն, որը, լրացված լինելով լուսանկարչական հարուստ նյութով՝ իր ընթերցողներին հնարավորություն է ընձեռում ծանորանալու Օսմանյան կայսրության պատմությանը:

Բ հատորի առաջին գործը Վահան վրդ. Պարտիզակցու «Խօսք Զհայրենեաց»-ն է (1870թ., 56 էջ): Երկրորդը՝ Պողոս Ծ.Վ. Նարանյանի «Արտօսր Հայաստանի կամ Տեղեկագիր Բալուայ, Քարերդու, Զարսանճագի, ճապաղ ջուրի, և Երզնկայու, Յառուելուած ըստ խնճրանաց ազգասիրաց Խիզան գաւառ» երկն է (Կ.Պոլիս, 1878, 167 էջ): Երրորդը՝ Գարեգին վրդ. Սրբանձտյանի «Թորոս արքար, Հայաստանի ճամբորդ»-ն է (1879, 1884):

Թարգմանիչներն են՝ **Սիրվարդ Մալսասյանը¹** և Արտեն Յարմանը: Վերջինն զիրքը հրատարակության է պատրաստել և հայթայթել լուսանկարները:

Երկհատորյակը հարստացնող ու նրան առանձնակի հմայք հաղորդող, արժենորոշ լուսանկարչական նյութը բացառիկ է իր նորահայտությամբ, բազմազանությամբ: Դրանք օսմաներն ի հագուստության առարկա վայրերի, հուշարձանների (այսօր չպահպանված) պատկերներ, արձանագրություններ, բազմազգ բնակիչների, նրանց տարազների ու զբաղումների, տարբեր ծխակատարությունների, (նաև քաղման, հարսանիքի), տոնների (աշխատանքի, շուկայի), դպրոցների, առանձին երևելիների ու նրանց զարմանալի տների նկարներ: Չափազանց արժեքավոր են հատկապես տարբեր վայրերի ազգային տարազների, առանձին արհեստների, կիրառական և արվեստի առարկաների նկարները, հայ վարպետների կնիքները և այլն:

2010թ. Պոլսի Ս.Փրկիչ Ազգային հիմնադրանոցի կողմից հրատարակվել է արևմտահայ մշակույթում բացառիկ կարևորություն ներկայացնող մի ոլորտի մասին՝ «Օսմանյան դասական երաժշտությունը և հայերը», «Հայ ստեղծագործողներն Օսմանյան դասական երաժշտության մեջ» բուրքերեն երկիատորյակը, որի հրատարակիչը ևս Արտեն Յարմանն է: Հեղինակներն են՝ **Արամ Քերովյանը, Արուղ Յըլմազը և Էմինե Բորան:** Արտեն Յարմանը հեղինակել է նաև վերջերս հրատարակված հայկական արծարագործությանն ու ոսկերչությանը նվիրված մի ուսումնասիրություն (որին ծանոթ չենք):

2012թ. Արտեն Յարմանը հրատարակել է “Ermeni Yazılı Kültürü” գիրքը, նվիրված հայ գրավոր մշակույթին, տպագրությանը, Օսմանյան կայսրությունում ունեցած նրա դերին (365) էջ:

2013թ. հրատարակել է **Արա Ալինյանի** գիրքը, նվիրված Սուլթան

¹ Մենք երախտապարտ ենք բուրքերենի հմտությունի Սիրվարդ Մալսասյանին, «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» գրքի բուրքերեն բարգմանության համար:

Մահմուդ Բ.-ի և Գագազ Արքին Ամիրայի բարեկամությանը՝ (Arsen Yarman, Ara Aginyan -Sultan II. Mahmud ve Kazaz Artin Amira) իր առաջարանով:

Արսեն Յարմանը հրատարակության է պատրաստել նաև Թոքարին նվիրված քառահատոր թուրքերեն մի ուսումնասիրություն, որը շուտով լույս կտեսնի: Նա հրատարակի իր առաքելությանը միացրել է նաև «Պոլսի «Սուլթ Փրկիչ» ազգային հայկական հիվանդանոցի հայտնի ամսագրի պատասխանատուի պաշտոնը, որ երկեզրու դարձրած ամսագիրը նաև թուրքալեզու Ընթերցողների բանակ է ներառում: Այն ծանոթացնում է ոչ միայն Հիվանդանոցի ներկային, նրա գիտատեխնիկական ներուժին, այլև հայ բժշկության պատմության անցած էջերին:

Մի քանի տարի առաջ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում իր թեկնածուական ատենախոսությունը փայլուն պաշտպանեց պոլսահայ մտավորականության միջին սերնդի ներկայացուցիչ, Գալֆայան որքանոցի երկարամյա տնօրենուհի, այսօր՝ Էսայան Վարժարանում իր մանկավարժական առաքելությունը շարունակող Արմավենի Միրօղու Մուհեթարյանը¹: 2016թ. նրա հրատարակած «Պոլսահայերը (1923-1939թ.)» գիրքը մինչ այժմ թիվ ուսումնասիրված, սակայն իր արժեքով կարևորագույն խնդիր ներկայացնող ուսումնասիրություն է:

«Պոլսահայերը (1923-1939)» գրքի նպատակն է ծանոթացնել 1923-1939 թվականների Պոլսի հայ համայնքի կացությանը Հանրապետական Թուրքիայում, ինչպես նաև թեմալական Թուրքիայի ազգայնական պետության կատարած հեղաշրջումները, ազգային փորբամասնութիւնների, այդ թվում՝ պոլսահայ համայնքի նկատմամբ վարած քաղաքականությունը և այս քաղաքականության հետևանքով համայնքի ապրած մեծ փոփոխությունները:

1 Սենք Արմավենի Միրօղու Մուհեթարյանին ենք պարտական մեր «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» ուսումնասիրության թուրքերեն հրատարակության (2014թ.) խմբագրման դժվարին գործը:

Հեղինակն այս աշխատությամբ ջամում է լուսաբանել Թուրքիայի Հանրապետության օրենսդրական քաղաքականությունը և այդ օրենքների հետևողական գործադրման հետևանքով պղսահայության մի ստվար հատվածի հեռացումը երկրից, Թուրքիայում մնացողների վիճակը, ինչպես նաև այն մեծագույն ջանքերը՝ ամեն գնով պահպանելու համար հայերեն լեզուն, հոգևոր կյանքը, մշակույթը ու բարեսիրական հաստատությունների գործունեությունը: Ավելին՝ հակառակ գործադրվող բոլոր ջանքերին նկատելի է կրթական, մշակութային և տնտեսական կյանքի անկումը:

Որպես մեկը կարևորագույն խնդիրներից, ներկայացվում է «Վագրֆների օրենք»-ը, իրեն հիմնական գործոն ազգային հաստատությունների, հայկական վագրֆների (անշարժ ունեցվածքի) ու ազգապատկան կալվածքների վիճակի ու դրանց պահպանան հարցի:

Վերլուծվում է համայնքային հաստատությունների նշանակությունը հայ մքնոլորտում: Ներկայացվում են ավանդական ու բարեսիրական հիմնարկները՝ Ազգային խնամատարությունը, Ս. Փրկիչ Ազգային Հիվանդանոցը, որբանոցները, եկեղեցիներն ու գերեզմանատները, ինչպես նաև վերջիններիս մատակարարման միջոցները:

Հեղինակը քննարկում է խնդրո առարկա ժամանակաշրջանի պղսահայ կրթական կյանքն ու նրա նշանակությունը հետագա տասնամյակների հայ մքնոլորտի համար:

Կարևոր հանգամանքներից է նկատվում պղսահայ մշակութային ընկերությունների գործունեության շրջանակները, ինչպես նաև մշակութային կյանք՝ գրականության, գրատպության, մամուլի, թատրոնի, երաժշտության, ճարտարապետության նշանակությունը ազգապահպանման գործում:

Գալով պղսահայության տնտեսական կյանքի ներկայացմանը, վեր է հանդում հայոց «Լրյալ գույքեր»-ի կնճռոտ քննութեալը: Որպես «Լրյալ գույք» լուսաբանվում են Սահմանադրության խանի ու Բանկալրի հայոց գերեզմանատան օրինակները:



Կարեգին Բ արք. Գևորգյան
Թուրքին հայոց պատրիարք
(1990-98թ.)



Մեսրոպ Բ արք. Մուրաֆյան
Թուրքին հայոց պատրիարք
(1998-2012թ.)

ԱՐՏԱՎԱՀՄԱՆՈՒՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ՊՈԼՍԱՀԱՅԵՐ

Փարիզաքնակ Օննիկ Ժամկոչյանը (1955 թ.) ծնունդով պոլսեցի է: Տնտեսական և սոցիալական պատմության ֆրանսագիր մասնագետ է:

1988թ. Սորբոնի համալսարանում պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Օսմանյան կայսրության ֆինանսները և Կոստանդնուպոլսի ֆինանսախումբը 1730-1853թթ.» թեմայով¹:

Նրա 2013թ. հրատարակված «Սուլթանների սեղանավորները. հրեաներ, ֆրանսիացիներ, հույներ և հայեր²» ուսումնասիրությունը կայսրության կրոնական փոքրամասնությունների՝ հրեաների, հոյների, ֆրանսիացիների, հայերի բանկային ինստիտուտի, կայսրության կյանքում նրանց ունեցած բացառիկ դերի մասին է: Այս թեմային են նվիրված հեղինակի մի քանի հոդվածները ևս:

2015թ. տպագրված «Բարեկիուսումների ժամանակը. Մահմուդ Բ, Թանգինար, Կոնստանդնուպոլիսը 1780-1860թթ.» գիրքը³, որն առաջինի տրամաբանական շարունակությունն է, արևմտահայության զարգության շրջանին վերաբերող հրատարակությունն է: Այն որպան որ արևմտահայոց, շատ ավելին՝ Օսմանյան կայսրության պատմության ուսումնասիրության համար նորանոր վերագիտականությունների մղող հետազոտությունն է:

2017թ. հրատարակել է հայ ֆրամասոններին, 1863թ. «Ազգային

1 Les Finances de l'Empire ottoman et les Financiers de Constantinople, 1730-1853, Thèse de Doctorat, Université de Paris I, Panthéon-Sorbonne, 1988. (Diplôme d'Habilitation à Diriger des Recherches en Histoire (H.D.R. en Histoire) à l'Ecole des Hautes Etudes en Sciences Sociales (EHESS).

2 Jamgocyan (Onnik)« Les Banquiers des Sultans, Juifs, Francs, Grecs et Arméniens de la haute finance, Constantinople, 1730-1853, Les Editions du Bosphore, Paris, 2013 (328 p.)

3 Jamgocyan (Onnik), Le Temps des Réformes, «L'Arménie ottomane», Mahmoud II, le Tanzimat, Constantinople, 1780-1860 ; Les Editions du Bosphore, Paris 2015. (305 p.)

Սահմանադրութիւն Հայոց»¹-ին նվիրված մի ուսումնասիրություն: Քավարար չուսումնասիրված մի նյութ, որը միաժամանակ Օսմանյան սահմանադրության ուսումնասիրության կարևորագույն հանգրվաններից է:

Բոլոր այս գրքերը Օսմանյան կայսրության համար շափազանց կարևոր մի ժամանակաշրջանի ուսումնասիրությանն են նվիրված: Դրանց տարբեր լեզուներով, մասնավորապես բուրքերենով և հայերենով հրատարակությունները կարևոր ներդրում են օսմանագիտության և արևմտահայության պատմության ուսումնասիրության ասպարեզում:

Առյ. Առաքելյանը, ծնունդով պոլսեցի (ծն. 1968թ.) մասնագիտությամբ փաստաբան է: Իրավաբանության դրկտորի իր թեզը պաշտպանել է Փարիզի «René Descartes» համալսարանում: Ավելի քան 35 տարի ապրում է Փարիզում: Նրա «Էղիրնեն (Աղրիանուպիլս) և հայ համայնքը» երկեզու (ֆրանսերեն և բուրքերեն) գիրքը լույս է ընծայել Ստամբուլի «Փարոս» հրատարակչությունը: Թուրքերենի բարգմանիչն է Թոմաս Թերգիյանը: Առաջարանի հեղինակն է օսմանյան շրջանի բուրք պատմաբան **Նեջեր Սակաօղլուն**:

Այս գիրքը գրելիս հեղինակը ներկայացնելով հանդերձ իր ընտանիքի պատմությունը, մտահոգված է եղել պատմության և սոցիոլոգիայի տեսանկյունից ուսումնասիրել հոռոմեական ժամանակներից սկիզբ առած, Բյուզանդական կայսրությունում հզորացած և այնուհետև 1915 թ. ոչնչացած Էղիրնենի հայկական գոյությունը:

Գրքի բովանդակության կարևոր մաս են կազմում Աղրիանապոլսի մասին պատմական ակնարկը և հայերի ներկայության սկիզբը, ապա՝ Օսմանյան կայսրության շրջանում քաղաքի մասին հնարա-

1 Jamgocyan (Onnik), “Les Francs-Maçons Arméniens, la Constitution Nationale de l’Arménie ottomane, Constantinople 1863”, Les Editions du Bosphore, Paris Mai 2017. (279 p.)

2 Roy Arakelian - Andrinople (Edirne) et sa Communauté Arménienne. (Edirne (Adrianopolis) ve Ermeni Toplumu). Paros, İstanbul 2016, 255 p.

վոր տեղեկությունները, նկարագրություններ, լուսանկարներ: Հայ Աղքիանապոլիսը ներկայացվում է կյանքի տարբեր կողմերով հանդերձ և ավարտվում հայ համայնքի առաջատար գործիչների մասին տեղեկություններով, ընտանեկան հիշողություններով:

Եղիբնեի մասին այս ուսումնասիրությունը չափազանց կարևոր է Արևմտահայաստանը ներկայացնող գրքերի շարքում: Այն հայաշատ կենտրոնների պատմությունը ներկայացնելով՝ պատմության մի շարք ճերմակ էջեր է լրացնում՝ բույլ շտալով դրանց խեղաթյուրումն ու ամեն մի հայկականի քուրքացման քաղաքականության զոհ դառնալը: Իհարկե այս գրքի հայերենը իր պատվագոր տեղը կունենար 1960-ականներից հետո սիյուռքահայ հայրենակցական հրատարակությունների շարքում:

2016թ. Ստամբուլի «Փարոս» հրատարակչությունը լուս է ընծայել ամերիկաբնակ Գևորգ Բ.Հակոբյանի (ծն. 1947թ.) տարիների ուսումնասիրության արդյունքը՝ մեծածավալ «Պատմութիւն խրանպուլահայ ուսումնական կեանքի եւ կրթական հաստատութիւններու» գիրքը¹: Սա նշանակալի ներդրում է արևմտահայ դպրոցի և մանկավարժության պատմության ուսումնասիրության մեջ:

Նախարանը գրել է անվանի մտավորական, գրող, խմբագիր Ռոբեր Հատուեճյանը:

Գիրքը ներկայացնում է Պոլսում մինչև մեր օրերը գործած եւ գործող ազգային ու անհատական շուրջ 170 ամենօրյա հայկական վարժարանների պատմությունը:

Ուսումնասիրությունն արժնորվում է Պոլսի վարժարանների ցուցակով, պատրիարքների, տնօրենների, ուսուցիչների, հեղինակների, ազգային-վարչական մարմինների մասին տեղեկություններով, ինչպես նաև բազմաթիվ լուսանկարներով:

*

¹ Գևորգ Պ. Յակոբյան, Պատմութիւն խրանպուլահայ ուսումնական կեանքի եւ կրթական հաստատութիւններու, Խարանպուլ, Փարոս, 2016, 800 էջ.

Ծագումով արարկիրցի **Մուրադ Պետիրօղուն** (1943-2017 մուլտ) 2003թ. քուրքերնով հրատարակել է «Թանգիմարքն մինչև Բ Սահմանադրութիւն» Հայոց կանոնակարգը» աշխատությունը: 2008թ. տպագրել է «Օսմանեան իշխանութեան ոչ իսլամներու կանոնակարգը» գիրքը: Նա սահմանադրությունների և Օսմանյան կայսրության, Լռօանի դաշնագրի մասնագետ էր համարվում¹:

Որոշ հեղինակներ յուրաքանչյուր երախտավոր անձի 1-2 տող հատկացնելով փորձում են տպագործություն ստեղծել, սակայն որպես կանոն, սրանք բազմից կրկնված փաստեր են, նոյնիսկ քուրքերն գրականության մեջ: Այսպես որ նախընտրել ենք զանց առնել այսպիսի նյութերն ու նրանց հեղինակների գործերը:

*

